

Pumpkin

432



5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



	1	Գրազէտ հիւրը եւ գրական լուրեր
ՎԱՐԳԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ	3	Մօր տունը
ՏԻՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ	7	«Մեհաւոր ընկուզեմի՞ն»
ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ	12	Աղբիւրեան յուշաթուղթ
» » »	16	Մէկ հնձ մեմբ...
» » »	18	Մեզի՛ հայ կ'ըսեն...
» » »	19	Փափաք հայկական
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	22	Արեան կամչ
ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ	27	Դիցայուշ տեմդեր
ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ	29	Սահակ Պարգեւեան
ՓԱՆՈՍ ԶԵՐԱՆԵԱՆ	40	Վերադարձ
ՍԵՐԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ	41	Իրապաշտութեմէն անդին՝ «Նոր-իրապաշտութիւն»ը հայրենի նկարչութեան մէջ
ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ	51	Պարոյր Հայկազնը իր ժամանակակիցների ոլորտում
ԿՈՐԻՒՆ ՇԱՀԻՆԵԱՆ	56	Լի Սթրազպերկ եւ «Հերառաններու քթւորում»
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ	60	«Ահագնաց»ին քննադրամեթոդ՝ սեպագնդէն անդին
ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ	71	Լճակ
ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ	75	«Համալսարանի արեւմտահայ գրականութեան»
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԷՐԵԱՆ	78	«Անգլիական ազդեցութիւնը արեւմտահայ գրականութեան վրայ 19րդ դարում»
	80	Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՒՆ. ՅԵՐԻ. ԽԻՒՆ ՄԱՍԻՍ 1982 ԳԷՏԵՐԻՐ



ԳՐԱԳԵՏ ՀԻՒՐԸ

ԵՒ

ԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վ. ԳՈՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

«Շիրակ» ամսագրի հրաժրին ընդառաջելով, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ, արձակագիր եւ հրապարակագիր Վարդգէս Պետրոսեան Պէյրութ ժամանեց, Զորեշխարհի՝ 31 Մարտ 1982ին, հիւրընկալ ամսագրին հրատարակութեան Զամեակի հանդիսութեան իր ժամանակը քիչ եւր ընդունաւ:

Օղակայանի պաշտօնական հիւրասրահին մէջ, հայրենի հիւրը զիմաստրուեցաւ զրօսալըջիկութեան նախադրութեան ընդունուող տնօրէնութեան ներկայացուցիչին, լիբանանցացի-վաճառական-համերու, զրազներու եւ այլ պանախախտուուններու կողմէ:

Պէյրութ ժամանման յաջորդ ուն իսկ, Վիլի Մանուկեանն կեդրոնին մէջ, կէտքէ տալ ժամը 11ին, Վ. Պետրոսեան տուաւ ժամոյ առաւելու մը, ներկայութեամբ աւելի քան 13 լիբանանց թերթերու խմբագիրներու, լիբանանցի ռաւիտիոյ Ներկայացուցիչին եւ Վալիք-Սիմէն Գալեան շտաբանութիւնի Սիմէնի վարչի Շարէ Վարսեանի:

Առաջին հերթին, «Շիրակ» պատասխանատու խմբագիր Սեյիկ Մարգիսեան, կենսագրական ամփոփ տեղեկութիւններով ներկայացուց հայրենի հիւր-զրադէտը: Այնուհետեւ, խօսքը տրուեցաւ հիւրին, որ ընդհանուր գիծերու մէջ Հայաս-

9404-339

digitised by

167-2200 A.R.A.R.®

90992-ԱԿ

տանի Գրողներու Միութեան Գաւառի գործունէութեան եւ ստեղծագործութիւնը քաջաշնորհաբար նպաստելով ստեղծուած դիւրամիտներուն շուրջը մտնողական պոստիկեր մը փոխանցելէ ետք, դժբախտաբար ծանրացաւ սփիւռքահայ գրականութեան նկատմամբ Հ. Գ. Միութեան ցուցաբերած յատուկ շահագրգռութեան վրայ եւ, առ այդ, յայտնեց ներկաներուն, թէ հետագայ քառամսկէն Հայաստանի մէջ պիտի հրատարակուին Համառօտագիր, Վազգէն Եւսեանի, Նիկողոս Սարգսիանի, Մուշեղ Իւսիանի, Հրաչ Զարգարեանի, Անդրանիկ Անդրէասեանի եւ այլ հեղինակներու դրականութիւնն արդուած ժողովուրդներ, իսկ ժողով ապագային կը նախատեսուի յատուկ քիմ-փոփոխութիւն եւ այլ համաձայնութիւններու ձեւերով սփիւռքահայ գրականութեան ներկան եւ հարցերը՝ միմեանց մէջ ժողովուրդը, մէկ գրականութեան համագործին տեսականէն:

Տեղեկութեանց դեմք, Վ. Պետրոսեան յայտնեց նաեւ, որ Մոսկուայէ մէջ, 100 հազար տպագրականութիւն, որոնք լինելով լոյս պիտի տեսնէ Տրոյսկի վերաբերեալ ՎՄԱԿԱ լիւրտի քառասուն օրերը հանրաժանութիւն վէպը, որուն յատկապէս կը գրուի հոս մեծ զորք ու հայ ժողովուրդի բարեկամ Միտայիլ Տուրկին: Ետեւանակելով, ան աւելցուց, որ վերջերս սկսած է քուցադրուիլ խեղդող առաւելում վէպին ժողովուրդը:

Հայ գրականութիւնը ուստ եւ այլ ժողովուրդներու ծանոթացնելու նպատակով կատարուած աշխատանքներուն շուրջը արտայայտուելով՝ Հ. Գ. Միութեան նախագահը ծանրացաւ Գրողներու կազմակերպչի ՎՄԱԿԱ նախագահութեան հաշտութեան խաղաղարարական ճիգերուն վրայ: Ան ուրախութեամբ ըսաւ, որ 1934ին, հայ գրականութեան այս գլուխգործոցը լոյս պիտի տեսնէ ուսանողի լիցենզիա եւ ամբողջական թարգմանութեամբ, կատարուած՝ զբարար գիտական բնագործին: Մանրամասնելով իր խօսքը, Վ. Պետրոսեան դիմեց առաւել, որ արդէն իսկ աւարտած է զբարբառէն ուսանողի տողացի թարգմանութիւնը, որուն բանաստեղծականացման դժուարին գործին լծուած են երկու առաւելական բանաստեղծներ:

Թարգմանական աշխատանքը ստեղծագործ եւ հմուտ թարգմանիչներու վստահելու նպատակով կատարուած աշխատանքներուն վրայ ծանրանալով՝ Վ. Պետրոսեան ընդգծեց պատահական անձերու անհրապօր թարգմանութիւններուն վերջ տալու որոշումը, որովհետեւ նման պարագայ մը մ'է միայն լի ծառայի իր նպատակին, այլեւ վստահական արամադրութիւն կը ստեղծէ օտար ընթերցողին մօտ:

Նարեկացիի անկրկնելի ՎՄԱԿԱնքը Զբարգուած մեկով եւ ամենայն բնախորհրտամբ օտար ընթերցողներուն սեփականութիւնը զարմեղելու նպատակով կատարուած աշխատանքներուն դեմք Պետրոսեան նշեց, որ Հ. Գ. Միութիւնը ամէն օրանգլանութիւն կ'ընծայէ օտար

թարգմանիչներուն, պահուի հրաւիրելով Հայաստան, իրենց արամադրութեան տակ դնելով գործին որակաւորման նպատակով մասնագէտներ, դիտանականներ, եւ այլն:

Այս ուղիքով, ան յատկապէս ընդգծեց այն կէտը, որ Նարեկի 1000ամեակը պիտի նշուի միջազգային չափանիշով, պետական ժողովուրդով եւ մինչեւ 1984 ՎՄԱԿԱն ողբերգութեամբ պիտի հնչէ հուանքէն, հանգարիքէն, չիւրիքէն, ուրախիքէն, հոսանքէն, Քրանքէն եւ այլ լեզուներով:

Գրողներ Նարեկացիի թարգմանութեան ծիրէն ներս Վազգէն Գարեթիւանի թարգմանութիւնը բարձր պնդանքով հազ, Վ. Պետրոսեան յատուկ ուրախութեամբ արտայայտուեցաւ թարգմանչաց տան պետական ժողովուրդով ողբերգութեամբ թարգմանութեան մասին:

ՎՄԱԿԱն է մեղք, — ըսաւ Վ. Պետրոսեան, — որ թարգմանչաց տանը Հայաստանի մէջ վերականգնուեցաւ 1979ին, պետական միջոցառումով, իսկ այս աշնան մինչ պայն պիտի նշենք երկրորդ տնկած ըլլալով, աւելի քան քսան երկրներէ հրաւիրուած հայ եւ օտար թարգմանիչներու մասնակցութեամբ: Այսպէս, ինչ որ նպատակով ստեղծուած են երկու մրցանակներ, մէկը՝ հայ թարգմանիչին, երկրորդը՝ օտար լուսագրի թարգմանիչին (Խորհրդային Միութեան կամ արտասահմանէն):

Այս, իր խոսքին եզրափակել թանկէն մէջ, Պետրոսեան արագ կերպով ներկայացուց այն օրինակներ, որոնք ներկայացուցին եւ գործնական անկողնութիւնը, զորս Հ. Գ. Միութիւնը կը ներկայացնէ հայ գրականութեան թարգմանութեան նորութեան օտար զբաղեցնողներուն:

Վ. Պետրոսեանի զեկուցումէն ետք, լիւրանուհայ մամուլի ներկայացուցիչները ըրին կարգ մը հարցումներ, Հ. Գ. Միութեան կատարին, հայ գրողի պարտականութեանց եւ իրաւունքներուն, սփիւռքահայ գրողներու տեղափոխութեանց կարելիութեան, երգիծական գրականութեան տեղադրուիլ պատճառներուն եւ Միտայիլի սեղանագրութեան վերականգնման շուրջ:

«ՇԻՐԱՅԻ 25ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ»

Կիրակի, 4 Ապրիլ 1982, կէսօրէ սուալ, «Թեֆեան» վարժարանի սրահին մէջ Նշանցաւ «Շիրակ» ամսագրի հիմնադրութեան 25ամեակը:

Ամսագրի պատասխանատու խմբագիր Օնիկ Սարգսեանի բացման խօսքէն ետք, բեմ բարձրացաւ օրուան առաջին բանախօսը, ամերիկահայ գրող Անդրանիկ Անդրէասեան, որուն ողջ լուսին խօսքէն ետք, զարմագրուեցաւ զեզարուեստական յայտագիր:

Յայտագրին երգով, նուագով եւ ասմունքով իրենց մասնակցութիւնը բերին Ժանէթ

Գույրումենան-Իրանենան, Մտեփան Էմմիենան, Կա-
րօ Պատրեան, Ալեքսանտրոս Պատրեան, Յակոբ
ու Պելլա Էմմիենանները եւ Յակոբ Գույրումենան:
Ապա, երկրորդ բանախօսութիւնը կատարեց
Վարդգէս Պետրոսեան, որմէ ետք հանդիսութիւ-
նը փակեց Բարունակ Թովմասեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԵՐԱԳՐԱՅԻՆ

Հայ մամուլի ընտանիքներուն եւ մշակութա-
յին ու կրթական հաստատութիւններուն տուած
իր այցելութիւններուն շարքին, Ուրբաթ՝ 9
Ապրիլ, կէսօրէ առաջ, Վարդգէս Պետրոսեան այ-
ցելեց Վազիմի խմբագրատուն, ընկերակցու-

թեամբ գրողներ Լեւոն Վարդանի եւ Սարգիս Վա-
հագնի:

Շուրջ չորս ժամ տեւած այս հանդիպումին
ընթացքին, հայրենի գրագէտը սրտաց գրոյց մը
ունեցաւ Վազիմի խմբագրութեան եւ կարգ մը
այխատակիցներու հետ:

Երեք շաբաթիայ իր Լիբանան կեցութեան
ընթացքին, հայրենի գրագէտը նաեւ հանդիպում
մը ունեցաւ Լիբանանի Գրողներու Միութեան
վարչութեան եւ այլ պատասխանատուներու հետ:

Այս առիթով, յաջորդող էջերուն մէջ, մեր
ընթերցողներուն կը ներկայացնենք Վ. Պետրոս-
եանի գրականութենէն կարճ պատմուածք մը՝
«Մօր տունը»:

Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄՕՐ ՏՈՒՆԸ

Մօրս դրան զանգը սովորաբար չեմ տալիս. կ'արթնանայ, եթէ քնած
է, իսկ եթէ քնած չէ, մէկ է՝ վառ է լսում: Բանալին ունեմ, բացում եմ իմ
ձեռքով: Ձորս-Հինգ ամիս է մօրս չեմ տեսել: Մոսկուտ, արտասահման,
մեծ ու փոքր զանազան դործեր, զա՛խ, ժամանակ լինէր՝ եւայն, եւ նման
բաներ: Դուռը, ի վերջոյ, բացում եմ, միջանցքի լոյսը, թէպէտ ցերեկ է,
մնացել է վառ եւ փայլում է լլացուցիչ սպիտակութեամբ:

— Տիկին մայրիկ...

Ոչ մի արձագանք: Ոտնաձայն էլ չկայ:

— Մայրիկ...

Մտնում եմ սենեակ. անկողինը խնամքով, կոկիկ հաւաքուած է, բար-
ձերը ուռած-փքուած նստած են իրար գլխի, յատակը մաքուր է, ռադիոն
միացրած: Մայրս ռադիոն միշտ միացրած է պահում. «Ելի շունչ է, — ասում
է, — որ ներսուզուրս եմ անում, ինձունձ խօսում եմ, կարծես տանը մարդ
կայ, պատասխան է տալիս»: Մայրս խոհանոցում էլ չի: Պատշգամբում էլ:
Սովոր անտարբերութեամբ ձեռքս դնում է դէպի ռադիոյի թելը, քաշում-
անջատում եմ: Փուռում եմ բազմոցին, որ հին է, ծածկուած կանաչ թաւի-
շով: Լուս է, նոյնիսկ աւելի լուս է, որ մայրս տանը չէ: Տեսնես խմելու բան
ունի՞ր աիկին-մայրիկը: Ալարկիստ վեր եմ կենում, բացում սառնարանը: Կոն-
եակի մի կիսատ շիշ, երկու շիշ զարկուր: Շոգ է, նախ բացում եմ զարե-
շուրը: Հապիւ մի կում եմ կարողանում կուլ տալ. թթուած է: Նայում եմ

ամասթիւր. դէ, ի հարկէ, առնուազն մէկ ամսուայ թարմութիւն ունի: Մայրըս դիտի, որ դարեմբուր շատ եմ սիրում, իսկ երեք-չորս ամիս է գիւղ չեմ եկել: Արագ վաճառեմ եմ այդ միտքը: Ուզում եմ լիովին օգտուել մենակուութիւն կոչուող աշխարհամասից, չմտածել ոչինչ, մանաւանդ, որ շուրջս գիւղի թափանցիկ լուծիւնն է՝ լցուած միայն երեխաների հասուկներու ձայներով, գիւղական միջնաւերի բազմաձայն երգչախմբի միայլար բզկոցով: Մօրս տունը ճանապարհից դուրս է, այգիների մէջ. այստեղ մեքենայ չի դալիս, եւ մեքենայ չունեմ, չեմ էլ ունենայ: Խրում եմ բազմոցի յոգնած զսպանակների մէջ, ջանալով չմտածել ոչինչ:

Գալուս նպատակը դործնական է. պիտի համոզեմ, որ մայրս փոխադրուի քաղաք, դոնէ մօրանը մեզ հետ ապրելու: Բաւական ազդեցիկ ճառ ունեմ մտքումս: «Ամօթ է, այ մամ, — կ'ասեմ, — ես քո ունեցած-չունեցած միակ տղան, տուն, փառք Աստուծոյ, կայ — երեք սենեակ, հարսիդ էլ, ինչքան դիտեմ, սիրում ես, ախր ամօթ է չէ՞, էս մենակութեան մէջ շատ պիտի որ մթնեցնես»:

Հեռախօսը յանկարծ զնգում է. ա՛խ, գիւղում էլ կայ այդ անիծուածից... Հանելի թմբիւրը կարծես ցնդում է միանգամից: Դէպի հեռախօսը զնգում եմ դանդաղ ու ծոյլ՝ դուցէ, մինչ այդ, ձայնը կտրի՞... Վերցնում եմ խօսափողը. «Անուշ մայրիկ, — կ'նշոյ ձայն է, — հօ չարթնացրի՞, ուզում էի հարցնեմ, քաղաք չե՞ս գնում, Մայրսը գնում է, ժամը չորսին է գնում, — կ'ինքն խօսում է առանց վերջակէտերի, — կ'ասեմ սպասի, գնում ես...»:
«Մայրիկը տանը չէ, — ասում եմ, — Վահանն եմ»: «Վայ, քոռանամ ես, — ասում է կ'ինքն ու՛ տու, տու — խօսակցութիւնն ընդհատում է: Միծաղս պալիս է յանկարծ, յետոյ ջղայնանում եմ իսկականից. ախր, այ սիրելի մայրիկ, ինչքան պիտի ապրես այս շորս պատի մէջ ու սրան-նրան խնդրես, որ քեզ քաղաք հասցնի: Մայրս հոգս է եւ, որքան էլ ուշ-ուշ դամ գիւղ, մօրս հոգն ապրում է իմ ուղեղի մէջ բջիջում: Յանկարծ հասկանում եմ, որ ես ուզում եմ ազատուիլ հենց այդ հոգսից, ուզում եմ հաստատ ու վերջնականապէս համոզուած լինել, որ նա երեւանում է, մեր տանը, ուզում եմ, որ գնէ մի հոգսով մեղմանայ այս կեանքի լարուածութիւնը: Մէջս իսկական մի կռիւ է խմորում. «Վերջ, գնում եմ»: — Կ'ասեմ: — Ես ժամանակ չունեմ, հասկացիր: Քեզ քանի՞ տարուայ կեանք է մնացել, որ ապրես ունեցած-չունեցած միակ տղայիցդ հետ: Գնում եմ, տունդ հաւաքիր: Տունդ էլ՝ առ՛ւն լինի...»:

Ինչքան պիտի ապրի մայրս: Մի անգամ, այն ժամանակ բանալի չունէի, գիւղ եկայ, հարեւաններն ասացին, որ տանն է: Դուռը ծեծեցի-ծեծեցի, ոչ մի պատասխան: Մեծեցի տւելի բարձր, ջղային: Հաւաքուեցին հարեւանները: Ամէնքն էլ հաստատեցին, որ քիչ առաջ մօրս տեսել են տուն մօրտնելիս: Վախեցայ, անմիջապէս կոտրեցի պատուհանի ապակին, մի կերպ ներս խցկուեցի: Բարիքը հոսում էր վրայիցս, աչքերս հազար ու մի պատկեր էին պատրաստում տեսնելու. մայրս՝ ընկած յատակին, մայրս՝ հանդած, ռադիոյի մօտ: Մայրս քնած էր: Բրդէ գլխաւորը մոռացել էր հանել, քնած էր: Վատ է լսում, գլխաւորն էլ՝ երկուս, մանաւանդ որ քնած էր: «Մա՞մ, — սկզբում ձայնս զուլաւոր էր, վախեցած, — իսկ եթէ յանկարծ, — մամ, — տազնապս լարուեց, բայց շօշափեցի ձեռքը, ապա էր եւ զարկերակը խփում էր հանգիստ ու կանոնաւոր: — Ես եմ, մամ...»:

«Վայ, քնել եմ, — արթնացաւ մայրս, — վայ, քոռանամ ես, Վահանս եկել է, ես քնել եմ...»:

Այդ օրուանից վերցրեցի բանալին՝ Մոսկուա, արտասահման, քործեր,

«տխ, ժամանակ լինէր...»: Ձորս ամիս է մօրս չեմ տեսել:

Տեսնես ուտելու բան կը լինի՞ մօրս տանը... Կա՛յ, տապալկած լորի, իմ սիրած կերակուրը, նոյնիսկ ոսպ... Առանց տաքացնելու, հենց սառը սառը՝ ուտում եմ: Լաւա՛ չկայ, քաղաքից բերած հաց է. տեսնես ո՞վ է առել: Ձէ, վերջ, տանելու եմ: Աննան կտրականապէս պնդեց. «Մենակ, անօդ-նական տարել-դրել ես դիւղում, հարեւաններդ արդէն փոփսում են, — ասաց, — մենակ... փորձիր դէժ մի օր՝ նրա պէս սպրել մենակ, կը խելագար-ւես...»:

Լորի բաւական համով է, թէպէտ սմբած է մի տեսակ՝ դումպրած սառնարանի սովոր հոտը, տաքացնե՞մ, ժամանակ չկայ, մի բաժակ կոնեակ եմ կուլ տալիս, կոնեակը ներս է հոսում դիւղում, յետոյ կաթիլ-կաթիլ տարածուած երակներովս, բաժանում մարմնիս բոլոր մասերին, յետոյ մի տեսակ թմբիք է իջնում վրաս: Տեսնես ո՞ր գնացած կը լինի տիկին-մայրի-կը: Երեւի քոշ աղկալ տուն. դիւղում մնացած միակ արիւնակիցը մօրս-քոշ աղկիկն է: Վերջին անգամ նրան տեսել եմ երեք, թէ չորս տարի առաջ: Անունը կարծես թէ Վահանոյ է կամ Մայրանոյ: Մի խօսքով, զանազն կայ: Եօթ երեխայ ունի: Այդ մէկը հաստատ եմ յիշում, որովհետեւ եօթից վեցը աղջիկներ են:

Ձիւ, մի տեսակ տաղնապով՝ նորից աղմկում է հեռախօսը: Ձաշանակ: Անմիջապէս վերցնում եմ խօսափողը:

— Մայրիկը տանը չէ, Վահանն է:

— Վահան ջան, — տղամարդու ձայն է, — բարեւ, Առաքելն է...

— Առաքել՝ լը...

— Որտեղի՞ց պիտի միտդ լինեմ: Հօրդ ընկերներից եմ: Ես եմ մնացել, երես պիտի է, մէկ էլ Արմենակը: Նա էլ՝ քուց-դնաց քաղաք: Գնալ-գալ չունե՞ք...

Ինչպէս դիմեմ՝ քեռի՞, հօրեղբա՞յր...

— Բարեւ, Առաքել քեռի: Ձգիտես որտե՞ղ կը լինի մայրիկը: Երկու ժամ է սպասում եմ: — Ինքնաբերաբար նայում եմ մօրս պատից չիկիսկացող ժամացոյցին: — Մի ժամ տասնըհինգ րոպէ կը լինի տանն եմ: Ձկայ ու չկայ:

— Ես քեզ ասեմ, Վահան ջան, — ձայնը խոպոտ է, բաւական խղում, երեւի թունդ ծխող է, կամ առթմա ունի: — Ասեմ. կամ Սեդրակենց կողմը գնացած կը լինի. էդուց-միւս օրը Սեդրակի թոռան հարսանիքն է, լաւ էլ մարդու տոբին. ճարտարապետ տղայ է, ախալբայաքցի: Կամ էլ՝ Օշական գնացած կը լինի՝ պոպոքի, շուշուի պիտի թաթախեն, երէկ Մարիամն ասաց, որ պիտի գայ ձեր կողմը, մօրդ օգնի: Մարիամը հարսն է, մեր հիւանդանոցի աւադ բուժքոյրը, հիւանդներն արեւովն են երդում, բայց ինստի-տուտ չգնաց, ո՞նց գնար. չորս երեխայ, տունուտեղ... Հա, մէրդ կարող է քոշ աղկալ՝ Վազգանոյ չէ տուն գնացած լինի, խեղճ աղջիկը երկու ամիս կը լինի հիւանդ պառկած է, ռակ են կասկածում: Վալ թէ սուրբ Մարգիտ էլ գնացած լինի, գիտե՞ս, էսօր օրն է, կամ էլ...

— Հեռախօս կա՞յ...

— Սուրբ Սարգսում...

— Մօրաքրոջ տանը:

— Դու հեռախօսը դիր, իմանամ-ասեմ:

Պատուհանից միայն աչքին եմ երեւում: Ուշ աշուն է, կանաչը դեղ-նել է, խաղողը հաւաքուել, արորուն կոտորի տակ եւ հիմա կարասներում դառնում է գինի, օղի, հազար ու մի բան է դառնում: Յանկարծ մէջն արթ-նանում է զարմանալի մի դրդիւ. տեսնես մօրս այդուհի խաղող մնացած կը

լինի՞, թէկուզ մի ողկոյզ կը լինի՞... Ամենալուսն աշու՝ վերջին խաղողն է։ Մանկութեան օրերին, տափաստանի խորշակի այն արչաւում էինք այդինների վրայ, հետախուզում—գտնում թաքնուած ողկոյզները, որոնց արեւն արդէն չամբէէր դարձրած լինում, շատ համով խաղող էր։ Տեսնես մնացած կը լինի՞։ Դուրս եմ գալիս, մտնում մօրս այգին, որ երեք—չորս թումբ է։ Այսինքն, մօրս այգու սահմանը որտեղի՞ց դիտեմ, հնարաւոր է, որ մտնում եմ հարեւանի այգին։ Ոչինչ, խաղողի այգում սահմանապահ չկայ, դուցէ շո՞ւն լինի... Այգում խաղող լուծիւն է։ Սկսում եմ հետախուզել խաղողի վաղեմը, կռանայ, բարձրացնել ճիւղերը, մի տեղ ցելն է, սայթաքում եմ, վայր ընկնում։ Երբեմն գլուխս խցկում եմ դեղնած—չորացած տերեւների արանքը, լայն—լայն բացում եմ աչքերս։ Ահա, վաղի խորքում առօք—փառօք թաքնուել է մի ողկոյզ՝ դեղին՝ լիքը հատիկներով։ Ուզում եմ պոկել, չի պոկւում անսպասանը, դանակ էլ չունեմ, ողկոյզը դիմադրում է յամառօրէն, դուցէ ճի՞ւղը ջարդեմ։ Ահ, մայրս կը նեղանայ։ Ի վերջոյ, կարողանում եմ յաղթել, եւ ողկոյզն իմ գերին է։ Արեւի տակ աւելի լաւ է շողջողում։ Նստում եմ հենց թմրին, հողի վրայ եւ սկսում ապահովեմք ուտել։ Մանկութեան աշնան համ կայ խաղողի մէջ, դուցէ յօրինում եմ... Մայրս ինքն է մշակում—խրնամում այգին, մէկ—մէկ օգնում են փորելիս, թաղելիս։ Ո՞վ է օգնում։ Անցած ձմեռն էր, փարիզում, իտալական ռեստորանում խաղող ուղեցի։ Քնչոր, թափանցիկ հատիկներով խաղող էր, կորիզները երեւում էին՝ ինչպէս ձկները լաւ ակփարիումի մէջ։ Անհամ խաղող էր, կամ դուցէ հիմա՞ եմ յօրինում, թէ անհամ էր։ Եթէ հիմա օրինորդ Մարին տեսնէր ինձ։ Մի՞թէ ամբողջ ողկոյզը կերայ—վերջորի... Տեսնես էլի կը գտնեմ... Մեկնում եմ հողին, փակում աչքերս... Երէկ վերահասում էի ծեր մի կնոջ, հեռացրեցի լեղապարկը։ Երբ սպիտակ սաւաններով ծածկեցի նրա մարմինը եւ միայն գէժքը մընաց, յանկարծ տեսայ, որ կինը շատ է նման մօրս։ Դատարկ բան։ Ծեր կին էր՝ գէժքը խցմբուած կնճիտներով, մաղբը սպիտակ։ Աչքերը փակուեցին միանգամից, եւ մի պահ վախեցայ, չօշափեցի դարկերակը։ Ժիրտն աշխատում էր հանգիստ եւ համաշափ։ Քանի՞ տարով երկարացրեցի այդ կնոջ կեանքը։ Գուցէ կրճատեցի՞։ Քանի՞ տարով կրճատեցի... Լեղապարկում քար կար։ Հեռուից ինչ—որ մէկը ձայն է տալիս՝ Արտաւա՞ղդ, Արտաւա՞ղդ... Ահա ոչ ոք չափանց ցածրից մի ինքնաթիռ է անցնում։ ձայնից կռահում եմ՝ «ՅԱՅ—ԱՅ», ութ տեղանոց։ Ձեմ բացում աչքերս։ Օրինորդ Մարին վերաբայ է, ինչո՞ւ այդ կինը յանկարծ խցկուեց յիշողութեան մէջ, սեփական կլինիկա ունի փարիզի արուարձանում։ Ձի ամուսնացել, ապրում է մեն—մենակ։ Չ'ուղեկայի մեռնել վերահաստութեան ժամանակ», — ասաց այն օրը՝ իտալական ռեստորանում։ Գինո՞ւց էր, թէ՞ տխրեց յանկարծ։ Մարդ պիտի մեռնէ՞ իբրեւ աշնան վերջին խաղողը՝ թփերի մէջ թաքնուած ու արեւի շողերից կամաց—կամաց սփռելով։ Բացում եմ աչքերս, վերեւում միայն երկինքն է՝ կապոյտ անապատ։

— Իյա, Վահան... —

Քառասուն—քառասունհինգ տարեկան մի տղամարդ կանգնած է իմ դուրս խալիբուում։ Փորձում եմ տեղը բերել. ո՞վ կը լինի...

— Մեր Անոյն էս տարի էլ դուրս մնաց բարձրագոյնից։ Լաւ է եկել եւ։ Մոլորուել էի, թէ ինչ անեմ։ Փետայիս էլ դնում են փոփ վարիչ, ի՞նչ խորհուրդ ես տալիս։

— Մայրս որտե՞ղ կը լինի, — ջղային մի դրդիւն եմ զգում ներսումս, — չե՞ս տեսել մօրս...

— Ձէ, չեմ տեսել։ Ուզում էի դեղձից—բանից ուղարկէի։ Քեզ, այսինքն—



ՄԵՆԱԻՈՐ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Գրքի՝ ՏԻՐԱՆ ԱՃԵՄԵԱՆԻ

զրն: Մէրդ հասցէդ շտուեց: Լաւ է, Լիւի ես, կը տանես... Հիմի ի՞նչ խորհուրդ ես տալիս՝ փեսաս գնա՞յ փոխ վարիչ...:

— Ես, ի՞նչ է, հաջաբույկեղէնի մասնագէտ հմ, որ խորհուրդ տամ: Փեսադ ո՞վ է...:

— Երջկոպի նախագահը քո ընկերն է, երեք տարի իրար հետ էք սո-վորել: Երբորդ դասարանում երկու տարի մնաց, Կէս խօսք էլ որ ասես, չի մերժի:

Ուշադիր, մանրամասն նայում հմ դիմաց կանգնած մարդուն: Դեռ չոտած եմ հողին, որ սառն է ու չոր: Մօրս մասին յանկարծ մտածում եմ շնորհակալութեամբ. «հասցէն շտուեց», Կեցցես, մայրիկ: Յետոյ միանգամ մից մոռանում եմ դիմաց կանգնած մարդուն, որի անունը յանկարծ զարթ-նում է մէջն՝ Արտաւազդ, մօրս հարեանն է, երեխայ ժամանակ երեւի միա-սին մէքդ են դողացել ունէ հարեանի այգուց: Փոկում եմ այքերս. այդպէս ամէն բան ասելի լաւ եմ տեսնում, որովհետեւ չեմ տեսնում Արտաւազդին:

— Ես գնամ դեղձ-մեղձ սարքեմ, — լսում եմ Արտաւազդի ձայնը, — լաւ մածուս էլ ունեմ: Արդար մեղը էլ, բա ո՞նց, քաղաքում մեղըը շաքարից է, ի՞նչ խելօք գլխին սնունդ է պէտք: Հիմի ի՞նչ ես ասում Անոյի համար: Կանչե՞մ... Ուղո՞ւմ ես՝ շրջկոպի նախագահի վրայ մի թուղթ դրի: Ազգա-նունը Սանոյեան է, Վառ Սանոյեան...:

— Գնա՛, Արտաւազդ, — այքերս չեմ բացում, — ես մօրս կը սպասեմ: Եետոյ կը դամ:

Արտաւազդը յանկարծ զարմանալիօրէն ենթարկում է, որովհետեւ քիչ յետոյ լսում եմ նրա ոտքերի քթքթոցը, որ կամաց-կամաց մաքում է: Ետըջ մնում է միայն նախկին լռութիւնը՝ լցուած աշխարհի վերջին միջատ-նիւրի բղղոցով:

Մի բաժակ էլ կտնեակ եմ խմում: Երեք օր առաջ ուսանողուհիներից մէկը ուշաթափուեց վիրահատութեան ժամանակ: Ախր, կնոջից ի՞նչ վիրա-բոյժ:

Մօրս այդուժ բարակ մի կածան կայ, տեսնես հիմա կա՞յ, թէ՞ ասֆալ-տել են, այդ կածանը դէպի ձորն էր տանում, ժամանակ ունենում, այսօր չէ, մի օր ժամանակ ունենում՝ ձորն իջնեմ: Մեր դպրոցն այդ ճանապարհին էր, ձորի գլխին: Ձմեռը դժուար էր լինում մեր դպրոցի ճանապարհը, կածանը կորչում էր միւսերի մէջ: Մի շուն ունէինք, անունն ի՞նչ էր, միշտ հետս գա-լիս էր դպրոց: Լաւ շուն էր: Մէկ-մէկ պայուսակ կապում էինք մէջքին, ես տանում էր, ես յետեւից գնում էի-էլիսանէ պէս: «Շունդ եօթնամեայ կրթութիւն ստացաւ, — սը անգամ կատակեց մեծ եղբայրս. այդ մ'ըք էր, — ասում են շունը քթապանցիկ է, իսկ քո աւարտականը լիքը միջակ...»:

Օրբորդ Մարին բարակ, երկաթէ մատներ ունէր, ինչո՞ւ տխրեց այն օ-րը, խալալկան որճարանում: Ճիշտ, արեւիքցիներդ յիշեցնում էք մարդկու-թեան մանկութիւնը, — ասաց, — յուզում էք, կարողանում էք լսել ուրիշի վիշտը, դուք անմիջապէս մտածում էք. ինչո՞վ կարող եմ օգնել: Օրբորդ Մարին կլիկական մէկ միւրն դուլար արժէ:

Պահարանի դրան հակառակ երեսին զանազան լուսանկարներ են: Այն-

անդ, որտեղ հայելին պիտի լինէր, լուսանկարներ են, մայրս հանել է հայելին, տեղը ապակի դրել, ապակու տակ շարել նկարները: Նայում եմ մէկիկ-մէկիկ: Քրոջս դիմագծերը անծանօթ են թւում, նրա դէմքը կարծես լրիւ ցընդել է իմ ներաշխարհից: Յիշում եմ, մայրս է ասել, որ նա կապոյտ աչքեր ունէր: Այն ժամանակ համարուել է գիւղի գեղեցկուհին: Միայն մի պատկեր դրոշմուկ-ապրում է մէջս. փեսայիս բանակ գնալը: Քոյրս ինձ էլ տարաւ կայարան, ճանապարհելու: Յարութիւն էր փեսայիս անունը: Յիշում եմ, կանգնել էինք երեքով. ոչ ոք չգիտէր, որ երկու ամիս յետոյ սկսուելու է պատերազմը, եւ Յարութիւնը զոհուելու է հենց առաջին օրերին: Քոյրս այդ պահին չգիտէր, որ մեռնելու է մէկ տարի անց, իսկ իր մէջ խլրտացող երեխան լոյս աշխարհ է դալու եւ մեռնելու մօրից վեց ամիս անց՝ պատերազմի ցուրտ ու զոհարար մի գիշեր: Ոչ ոք ոչինչ չգիտէր, եւ այդ պահին մենք եւրօք էլ հրջանիկ էինք. ես՝ կայարանի ժիւղով, քոյրս՝ իր մէջ խլրտացող երեխայով, փեսաս՝ աղամարդ դառնալու հաստատ փաստով — կրն ունի, երեսայ կ'ունենայ, բանակ է գնում: Այդ պատկերը յիշում եմ միշտ, իսկ քրոջս դէմքը մոռացել եմ, քոյրս իմ յիշողութեան մէջ անդէմք մի գեղեցկուհի է՝ կապոյտ մշուշի մէջ: Վնջիկս կենդանի լինէր, հիմա ոչ մէկի յոյսին չէի լինի, ինձ կը պահէր: Այս բառերը քանի անգամ եմ լսել մօրիցս, երբ տխուր է եղել: Իսկ քոյրս չկայ արդէն քառասուն տարի: Քառասուն տարի... Մայրերը չեն հաշուում որեւէ կորստի հետ, մայրերը իրենց բոլոր կորուստները տնայրար են համարում, քախտի չար հարուած, մայրերը կտիւ են տալիս հակառակորդի դէմ՝ մինչեւ վերջին շունչը: Իսկ մե՞նք. ի՞նչ հեշտ ենք հաշուում մեր բոլոր կորուստների հետ, ի՞նչ արամարանկան թաղատրու-թիւններ ենք գտնում եւ ինչպէս արագ մոռանում, ջնջում մեր յիշողութիւնից...

Նորից դիմում եմ հեռախօս անուշով հոգեւոր:

— Այո՞...

— Առաքելն է, Վազգանյան չի համար՝ 3-78 է, բայց մէրդ կէս ժամ առաջ նրանց տնից չգիտեմ ուր է գնացել: ձաշմաշ է տարել Վազգանյանին, սասցի չէ՞, ուսկ են կասկածում, յետոյ ասել է, որ պիտի գնայ գիւղիս ու հուրդ, էնտեղից էլ պիտի գնայ Օշական, պոպոքի, ասում էի, չէ՞... Երեւ ինքեդ հաւաքի, եկէ՛ք շուջուխ թաթախելուն: Կ'ուրախանան:

— Գիւղացի եւ ինչո՞ւ էր գնում մայրս:

— Նրան էլ կ'ասեն՝ ինչի՞, տեղը տիտիկ չի անում: — Մի պահ շունչ է առնում: — Վահան ջան, տխր, էս թթուութիւնս հոգիս հանեց: Ասում են ձապոնիսայում նոր դեղ են գտել: Ասում են՝ խմեցիր թէ չէ, դանակի պէս կտրում է, մօրդ երէկ էլ ասացի, որ քեզ ասէր, չի՞ ասել...

— Երկու ամիս է մօրս չեմ տեսել: Ես կը հետաքրքրուեմ, թէ դա ինչ դեղ է:

— Հա, դու շատ ապրիս: Ես հիմի դանդ կը տամ գիւղիս ուրդ, դու տայ թէ չէ, կը զրկեմ տուն:

— Ծնորհակալ եմ, Առաքել քեռի:

Նայում եմ մօրս ժամացոյցին: Երկու ժամ յետոյ պիտի հիւանդանոցում լինեմ: Սովորական օր է, ոչ մի խաղ գէպք չկայ, բայց դնալ հարկաւոր է: Զգիտեմ ինչու, մեքենաբար միացնում եմ քաղիոն. լուրեր է հազարում արտասահմանից, լսեմ մի քիչ: Յանկարծ պատկերացնում եմ քրոջս, ո՛չ, քրոջս մարմինը միայն — ասանց գլխի, լուռ, անպաշտպան մի մարմին: Թաղիոն չի օգնում, ես շարունակում եմ տեսնել քրոջս մարմինը, եւ տխուր-թիւնը լաւ ցնցուղի ջրի պէս թափում է գլխիս: Որտեղի՞ց արթնացան այս

քնած տխրութիւնները, ինչո՞ւ յանկարծ, ժամացոյցի մեխանիզմի պէս սկզբնային բարախել յիշողութիւնները: Աղջկանս քրոջն անունն եմ տուել, քրոջս, որի դէմքը կորել է, լուծուել ժամանակի տխրութեան մէջ: Բայց աղջկանս առնունք տալիս երբեւէ անդադառնում եմ, թէ դա քրոջս անունն է: Ի՞նչ դիտեմ մօրս մասին, որ ապրում է, որին տեսնում եմ ամիսը-երկու ամիսը մէկ: Վերահաստեղծեան դանակի պէս տուր մի բան ծակում է ներսս, եւ յանկարծ ես սկսում եմ մանրամասն նայել մօրս նկարին: Զահել ժամանակուայ նկար է, նկարուել են հօրս հետ, Երեւանում, հայրս առանց սափրուելու է, մայրս՝ երջանիկ, նկարում է երջանիկ: Ինչի՞ց են մայրերը երջանիկ լինում, ինչի՞ց՝ դժբախտ: Այդ ամէնը գաղտնիք է անքննելի, որովհետեւ մօր օրոք մէջ լուսեմեան ամենամեծ պաշարն է: Ասենք, շատ վաղուց է, որ մօրս հետ մի կարգին չեմ էլ զրուցել: Եկել եմ տասը-ստասը՝ ընդ ընդ, անմիջապէս նայել ժամացոյցիս, մօրս փող եմ տուել, երբեմն կօշիկ կամ դռնոց բերել եւ դառնացել յաճախ, որ մայրս չի ուրախացել այդ ամէնով: Նոյնիսկ շատ բան չի էլ հաղել: Երկու տարի առաջ շատ լաւ մորթուց մուշտակ տալ: Բայց մի տուն փողն ինչի՞ ես տուել օրսնս՝ — Դժգոհեց, բայց, կուհեցի, նաեւ ուրախացաւ: Մուշտակը նովնոր կարուած է պահարանում: Մէկ-երկու անգամ հագին հագած լինի, այն էլ՝ քաղաք դալիս: Սկզբում նեղանում էի, յետոյ հասկացայ, որ մայրս գիւղում չի ուզում հագնել իմ առած թանկ մուշտակը, բայց պատմել են ինձ, որ մէկ-մէկ կտնչում է հարեւաններին, ազդականներին, ցոյց տալիս մուշտակը, այսինքն, տեսէք, թէ ի՞նչ տղայ ունեմ... Միտան մի անգամ, ե՛րբ էր, մայրս լաց եղաւ, բողոքեց իր բախտից, յետոյ առաջ տարօրինակ մի նախադասութիւն: «Մէկ-մէկ մտածում եմ, որ արիւ ես ի՞նչ եմ արել, որ Աստուած պատժեց ինձ. հայրդ մեռաւ. քոյրդ, մեծ եղբայրդ, մնացի էսպէս պուպուի նման: Պատերազմի ժամանակ գինի էի տանում Ապարան, որ ձեզ պահեմ, մէկ-մէկ ջուր եմ խառնել գինուն: Կարող է դրա համար է պատժում Աստուած: Բայց դա հօրեցդ յետոյ էր, նա ինձ կը թողնէ՛ր, որ ես տնից դուրս գամ, գինի ծախեմ...»:

Պունայած լուսանկարից հայրս նայում է մազակալած ու բարի: Հիմա ես հօրիցս մեծ եմ երեք տարով. օղայիս հօրս անունն եմ տուել, իսկ իմ անունը պապիս անունն է, ուրեմն, իր անուն-ազգանուն-հայրանունով հայրս յարութիւն է առել՝ այսպէս ասած: Բայց ի՞նչ կապ ունի իմ այդ որդին պապի հետ. ոչ մի: «Եւաֆթալինի հոտ է դալիս իմ անունից, — ասաց մի անգամ շունչանորդին, — աշխարհում լիքը մողեսն անուն, իսկ դուք... իմ անունը գնացել կամիսինի՞ց էք յաջողացրել: Այն ժամանակ ես մի չրիկան ապտակ տուի անպիտանին, իսկ երկրորդ օրը ճապոնական մազնիտովն ասայ. ամէն անգամ դա մտաբերում եմ իբրեւ լիակատար ստորութիւն:

Թիշողութիւնները արթնանում են ասես ինչ-որ անորոշալի ազդանշաններով: Պատերազմի օրերին էր, հացի հերթի էի կանգնել, հացը նոր էին ըստանում եւ յանկարծ 14-15 տարեկան մի տղայ թոցրեց մի ամբողջ հաց եւ փախաւ: Նրա յետեւից վազեցին խառութպանը, մի միլիցիոներ, շատերը հերթից: Ես էլ ի վերջոյ, տղային բռնեցին, բայց, ո՞վ դարմանք, ձեռքին հաց չկար: Փախուստի այդ մի քանի րոպէի մէջ տղան, ուրեմն, կերել էր ամբողջ հացը: Յետոյ, զարմացած՝ տղային էին նայում խառութպանը, միլիցիոները, միտները: Տղան կանգնած էր գլխահակ ու անօղնակաւ, բայց աչքերում կրակ կար. կերել էր, կերել էր, հաց էր կերել, տաք, նոր թխած հաց, մի կիլոգրամ հաց... Երբ որ տուն եկայ, մօրս պատմեցի, մայրս լաց եղաւ. խեղճ երեխայ, ասաց, տուն բերէ՛ր, տաք ճաշ կար, մի տուն պիտի բերէ՛ր...

... Յետոյ հայրս՝ ծանր, մի տեսակ հանդիսաւոր դալիս-նստում է կող-
քիս. յետոյ քոյրս՝ փեսաս՝ Յարութիւնը, որ այդպէս էլ յարութիւն չառաւ,
քրոջս աղջիկը գայիս է Ծլուրլալով, յետոյ միծե կղքայրս, յետոյ չգիտես որ-
տեղից՝ այն հաց փախցրած տղան, ես պարզ-պարզ տեսնում-տարբերում եմ
բոլորին, տեսնում եմ նաեւ ինձ՝ ոտաբոսիկ ու տխուր, տեսնում եմ մօրս՝
հրջանիկ ժպիտով, որ մնաց քառասուն տարի տուաջուայ հեռում, դաւառա-
կան մի լուսանկարչատան մութ պատերի մէջ։ Յետոյ աթոռներից մէկին՝
բարեկիրթ, կանացի՝ տեղաւորում է փարիզուհի օրիորդ Մարին, իսկ նրանց
ամէնքի փոխարէն խօսում է ռադիոն՝ լուրեր հաղորդելով արտասահմանե-
րից։ Քանի՞ բոսլէ է տեսնում այդ տեսիլքը... Իսկ մայրս ամէն օր, ամէն օր
սուրում է տեսիլքների այդ աշխարհում... Դա երեւի մօրս միակ տունն է...
Ինչո՞ւ յանկարծ, ականջներին մէջ զնգում են կնոջս՝ Աննայի բառերը. «Մե-
նակ, անգնական՝ մօրդ տարել-զրել ես գիւղում, մենակ, փորձիր գէթ մի
օր նրա պէս ապրել, կը խելագարուես...»։ Մայրս է մենակ... Դառը քրմ-
ծիծաղ եմ տալիս, իսկ պահարանի ապակու տակ նրանք են՝ մօրս տունը։
Այդպիսի տուն մենք ունե՞նք, Աննա...

Հարկաւոր է գնալ։ Մինչեւ տաքսի ճարեմ, մինչեւ հասնեմ քաղաք...
Պահարանի դուռը փակում եմ անտուր մի տիրութեամբ, տիրութեամբ նա-
յում եմ հեռախօսի համը պլաստ-մասսային, նայում եմ լուսամուտից դուրս՝
աշնանային մաքուր, վէրքի պէս լուացուած՝ երկնքին։

Ձգիտես ինչու, բանալիներին խրժի մէջ բաւական դժուարութեամբ եմ
գտնում մօրս տան բանալին, թէպէտ, այդ բանալին միակն է, որ ղեղին գոյն
ունի, գտնում եմ, դանդաղ պտրտում փականի երկաթէ դադտների մէջ՝ եւ
այդ պահին զնգում է հեռախօսը։ Հանդիստ, անլուապ՝ բանալին երեք անգամ
պտրտում եմ փականի մէջ, յետոյ թեթեւակի հրում եմ դուռը՝ փակուե՞ց։
... Իսկ հեռախօսը համբերութեամբ շարունակում է զնգալ։ Երեւի Առաքելն
է, կամ մայրս, որին վերջապէս գտել է Առաքելը,

ՎԱՐԴԳԻՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ժ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՈՒՂՈՒՆՔ 2

ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱԹՈՒՂԹ

Մենք այսօր ՀՈՒՆ չենք:
 Բայց եղե՛ք եմք հռն: — Հեռու չէ, երէ՛կ
 Դեռ, մենք հռ՛ն է՛մք՝
 Մեր հողին վրայ,
 Ուրկէ մեզ փրցուց մարիկ մը կարմիր
 — Սուրի՛ եւ հուրի՛ եւ հեռի՛ մարիկ —
 Եւ նետեց մեզ զորջ ու չոր հողերուն,
 Որ ցրուած փշրանք
 Ու փռչի դառնանք,
 Փռչի՛ պէս ալ կե՛ր Ըլլանք հովուն:

Մենք հռն չենք այսօր:
 Բայց եղե՛ք եմք հռն, հողերուն վրան
 Մեր կալանաւոր,
 Ուրկէ մեզ քշեց ալիք մը մահուան,
 Որ ալ հռն չըլլանք,
 Թանգարանի մէջ դառնանք յիշատակ
 Մէկ հեֆիաթումակ,
 Կոչուինք երկիր մը յուշի եւ փուշի
 Եւ հին մշուշի:

Մենք այսօր հռն չենք:
 Զի կացիցի պէս ճեռք մը ապրիլեան
 Մեզ կտրեց ծառէ մեր պայծառանդ,
 Որ՝ առանց հազի՛ անարմատ չորմանք,
 Արմատները մեր մոռնանք,
 Մոռցուինք
 Որպէս հինցած գիրք,
 Մագէ ծագ
 Դառնանք մենք անբոյն կոունկ,
 Արաֆսի արցունք
 Եւ մարմնացեալ տուգ:

Ա՛լ հոն չենք այսօր,
 Այն սուրբ հողերուն,
 Ուր մենք, արդար տէ՛րն անոնց դարասօր,
 Մեր քահ ու բրիճով
 Դրախտ ենք քաղեր ամէն մէկ բարէն,
 Մեր դուր ու մուրնով,
 Մեր սուր ու գրչով
 Պատմութիւն գրեր ենք քրտինքի գոյն
 Եւ արիւնի գոյն,
 Մեր ամէն բայի կոխած տեղերուն:

Ո՞վ կ'ըսէ հոն չենք,
 Ինչպէ՞ս հոն չըլլանք,
 Երբ աշգ հողերուն վրայ, որ երէկ
 Մե՛րն էին, ե՛մ դեռ,
 Կան հայ ռաբերուն հետքերը անմեռ,
 Կան հայ խանութին բերքերը ոսկի —
 Աղբամա՛ր, Անի՛:
 Հոն մեր հովերուն մէջ երգերը կան
 Հայ հոռովելի
 Եւ հայ կարօտի վերքերն անդարման՝
 Կռուկի սրտին:

Հայ ծեռով հիւսուած բարերը կան հոն՝
 Ամէն մէկը գիրք կամ խորան կամ խաչ.
 Հայ քիրտով բուսած ծառերը կան հոն՝
 Այլեւս անկանա՛չ:
 Հոն դարե՛րը մեր, որ կը բնդան դեռ
 Պատմութեամբ հերոս,
 Հոն շարականի պէս մայրե՛րը մեր,
 Հաց ու հեփաքի պէս հայրե՛րը մեր,
 Նշխարքը որոնց կը բուրեն Նարդոս
 Եւ անմահութիւն:

Օ՛, մենք հոն ունինք ճրագներ մեռելալ-
 — Հայ սրտի քոցին եմ կարօտ՝ դա՛րձեալ
 Շողալու համար:
 Օ՛, հոն մոխիրներ ունին հայրենի.
 — Կրկին վառելու համար կը սպասեն
 Հրաշքի՛ն հայ շունչի:
 Հոն ցամաք զաշտե՛լ, որ հայ քրտինքին

Են ծարաւ, վա՛րդ-վա՛րդ ծաղկելու մարէն
 վազ վարդավառին :
 Հոն աւերակներ ունինք արքայուշ,
 Որ կ'ուզեն հայ միտք ու մկամի ուժ՝
 Շինուելու՛ն կրկին :

Հոն ունինք կորչած

Որք հայկականքու հոգին աղամանդ՝
 Ոտիկն գերի՛,
 Ունինք գահի պէս խաչեր կործանած,
 Հարսի պէս քաղուած լոյսեր մագաղաթ՝
 Թաքին տակ խազի,
 Կորզուած գանձեր, գողցուած գանձեր՝
 Գայլի կլափի՛ն կեր :

Ա՛հ, հոն ենք ձգած կէսը մեր քրտին
 Եւ Սփիւտ դարձած կէս սիրտով կ'ապրինք,
 Միայն կէ՛ս կ'ապրինք :
 Բայց կէս կ'ապրուի՞ իբրեւ կիսահայ՝
 կէս-ազգ, կէս-մեռեալ...
 Զի յոյս մնացած մեր յոյսերն հոն կան,
 Հայ հոգին ձուլուած Դա՛տը Հայկական,
 Որքնք պէտք է ա՛լ արդար յագեցան,
 Որ աղջագուրուն վառ ու նրբան,
 Ա՛լ գիրար գտած գոյգ եղբոր մեան :
 Հոն մեր կիսաւորտ երազն՝ըն հին,
 Որ պէտք է առնեն ա՛լ գոյն եւ մարմին,
 Հայա՛նք դարձունին,
 Իրենցմէ գառուած կէսի՛ն միացունին :
 Հոն կայ մեր ամուտ Ապրիլն ոգրի հոտ,
 Որ պէտք է դառնայ Մայիս մասիստ
 Եւ յարութեան պէս քուրէ յաղթութիւն :
 Իայ մրդկաշունչ
 Շաչն ու շառաչը մեր Պսեմանջմերուն՝
 Արաքսի համգոյն
 Եւ Հայ Իրաւանց
 Արգար բուցցիք կայ՝ Արարատի
 Պէս խրոխտ ցցուած,
 Ոտիկ աչքին,
 Աշխարհի խղճին :

Մենք հոն չենք այսօր՝
 Հողերուն վրայ մեր կանգնաւար,
 Որ մերն են անվերջ:
 Արմատները մեր սակայն
 Կը մնան
 Հոն մեր փայտերուն, մեր դարերուն մէջ,
 Երակներու պէս հիւստած հայ հողին,
 Մագիլներու պէս կառչած մեր հողին,
 Մասիսի կողմն:
 Արմատները մեր՝
 Արարատի պէս խորունկ եւ անխախտ՝
 Կը մնան հոն դեռ,
 Իբրեւ վառայ ծով, Սիւ աւ Ազքամար,
 Իբրեւ Կարս աւ Մուշ աւ Սասունի ծայր:
 Մեր արմատներն ո՛րք՝ այնտեղ մե՛նք ճանաչ,
 Սոսկ շուքով քէն:

Եւ սակայն հոն չենք,
 Հոն, ուր դարերով, արեգակին տակ
 Հայ ազատութեան,
 Շնչեր, շէնքեր ենք որպէս երկու Հայք,
 Ուր շողացեր ենք մտքի դարութեամբ,
 Սրտի բարութեամբ,
 Ուր շառաչեր ենք բազկի արութեամբ,
 Ուր շափեր ենք մենք եւ նո՛րէն շատցեր
 Հազար յարութեամբ:
 Բայց — կը հաւատա՛նք —
 Մեր մեծ Աստուծոյն ճշտով անսայթափ
 Եւ մեր Մասիսին անուանով ճերմակ,
 Օ՛ր մարդարութեան, ո՛ր մը հասուցման,
 Մենք, ա՛զգ սփռաւեան,
 Պիտի ըլլա՛նք հոն, կրկին հա՛նք ըլլանք՝
 Կրկին յաղթական տէ՛ր արարատեան,
 Հոն պիտի ըլլանք մեր կեանքի համար:

Ու վահագնաբար,
 Հողերուն վրայ մեր մոխիր ու խաւար,
 Ընդ եղեգան փող ա՛լ պիտի բացուի
 Նոր արշալոյսը անկախ Մասիսի,
 Մեր մեծ Երազին եւ Յոյսին վրան
 Արշալո՛յս հասի,
 Դրօշին տակ Հայ Ազատագրութեան
 — Կեցցե՛ք Հայաստան...

ՈՒԼՈՒՆՔ 3

Մ Է՝ Կ

Ե Ն Ք

Մ Ե Ն Ք...

Բազում շարժում եմ մեմ Գաղափարի,
Մեռու հերմակի պէս մերթ իրարու

Նս'յնիսկ քշեամի:

Բայց

Էջմիածնի խորանին դիմաց,

Բայց

Սուրբ Թարգմանչաց Մատենանիմ առջեւ

Աստուածապարզեւ,

Մեծարդեան լեզուի աւարտանիմ մէջ,

Մեմ մէ'կ եմ, հայ եմ:

Իրարմէ անկախ՝

Կղզիներ եմ մեմ մէկէ' աւելի,

Սկիւտի ծովուն մէջ աղէտալի:

Բայց

Քաջ Վարդանանց հրաշքին դէմ բոց,

Մեմ կամբջուած սուրբ յուշովն անոնց,

Կ'ըլլամ մէ'կ զանգուած

Աշխարհատարած:

Թէեւ պամդախտի նայն ճամբով կ'երթամք,

Ձերար չեմք ճանչնար՝

Որպէս ըլլայինք իրարու օտար:

Բայց

Երբ մեր դիմաց

Կը ծագի Մասիսն արպէս լուսարաց

Մեր մեծ նրազին,

Հայրենակարօտ մէ'կ սիրտ մեմ կ'ըլլամք,

Մէ'կ ազգի զաւակ:

Ուծեր եմ անգատ,

Խուճը-խուճը հովեր եմ,

Երբեմն իրարու նոյնիսկ հակընթաց,

Որով քանդէր եմ մեր տունն հարազատ,

Մեմք՝ վասա'կ խաբուած:

digitised by A.R.A.R.@

Բայց
Սարտաբաղատ
Կրակին դիմաց՝
Մեմբ միանակատ
Մեմբ կը խտանամք ռուսի մը մէջ մէկ,
Մեմբ կը մէկանամք
Կռուքի նման
Եւ կ'ահարեկեմք
Թուր-կայծակի պէս:

Քէն աւ նախանձի պատերով զատուած
Գաց հատուածներ ենք նսի խմբական:
Բայց
Նահատակաց Օրը տպրիլեան,
Թուրք դաւն յիշելով,
Մեր ցամ յիշելով,
Կը մոռնամք ամէն պատեր բաժանման,
Հայ Լացի Պատին առջեւ՝ կը դռնամք
Մէկ բողոքի կանչ
Փոքորկանման,
Մէկ համք, մէկ պահանջ
Բռնեցճանման
Եւ կ'ըլլամք ամէն ծագ ու գաղութէ
Խմբուած, դիզուած մէկ թունգ Արարատ՝
Ոսոխին առաջ:

Երգչախումբ ենք մենք ճայներով խառնակ,
Թէեւ ճա՛ն տրտիմ ունիմք հայերգակ՝
Հազար կարծիքի տակ:

Բայց
Երբ կը լսենք կռունկն հայասրոփ,
Նաւ լանք մէկ կարօտ,
Կ'ունենամք մէկ վերք,

Բայց
Երբ կը տեսնենք Երեւանը բոբր,
Կ'արտասանք մէկ երգ
— Կեցցէ՛ Հայաստան...

707-4000

ՈՒԼՈՒՆՔ 4

ՄԵԶԻ՝ ՀԱՅ Կ'ԸՍԵՆ...

Մեզի՝ հայ կ'ըսեն:
 Մեծկակ հող մը չենք, մեծ քիւ մըն ալ չենք.
 — Բայց Արարատ ենք,
 Աշխարհի սրտին ուսմբի պէս ինկած՝
 Պայթումով յդի՝:
 Սերմ'նդ Մասիսի՝
 Հայ կ'ըսեն մեզի:

Մսկ հող ու հացի ժողովուրդ չենք մենք.
 — Էջմիածին ենք՝
 Երկմէն իջած սիւնի պէս լուսեղ:
 Մ'ենք՝ ծնունդ լոյսի,
 Հայ կ'ըսեն մեզի:

Թագով ու գէնով աշխարհակալ չենք.
 — Սահակ-Մեսրոպ ենք,
 Գրիչը ջահած Աստուածաշունչով:
 Եւ Այբուքենի գինւած փամփուշտով:
 Զինուո՛ր Մաշտոցի՝
 Հայ կ'ըսեն մեզի:
 Սատահայ Ռոժին դէմ պարիսպ չունինք.
 — Բայց Վարդանանք ենք,
 Մեր սրտին՝ երկի՛նք:
 Մենք Տէր-Զօ՛ր դարձած՝ վասըն Յիսուսի,
 Ա՛զգ մարտիրոսի՝
 Հայ կ'ըսեն մեզի:

Ո՛չ վրէժ ունինք, ո՛չ ռնրագործ ձեռք.
 — Սարտարապատ ենք,
 Մեր շունչին համար՝ մեր շունչը օրհաս
 Փոքորիկ ըրած:
 Մենք ճառագայթա՛ւմ Քսանութ Մայիսի,
 Սերմ'նդ հերոսի՝
 Հայ կ'ըսեն մեզի:

Մենք գրախտ չունինք՝ այլ քարաստամ խենթ,
 — Բայց երեւան ենք
 Աղամանդեղէն՝
 Զիրքով, քրտնքով ու կիրքով կոփուած:
 Փառքովն Մասիսի՝
 Հայ կ'ըսեն մեզի:
 Դեռ մեր պապենի
 Բոյնը ամփոփուած լմամ երամ չենք.
 — Սփիւռք ենք փրկիկ,
 Բայց արեւուն պէս՝
 Աշխարհ գրաւած:
 Մենք վերընծիւղով յարուցեալ յայսի՝
 Հայ կ'ըսեն մեզի:

ՈՒՎՈՒՆՔ 5

ՓԱՓԱՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Մեր արեւուն ծագէն ի վեր,
 Մենք շինելով ենք սկսեր
 Մեր կենսաւորն:

Շիներ ենք Հայք լեռնաշղթով՝
 Իբրեւ դափնի
 Հայկի յաղթող պարսաստիկին,
 Կռիւն ենք յաղթ էրէքունի՝
 Որպէս պտուղ մեր քրտնէփն,
 Կանգնել ենք ժող իջմիածին՝
 Որպէս մարմին
 Աստուածաւաք մեր Տեսիլքին,
 Ոսկեհիւսեր ենք Ոսկեդար՝
 Իբրեւ ոսկի ճառագայթում
 Մեր երկնածին Ոսկեղնիկին,
 Զուլեր ենք մենք հազար ու մի
 Զանգով Անի՝

Որպէս վկայ
 Կառուցելու մեր խենթ կիրքին,
 Քարահիւսեր ենք Աղբամար՝
 Որպէս նշան մեր գիտարար
 Համար-ձիւրքին,
 Քանդակներ ենք Զուարթնոցներ
 Գոհարեղէն՝

Իբրեւ պատկեր
Մեր հաւատքի վառ երկմէքն,
Բաներ ենք մենք մարգարտաշար
Նաբեկարան՝

Իբրեւ ճկար
Մեր հոգիի փոթորիկն,
Մենք կոթողներ ենք նշանակում՝
Իբրեւ ցայց մեր գոյատեւման
Երաշխիքն,
Բարձրացուցներ ենք Բիրական՝
Որպէս արձան
Մեր գիտական ուժ ու միտքն,
Ժայռափորներ Արփա-Սեւան
Հրաշագան՝

Իբրեւ ապացոյց
Աշխատելու կամք ու ճիգն
Մեր տիտանեան

Եւ չափամիշ
Արարչագործ մեր գործիքն,
Միջիւ անգամ — ափսոս՝ հագար —
Շիններ ենք մենք մահաբաժաններ՝
Իբրեւ յուշարար
Մեր Ապրիլեան արհաւիրքին,
Թուրք Զարիքի՛ն...
Եւ դեռ ինչե՛ր ենք մենք շինք՝
Ու տա՛կաւին չենք աւարտեր
Շէնքերը մեր երազներուն
Ու Գալիլէին:

Բայց մենք, քէն կառուցարար,
Երբ վերջապէս զայլ օրն արդար,
Որուն փայլին ու պայթինքն,
Թունդ կը ռալսենք,
Մեր կեանքին մէջ գէթ մէ՛կ անգամ
— Հայտնի փոփոխ —
Լսկ մէ՛կ անգամ
Կուգենք Բանդի՛չ ու Բանդարա՛ր
Հլլալ անգութ եւ անգգամ:

Երբ զայ այդ օրը ներածագ,
Խաղաղարար ու շինարար
Մեր պայքարին իբր յաղթանակ,

Մեր վրէժին իրք յագեցում,
 Մենք՝ դարերով դիզուած գինով
 Ըմբատութիւն,
 Մենք մրրիկի ներխուժումով
 Ու խուժողութեամբ,
 Պիտի կործենք ու կործանենք
 Մե՛ր իսկ շինած
 Կոթողները աւգ ու մահուան,
 Պիտի ժանգոնք ու խորտակենք,
 Փշրենք անհետ՝

Մե՛ր իսկ կանգնած
 Հացի Պատերն համատարած,
 Յուշարձանները Ապրիլեան՝
 Պիֆֆայեայէն
 Մինչեւ Սաղէմ, Ծիծեռնաբերդ,
 Մարսիլիայէն
 Մինչեւ Զիլի, Մոնթպելիօ:
 Ու ի վերջոյ,
 Վիշտի, մահուան ու պարտութեան
 Քարերն իսկ նոյն փոխենք պիտի
 Լոյսի, կեանքի, յաղթանակի
 Նոր ժարերու:

Իսկ ասանցմով
 Ու նո՛յն կիրճով, նո՛յն տեղիքով,
 Նո՛յն քրտնաքով,
 Նո՛յն գործիքով,
 Պիտի նորէն մենք նաւարկենք,
 Մեր կորուսած,
 Վերագտած,
 Մեր հատուցուած հաղերսն վրան
 Պապեմական
 Պիտի նորէն կառուցանենք
 Կրկին Միացեալ դրախտ Հայաստան...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

(Մնացեալը յաջորդող)

Ն. Գ Ւ Մ Ա Ք Ս Ս Ա Ն

Ա Ր Ե Ա Ն Կ Ա Ն 2

Լարիսա Կորուք:
Ուկրաինացի. քրիստոնեայ:
Շաքանակազոյն մազեր, մեղրազոյն աչքեր:
Տասնեւութ դարուններ:

Շարժումներուդ մէջ տասնեւութ դարուններուդ խալտանքը շալկած,
հայ սփռւլ հողիւ աւարտած, մարմինիդ տմբողջ յուռութքը առատածեռնո-
րէն եւ առանց ակնկալութեան յանձնելու անդիմադրելի պահանջին ունկնդիր:
Ընծայարբերումի անխուսափելի մզում:
Արեան կանչ:

Այդ պահուն, Լարիսա Կորուք, ամէն, ամէն ինչ ճիշդ կը թուի: Շատ
խորբրէն եկող արեան կանչն է տիրապետողը, հաճելի բռնակալը, որուն ձայ-
նին ունկնդիր՝ աշխարհը ահա սեղմուած է այդ բազառիկ պահուն մէջ եւ
այդ պահը հակատաղրով նախասահմանուած մեծահարուստ անխուսափե-
լիութիւն մը ունի: չքեղ հարսանիք, որուն մէջ եւ ոչ իսկ յաջորդ պահը,
ժամանակը արժէք ունի: Շանթահարումի մը աղջեցութեան տակ ամբողջա-
կան տուչութիւն, խորհրդաւոր պատգամի յանձնաձում, ընծայարբերում:

Եւ թերեւ այս կանչն է, որ, Լարիսա Կորուք, քեզ մղեց տունէն հե-
ռու, շատ հեռու տեղ մը, ուր, ծանօթ նալուածքներու յամառ հսկողութե-
նէն դուրս, տասնեւութ դարուններդ յանձնեցիր պատահական մէկուն:

Այդ ի՞նչ է, ի՞նչ, որ կ'այլապէս մարդ արարածը:

Ո՛րվ ըսաւ, Լարիսա Կորուք, որ ընծայարբերումի մղումը բանական ու-
րոշումի մը մէջ պէտք է նուիրադործուի: Բանական վճռականութիւն, որ
էութեան մղումներով առաջնորդուելու փոխարէն, դուռ կը բանայ փաստաբ-
կելի հաշուարկումներու:

Շանթահարումի անձկութիւնը, ընտրութեան նախանձախնդրութիւնը,
ընծայարբերումի բո՛ւն ողին կը չքանան եւ այլասերումի, վատասերումի եւ
ծինապղծութեան պատճառ կը դառնան:

Անասունն անգամ շանթահարումին կը սպասէ: Երկա՛ր որոնումներ,
անկիւններու վրայ ըստ ըստ գուրգուրանքներ: Մաքրազնին խուզարկու-
թիւն:

Անասունը, բծախնդիր նախանձախնդրութեամբ, սերմերը պատահական-
նութեան հողմին յանձնելու խուլ պատգամի մը ունկնդիր, կ'ընտրէ:

Յունական բղիխոն ո՞ր խմստասերութիւնը քուրմերուն ողջակէջ

հայթայթեց. քրիստոնէական ո՞ր որդունութիւնը հայ աղջիկները ամպարապէի բարձունքներէ փրփրերախ գետերու հոսանքին յանձնեց : Ընծայարեւում էր, այո՛ւ : Եւ խեղճուկրակ տրամաբանութիւնը անոնց ըսած պիտի չըլլա՞ր, որ կեանքը դեղեցիկ է, որ վայրկեանի մը բանականացած վատտեղումը լուսաւոր կեանքի մը հետանկարները կը զծէ, որ այդ պահը, այդ պահ՛ը՝ ընտրութեան պահն է :

Եւ եթէ ընտրութիւնը կատարուէր ուղեղի հաշուարկումներով, ո՛չ գուրմերը իրենց ողջակէզները կ'ունենային, ո՛չ փրփրերախ գետերը հայ աղջիկները կը տանէին...

Եւ այդպէս լա՛ւ կ'ըլլար :

Եւ, Լարիսա Կորուք, դուն ջեզ, ընծայարեւումի մզմով, բայց բաւականացած բթութեամբ յանձնեցիր այդ պատահական անծանօթին, տունէդ հեռու, լա՛ւ հեռու տեղ մը : Եւ այդ անծանօթը ողջակէզեց, խոշտանգեց ջեզ. ջեզէն խլեց աղջկանութիւնդ, բայց նաեւ ջե՛զ, իբրեւ կին, անպէտք դարձուց :

Անպէ՛տք՝ տակաւին անծին :

Այն ատեն դուն չէիր գիտեր ջեզ մղույ արեան կանչին որակը, տեսակը : Հաւանաբար դեւ չեա գիտեր :

Բայց երբ փողոցները հանդիպիմ քու ուռած փորիդ, խելագարի քաւած ջիւղ, կարմիր ալյուրուդ, կը մտածեմ այդ որակին եւ տեսակին մասին :

Եւ երբ երկար, լա՛ւ երկար գիրկըդխառնումէն ետք մեր համբոյրները հաղցան եւ հնդկական ծխացող անուշաբոյր ինքնախի կարմիր կայծը շփեցաւ, դուն գանդաղօրէն մերկացար եւ, ձեռքդ երկարելով՝ գիտ ընծայարեւումի տաճարը տարիր :

Ուրիշներ կրնային հանդիպած ըլլալ մինչ այդ : Բայց դուն ըսիր, որ այդ առաջինէն ետք առաջին-առաջինն էի : Եւ դա՛ւն, իբրեւ կին, ինծի տալիք չունէիր : Գոռանքի պէտք ունէիր. ակնյայտ էր : Փոխարէնը՝ ինծի կը պատմէիր Ձինաստանէն բերուած նարինջներու եւ հեռաւոր երկիրներու թախիծին մասին :

Եւ խելագար ու անծին սիրելի մըն էիր դուն, զոհարեւումի սեղանին ընծայարեւումը սրտիդ, տուչութեան եւ անոր մերթումին անդհանքը կուրծքիդ : Ծա՛լ՝ ի՛նչ : Մոնկոյները Ձինական Պատին գիժաց հաւանաբար երկա՛ր կեցան եւ խորհրդան ալպէս : Ծալո՛ւ, թէ առնելու համար եկած էիր : Եւ այդ նորին հաւասարակշռութենէն վեր եւ անոր դիմաց, ծինապղծութեան եւ սլլասներումի արգելք՝ պատ մը չէ՞ր ցցուած անոնց դէմ :

Բայց մենք ազատամիտ էինք այն ատեն ու ազա՛տ : Սիրոյ, համերաշխութեան, գուրդուրանքի ու անձնատուութեան դէմ ցցուած բոլոր պատերը շանդել կ'ուղէինք այն ատեն : Ի վերջոյ, զարգացած էինք եւ յուշական քաղաքակրթութիւն կը ծորէր մեր բլիթներուն իւրաքանչիւրէն :

Այնպէս որ՝ չինական նարինջներու, հնդկական անուշաբոյր ինժեներ եւ հեռաւոր երկիրներու թախիծին օրօր-նրազանքին յանձնեցինք մենք մեզ եւ մեր օրերը թաւալեցան ալպէս :

Գետին աղմուտ ջուրերը զահալէժ ինկող աղջիկներու պատկերը կը պղտորէին անդադար, որովհետեւ Ձինաստանի մերթումի Պատին եւ չինական նարինջներ ուսելու կարելիութեան միջեւ, լա՛ւ երկար ժամանակ անցած էր :

Որովհետեւ, տեսակէր:

Պատահաբար գիտցայ:

Մերանոց-անկերանոցին մէջ, մեծ մայրդ մեզ բնորոշեց լայն բացուած աչքերով: Նմանութիւնը ակներեւ էր: Նոյն այտուկները, նոյն մոնկուական տափակ քիթը, նոյն նշածեւ, երկարաւուն աչքերը:

Սնկողներն կողքին, այդպէս, պատահականօրէն ձգուած սրբաբանաց Գոյրամ մը: Խօսակցութիւն անդրերէնով՝ առողջութեան եւ օդի մասին:

Լարիսայի բացակայութեան մէկ պահէն օգտուելով, թրքերէն բառեր խառնեցի անդրերէնին: Նախ պատասխանեց, յետոյ վարձացած երեսիս նստեցաւ:

Մտքիս մէջ Կորուք մականունը փայլատակեց յանկարծ: Կարուք:

Եւ ամէն ինչ յատակ էր արդէն: Հայ աղջիկ մը դահաւիժ նետուեցաւ օդը բարձունքէն: Աչքերովս հետեւեցայ անկումին, ջուրին հետ մարմինին առաջին շփումին, ճողովիւնին եւ ստեղծուած օղակներուն, հագուստին ծփուլուն: յետոյ, ջուրին մէջ անհետանալուն: Յետոյ ուրիշ մը, նոյն մանրամասնութիւններով: Յետոյ ուրիշ մը, ուրիշ մը:

— Լարիսային բան մի բտեր, — կ'ազդարարէ մեծ մայրը, — միշտ կարծած է, որ ուկրաինական ծագումով քրիստոնեայ ուղղափառ եկեղեցւոյ զաւակ է:

— Ինչո՞ւ, — կը հարցնեմ եւ ժայնիս մէջ զինչուսին կրկնակ իմաստը կ'արձագանգէ:

— Աղքատ էինք. դպրոց պէտք է զրկուէր. ամէն պարագայի, երկար պատմութիւն է:

Ձիւ անշուշտ կը հետաքրքրէր լուծումը այն տաղանակին, որ ընծայաբերում անունը կը կրէր. պատճառը անոր մզումին եւ անոր բանականանալուն: Անշուշտ, նման այլաներումի հանդիպած էի, տարինէ՛ր առաջ, երբ Եղեռնի յիսնամեակի տօնակատարութեան, բաց դաշտի դոց գլուռներուն ետին հակողութիւն կ'ընէի:

Կին մը զարեւէն խաշեցանք՝ ըսաւ. ուրիշ մը ուզեց գուրս ելլել: Անպատշաճ, արեւը, ծարաւն ու անօթութիւնը, անհետանկար արշաւը ուրուներու եւ ուրուականներու այդ տափաստաններէն, կծախք, արբիւն, արեւ, յօշոտած մարմիններ եւ՝ զարեւէն խաշեցանք: Եղեռնը ռզնկուղէլու մզումը կայ — ընծայաբերում — բայց զայն իր էութեամբ վերապրելու փոխարէն չոր, թիւր, մանագիտացեալ տրամաբանութիւնը, ա՛յս պահու, ա՛յս անդի տրամաբանութիւնը՝ զարեւէն խաշեցանք:

Եւ հազարապատիկ աւելի մաքուր, աւելի կենդանի, աւելի բնազդական այդ միւս մզումը, որ առնուազն բուժ վայելչութիւն մը ունի, պարուրուած խորհուրդով, որուն թափանցելու միակ ճամբան հիսուար կամ զոյս՝ հաւատքն է: անխուսափելի նուիրագործումի հրամայականը, որ ոչ ոքէ կու վայ: Կու գայ ներսէն, խորերէն: Բայց արդե՞՞ք բաւարար է: Գոյութիւն չունի՞ ախտ մը, որ դարձեալ ներսէն, խորերէն կու գայ, բայց նոյնքան կը վատասերէ, կը քանդէ վայելչութիւնը պահուն:

Սեւամորթներու այդ քաղաքի նորակապ ճշգրտակցութեան մէկ բաց ժողովին ենք: Մեզ, իբրեւ սպիտակամորթ, այդ ոլորտի հերկրորդ կարգի քաղաքացի, նստեցուցին սրահին նստելու թրեմք, խորականութեան զոհները, առջեւ նստեցան: Մեր պարտականութիւնը յստակ էր. ճշտականութեան դիմաց խաբականութիւն պատգամը տանիլ մեր սպիտակամորթ բարեկամներուն:

Ճառեր. կազմակերպական մտահոգութիւններ. ուժերու մէկտեղում. տնտեսական հզօրանք. ամէն, ամէն ձեռի պայքար խտրականութեան եւ բրոնտաւրութեան դէմ. արիւնահեղութիւն, սրբազան արիւնահեղութիւն՝ ի պահանջել հարկին. եւ զոհարարում. եւ ընծայարարում:

Ատամներու կծրոց, զայրացկոտ բացազանչութիւններ, կրակոտ, վերէփնդիր նայուածքներ՝ ուղղուած եսեւ:

Եւ յանկարծ, շինական նարինջներու եւ Ձինական Պատին միջեւ, Լարիսա Կորուք, նայուածք տեսայ: Անտարակոյս նոյնացած էր պահուն հետ. աչքերդ նոյնքան բարկացայտ էին, նոյնքան կատաղի վրէժխնդրութեամբ լծուած. դո՛ւն սեւամորթ մըն էիք, ատելութեամբ լեցուած բոլոր, բոլո՛ր քղի-տակամորթներուն դէմ, բոլո՛ր անոնց դէմ, որ անարդարութիւն եւ խտրականութիւն կը ցուցարարէին: Եւ դուն նոյն ատեն խտրական դիւք կը ճշդէիր:

Քմծիծաղի նմանո՞ղ արտայայտութիւն մը սահեցաւ դէմքիս վրայէն եւ դուն նկատեցիր:

Արդ, այդ պահուն, բազմաթիւ ճիւղաւորումներով կ'ընթանար մասծումս: Առաջինը ապարդիւն հռետորութիւնն էր բեմէն եւ նայուածքներէն փոխանցուած: Կարծեմ այդ էր: Բեմասացին մէջ եւ կը տեսնէի բազմաթիւ տարիներ, բեմերէ, ինծի եւ թերեւեւ իցներու փոխանցուած պատգամներուն ապարդիւնութիւնը: Գրեթէ նոյն բաները ըսուած էին անդադար: Նո՛յն ոճով: Նո՛յն կրակով:

Միեւնոյն ատեն, կարծեմ, տրամաբանական թուելու նոյնքան ապարդիւն ձիւք մը կար: Ընծայարարութի մղումին բանականութիւնը: Շրջուած, ասորօրինակ բան մը կար այդ ամէնուն ետին:

Եւ քու նայուածքդ, Լարիսա Կորուք, յաւելեալ թելադրանք մը կը յուշէր: Կնութեան անբաւարարութիւնէն մղուած, այդ պահուն, ընծայարարութիւն նոր մա՞րդ մը կ'ընդդրկէիր: Մաքովդ կը վսեմացնէի՝ քիթիս առաջ, ատելութեան սերմերը: Այո, Ձինական Պատը պէտք է քանդուէր եւ այդ անդամ յատակօրէն, ո՛չ թէ տալու, այլ առնելու, խրելու, յափշտակելու համար:

Արիւնարբու բան մը կար նայուածքիդ մէջ, Լարիսա Կորուք, արեւ-նարբու, գիշատիչ, քանդող, աւերող:

Ու ազնիւները զարձակ մէկ-մէկ կը զահալիծէին անպարագիծ բարձունքներէն: Կը տեսնէի ազմուտ դետին հետ անոնց մարմիններուն առաջին չփումը, ճողփիւնը, ստեղծուած օղակները, հազուաթի մը ծփալն ու անհետանալը. յետոյ, յետոյ, յետոյ՝ նո՛յնը:

— Ի՞նչ էր այդ քմծիծաղը, — հարցոցիր:

Դարձեալ ժպտեցայ:

— Սիւնիք ես, — ըսիք վերաւորուած, — այս մարդոց տառապանքը ոչ մէկ լար կը թրթռացնէ մէջդ:

Ինչպէ՞ս խօսի վահալիծ ինկող ազնիւներուն, ընծայարարութի իսկական իմաստին, հռետորութեան յոգնած ըլլալու մասին: Եւ քու եւ ուրիշներու հոգեբանական ու տրամաբանական վատասերութիւն մասին, Լարիսա Կորուք, քու ախտաւոր երկուութիւններուդ մասին: Երկուութիւններ, որոնք շինական նարինջի ու հեռաւոր երկիրներու թախիծ պատումները կը փոխարինեն Ձինական Պատին փրփումով:

Իսկ ես տակաւին կը մտածէի Պատի եւ նարինջի անկարելի հաւատարմակութեան մասին եւ արդեօ՞ք ամբողջական ու վատասերութի փսեմացումը կը կատարէի այդ ձեւով: Իսկ դո՛ւն, ամո՛ւլ սիրելիս, անկէ փախուտ տալ կը փորձէիր:

Ընդգծեցուցիչը, Լարիսա Կորուք, կարծեմ, այդ ամբողջական հետ կընթերստ հաշտութեան սինիք, խաղաղ ժպիտս էր: Կոտորելու, փշրելու, քանդելու, դադարած գետի պէս յորդեկու փոխարէն, այդ վստահամբաւ անձնատուութիւնը նարինջի համախաբհային օրօրանքին, որ օրէ օր կը մաշեցնէ, կը մաշեցնէ:

Ս', այդ օր, որքա՞ն ատեցի ես գիտ:

Եւ, երբ, Լարիսա Կորուք, ժպիտէս բարկացայտ առիթ-քալեցիր, չհետապնդեցի քեզ: Վերադարձար անշուշտ: Բայց այլեւս տղձուտ գետին հզորին մէջ յանձնեմը չեմ: չէին կրնար ըլլալ: Դուն քեզ եւ նարինջեկը կը փշրէիր պատերու գիմաց. ա՛յդ էր ընծայարեբումի նոր եղանակը եւ ծո չէի կրնար քեզի հետ հաղորդակցիլ այլեւս:

Մղումներուդ բուն պատճառը հաւանաբար երբեք չգիտցար: Քեզ քանի մը անգամ տեսայ սեւամորթի մը ընկերակցութեամբ եւ յետոյ իմացուցին, որ ծանրօրէն հիւանդացած ես:

Հանդիպելու՝ ուրախութիւն չկեղծեցիր: Պատին դամուած նայուածքդ պատասխանը ուրիշ տեղ կը փնտէր: Սեւամորթը այլամերժ ձղած էր: Յօսած՝ չողեկաւքի գիծերուն զոյգ կողմերուն տիրող աղտոտութեան, աղքատութեան, անօթութեան ու զրկանքին մասին: Յօսած՝ հաւասար մարդ չկարենալ ըլլալու անձկութեան մասին: «Արդահատանքիդ պէտք չունիմ»: «Եւ խնդրեմ, ի՞նչ է արդահատանքի եւ սիրոյ տարբերութիւնը»: Բայց արդահատանքը յարգանք է, եւ յարգանք կարելի չէ կեղծել: Աչքերը կը մատնեն: Աչքերը կը մատնեն, մա՛նաւանդ՝ երբ ցեղային կանչով տարբեր սերմեր տարբեր հողմերու յանձնելու ընտան: Ես:

Եւ հիմա, չմոռած աչքերդ պառ պատէն պատասխան կ'անկալեն: «Mirror, mirror on the wall»: Ինչպէ՞ս ընծայարեբեմ, որ ճի՛շդ ըլլայ, որ ընդունելի ըլլայ:

Կը պնդես դուն քեզ, բայց այդ բանալին մեծ մայրդ հաւանաբար երբեք չփոխանցեց քեզի: Լայն բացուած մոնկու աչքերով մեծ մայրդ, որ Գնալան կը կարդայ եւ ճու ծագումը ուկրաինական է կ'ըսէ:

Կը պնդես դուն քեզ... Կը պնդես դուն քեզ եւ նայուածքդ ոչինչ կ'անկալէ ինձմէ:

Յիմարանցին մէջ, քեզի կեղծ յղութիւն պարզեւող թմրեցուցիչներ սրկեցին: Հիմա, փողոցներուն մէջ, ծանրախոհ իմաստութեամբ խոչոր փողը կը պտտցնես: Այտերդ միշտ կարմիր կ'ըլլան ցուրտէն, տափակ քիթդ ալ: Աչքերդ, թմրեցուցիչի աղդեցութեան տակ, միշտ հոռուեցիր կ'որոնեն: Վերջին անգամ քեզ անսայ Հարէ Փրիշնա աղանդին յատուկ խուրձեր հաղած: Վերջին ճիւղ մը թերեւս կամ ճիւղերու շարանի մը մէկ օղակը, յաջողեցնելու համար անկարելի պատի մը քանդումը: Եւ Ջինական Պատը պէտք է քանդուի անպայման, որպէսզի Հարէ Փրիշնաներու երանութեան թափանցեալ, որպէսզի նարինջները համեղ ըլլան:

Իսկ տաք տափաստաններու կիզիչ շունչը, խաշնարածներու քրտնքին բարկ հոտը, հեռուոր անկիւն մը գողցուած համբոյր մը եւ ընծայարեբումը, բո՛ւն ընծայարեբումը քեզմէ անվերադարձ իլուած են այլեւս: Կ'ենթադրեմ:

Ն. ԴԻՄԻՔՍԵԱՆ

ԴԻՑԱՅՈՒՇ ՏԵՆԴԵՐ

Դու՛ն երագն ես, որ պիտի գաս
արդարութեամբ եւ պայծառի ճանապարհով,
ընդելուզած բարտիմերուդ մեղեդի՛ն՝
կապոյտ երգին առասպելի...:

Դու՛ն երագն ես,
գոր կը պահեմ մեարդներում հաւատքիս,
կեանքի բոցով հումաւորուած
խորհրդանիշն իբրեւ կամֆի
եւ դարարոյր ոգորումէդ կտակուած
իբրեւ աւանդ սրբազան,
որուն շունչով կը ներգգամ հուրն առկայծ՝
համայնաշող աւանդներու երայրքին...:

Դիւցազնութիւն վրիժախանձ,
մակատագրի զարկերուն դէմ դաւադիր
մահառած եմ քեզի հետ,
պահած սրտիս՝
հաւ զոյակից մարտնչումիդ
համակ ոգին կենսագործ:

Քեզ եմ կրած
ներգոյակից ցաւերուն հետ արիւնիս՝
իբրեւ տարերք հրաւիրող.
Քեզ եմ շնչած
ներսնայեաց սպասման հետ երագիս՝
գերք թերկրայայտ նաւասարդ.
Երգած սէրդ,
երգած վիշտը հաւ հրաշիք՝
տենչանքներու երկաթագիր հեծութեամբ:
Լճաղկայնացած ես իմ մէջ
տառապանքիդ հետ հզօր
եւ դիւցազնի անիւնովը հաւ սրբացած՝
դարձած ամայք փշածաղկ,
դարձած անայց շիրմաքար,
այլ հրազօր կենդանութեամբ պատարուն՝
դարձած ծաղկունք լուսնդէն,
ագեշնչման դիցամորմոք իմացում...:
Պափմեկարդն ես հաւատքիս,
մշտանորոգ՝ ինչպէս ծրօն ժամանակի,
եւ բուրբան՝ ինչպէս խորհուրդն արարչագործ:

Դու՛ն երագն ես, որ պիտի գաս
կարօտներու կածաններով սեզապատ,

գրկած խոստումն օրհնաբեր՝
շնորհներուդ դիցարոյր...:

Քեզ կը պահեմ
յորձանուտին մէջ ցաւիս,
յորձանքին մէջ իմ խնդութեան՝
կըսեսի պէտքս թախտահոս, ե՛ւ ծիծղում.
եւ օրօրներ կ'արտաշնչեմ՝

ըստ երազիդ,
հանգանակներ կը յօրհնեմ՝
ըստ կերպարիդ.

ես կը փարիմ անունիդ
բնագոյշին իմ բազմաբնոյ թաղեղով.
բնագոյշին իմ երկունքով եղէգնաբոց,
դիւցազնութիւն վրիժախանձ,
նատագայթներ ես կը կորզեմ
անդունդներու մէջ քարացած
ժամանակի երաքոտը ապրումներէն
եւ կորուսեալ շղիներուդ շշուկով՝
ես կը բաճայ հազար ուրիշ դեռ անկողիս՝
ուրիշներուդ մթամբով.

դիւցազնայոյշ տխրահեղներուդ
արեւագալն երկնելու...:

Կը տառապիմ լսել քու սիրով
դարերու հետ,
դարերն ի վեր.
կը պայքարիմ լսել քու նամբով
հողմերու դէմ,
հողմերն ի վեր.
կ'անագնանամ լսել քու նամբով
պայքարի հետ,
պայքարն ի վեր,
որ ծաւալիս գոյտտեւման յայտի պէտք
եւ ոգորիս վաճաղակներդ յայտնութեամբ,
պարագրելով ինչն այն կրկնէ,
որուն մամուստ ծախսոյրին
հայրենատրոփ հագար տեղիք կը ձուլուին:

Հրահոսիս արմատներէն քու էութեամբ
զերթ արեան կանչ,
արեան մարմնէ,
արեան բազուէ, շնորհաձայն
եւ արձակես դարերու խոյլ հեղեղներն՝
բոմբիւն մը՝ սլաքեւ խոյանք,
պայքար մը՝ երաթեւ դափնի...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

8. Օ Շ Ա Կ Ա Ն

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Ուրացաւ զինքը պահող կաթմակերպութիւնները, տեսլայլ ու բարի, ցոյց տալու համար մասնական ազատութիւն մը լրտեսրու վայել, որոնք տեսեր էր Լոնտոն, ու թքեր երեսնուն: Ու նոյնքան բարի, տեսլայլ, անցաւ տրամադծորէն հակառակ հոտանքներու, հաւատարմաւորութեամբ մը, տեսլայլաւորութեամբ մը անցեալէն, ինչպէս ներկայէն: Ան էր, որ զիսկը շահագործեց զաղափարի ընկերոջ մը, զոր ուզեր էր իրեն վայլող կանտնէ առեւտրութեամբ, ամէն տեղ յարձակելով անոր ստորագրութեան, ինչպէս կուսակցական, յեղափոխական գործին ու դատապարտելով անոր գրական անուանալի տաղանդը իրեն ընտանի, անողոք, կործանարար դիւանակը, չվարանելով Երկրորդի տեսր թշնամիներէն չըջարեւորած ստրատանութիւնները, զթուրքին ծախուած յայտարարելով զայն ու... անոր զիսկին վրայ հիւսելով ամէնէն չքող անգլաֆոն: Յեղափոխական այս փոխադարձ փողոտանքները արդիւնքն էր նմանեցումն թէ այդ մեղադատու հոգեկան ոլորտն է պատճառ անոնց ծնունդին, կարեւորութեան: Իրողութիւն է, որ մեր մէջ ամէն հասանք կարօտ է Պարզեանի գիծէն լիտերնութեւ, կը գործածէ դանոնք, իր խորհրդանշան, ամբողջութեամբ: Ամերիկան գիծին արգելելէ առաջ, արգելած է կինը: Ահա հակ Պարզեան ըմբռնելի չէ տաւնց այդ տարրին: Իր կեանքին ներքին խորշերը պահեց մշուի մէջ ու պահեց իր հետքերը իրեններէն, հետապնդելով համբան, զոր ըրեր էր այնքան տարի Արեւմուտքի մէջ: Հոգ ալ չպակեցաւ, անոր rayonին մէջ, գիւրին կիներ, անխիթար արքիներ, սանկ ու նանկ ու կարօտ, այսինքն՝ յղփանքէ յորդած, բայց ծարաւի կեանքի հեղուկին: Որոնց մատոյց իր ծառայութիւնը անկողնակալ ծառայութեամբ մը, խտրելով ընդմէջ հարէի հւ հեթանոսի, դուք հասկցէ՛ք՝ խորթի ու խառնի: Ապաստանած իր տաղանդին, որ հարստական ըմբռնումով իրական կուտք մը կ'ընէր անոր պատկերը անծանօթ ամբողջութեւ գիծաց - ու ապաստանելով իր աստղին, որ փարթամ, հոյակապ, խորախռով մարմինն էր անոր, անցաւ անիկա խիճէն ու փուշէն, կատակերգական ու եղբարականէն, էրեկներու նախանձէն, ինչպէս զվայելախոյզ երիտասարդներու սարքած զապալներէն: Ու անիկա գրական, հասարակական պաշտամունքի վերածեց պնդեքութեան, հիմնական յօդուածը, անկիւնաքարը իր բարոյականին: Չէ ասիկա հացկատակ, կամ դաւաճիկ շամբընտը, որ վախկոտ է, խորապէս անողնայար: Անիկա տեղական մեղքերուն շուրջ սանկ թեթեւակի ուրիշներուն վրայ ալ ցաթել կրնայու տաղանդն է քիչ մը, զայն տարածելու, հերքելու ու չըջուած լրտու-

Թեամբ յայտարարելու սպառնալիքն է, վաղածանօթ շանքաժը: Տիե-
զերական եղբայրակցութիւնն է մեղքով ու մեղքին մէջ: Որուն հպո-
ռունքներէն դիտուած՝ ապրիլը կը վերածուի փոխադարձ շփոթումին:
Դուք գիտէք անոր երանելի առածը. «Ով է՛ր անմեղք»: Անուագն
ծիծաղելի չլլալու հոգով շատեր խոնարհին պիտի այս նորակառոյց
ըմբռնումներուն, որոնց արժանիքը գրականութեամբ տրուիլը չէ մի-
այն, այլ մանաւանդ գործքով փաստուիլը, հապրուիլը: Անոր թա-
վառումները նպաստեցին բարոյական այս դադափարազրութեան զո-
րացումին: Ներեցէք, որ չկարենամ հետեւիլ ժամանակի մեծ պարոյթ-
ներուն, որոնք շրջանակեցին անոր առաքելութեանց զանազան դաշ-
տերը: Կենսագրութիւն չէ, որ կ'ընեմ: Վէպ է առիկա ու կը յարգէ
իրականութիւնը իր ուժերուն ներած չափովը: Բաւ է հաստատել,
թէ անիկա մեր օրէնքները արհամարհելուն մէջ մտացածին կամ շին-
ծու ատկետ մը չէ, նիցչէական կաղապար է: Մի ժողովուրդ, որ կը սե-
րէր Օսթր Ուայտը ոչ իր սրամտութեան կամ պաղպաղուն ունին,
այլ իր զփրփրութեան մէջ երեւան բերած ամուր կեցուածքին հա-
մար: Ձէ՞ որ պողպատուած կեղծիքի, կեղծանուած սուտի մեծագոյն
միջնաբերդին դէմ առիկա զարկած էր իր դուռը ու ջախջախուած.
գոյացած՝ այդ խոռոչաւոր ուղեղներուն երեսին ինչ որ փտութիւնը
կը կազմէ աշխարհի բոլոր զատողներուն, ատանկ խեղճ, փնթի, փո-
քրը, կապիկ, երբ յանուն թուղթի, գիրի, ձեւի՝ խղճմտանքներ կը
խաչեն: Հայ արդարութիւնը: Հարկա՛ւ: Թող կրօնական պատկա-
ռելի ժողովին որբազան ու մուշտակաւոր նախադասները առաջ մաք-
րէին իրենց խղճմտանքին երկարողքը, երբ ողջախոհութիւնը մա-
մուն խորանէն անիծելէ ետքը կ'երթային իրենց հարազատ եղբորը
տունը ու անոր մահին կը պղծէին այդ օծուած սուրբ ժօրութիւնովը,
կամ սպասուհիները կը քաշէին իրենց ծոցը նմանելու համար Դաւիթ-
թին, առանց անոր պէս «օրհրէն անցած» լլալու: Անիկա կը ճանչ-
նար ուրիշներ ալ, բարձրատիեան եպիսկոպոսներ, զբաղէտ ու հեւա-
տար, որոնք իրենց օրբազան խուցերուն մէջ ջատուկէ կէներ պարի
կը հանէին, հաճոյքի քաղաքներուն մէջ պոռնիկներով լիճ ու ծով կը
մտնէին, իրենց թոշակէն ազգասիրաբար տարին ոսկի մը տրամա-
դելովով աղջիկներ Վեր պաշտպանէին, զանոնք փաթթելու համար
թշուառական, միշտ պատրաստ վարժապետի կտորներու դիմուն: Ան-
շուշա ինքը հեղինակը չէ այս բարքերուն: Բայց իր բարեկամները,
բունի բարեկամները, ըրաւ ադ արարածները: Դիտելի է, որ խաբար-
ւաններն այս հակումը անոր մէջ մնաց անաղարտ: Յիսուն տարեկա-
նին, անիկա քանամենի երիտասարդի նման եռանդ կը դտնէր իր
մէջ, երբ կը խաբէր: Յարա՛ծր: — Դիտէք: Աւելի՛: — Իր խղճմը-
աանքը: Ահաւոր դիտութիւնը մեր, երբ կը մտնենք խրուսթին մէջը
մեր կիրքերուն ու կը ջանանք առանց ցեխի ազատել մեր պատմու-
հանը, տոնուաղն համբաւին նափորտը: Կ'ըսէին, թէ անիկա լեզուա-
գար էր, քսեուն, յիսնամենի պառաւի մը նման, երբ չէր մտած քա-
նին: Փամանակը, որ ուրիշները անցնող կամ ցամքեցնող փոշեհո-
տունք մըն է տարածութեան վրայ, անոր համար չբերաւ կարեւոր
փոփոխումներ: Եղաւ անիկա միշտ մութ, անմերձելի, երբ կը թաք-
թափէր խաւարտչին կամարներուն տակը սեռին կոյանոցներուն: Ե-
ղաւ անիկա միշտ պայծառ, լուսափաղփ, երբ թերթի մը կամ ամ-
պիսնի մը կատարէն որոտաց ու շանթեց, առաքելական օծութեամբ

ու մարզարէական կարծրութեամբ, համաձայն նիւթին ու ժամանակին: Ու առաջնորդն էր անիկա այս ժողովուրդին, ուրիշ չատ չատեցրու նման ու չէր խորհեր, թէ ինքը ինքզինքը դուքս է յայտարարած անկէ: Ու չէր խորհեր, թէ առաքինութեան իր քարոզը գորտի սննդեւի մը կը փոխուէր մտիկ ընողներուն վրայ ամէն անգամ, որ քաղաքի մը մէջ յամենար իր փառքը աւելի քան երկու ամիս, անուր գայթակղութեան մը կարասին կոտորելովը իր ընդդիմամարտ եղջիւրներէն: Ըրաւ տաղանդաւոր բարոյախոսութիւն մը, որմէ նմոշներ պիտի տեսնէք քիչ ետքը, ինք, որ մէկ կտոր ուրացեր էր քաղքենի բարոյականը, ազդեցութեանը տակ կոտորակի ընթերցումներուն, ըսին շատեր, աւելի ճիշդ գուցէ՝ ծնունդէն իսկ, վեր ըլլալուն առջ տափակ հրամայականէն: Առաջացաւ անիկա իր սկզբունքներուն պողտանքներէն ու իր արհամարհանքը վերածեց մշակոյթի ցուցանակներու, որով «պիտի թքնէին» դուրսէն իրեն նման նիցչէ վերծանած ու դերմարդու հովով արարածները մեր մէջ: Այս պէնէքը գուցէ թուին մեր մէջ շատերու յափազանցուած: Կը բաւէ անոնց յիշեցնել, որ ինքնաբերի սերունդը, որ եւրոպական մայրաքաղաքներուն ամբողջ կնիքները առաւ իր դժբախտ ուղեղին վրայ, Պարպեւեանի անձով կը կրկնէ օտար անոպներն ու տենդիները, այդ դարաւերջիկ իմացական բարքերէն: Անոնք, որ վարժուած են հացկատակ ու շոշորթ տիպարին թիֆլիսէն ու Պոլսէն, դժուար ըմբռնեն պիտի տաղանդին ու ապականութեան, դուրսին ու լրբութեան, փանիքին ու քաղցրութեան սա տարօրինակ առնթերադրութիւնը նոյն դէմքին ու նոյն հոգիին վերայ: «Սոնսարճ Ծառայ», «Երուսաղ», «Հուսնաբէ» քաղաքութիւնները: — Անշուշտ, բայց Պարպեւեանէն առաջ: Վա՛խ, պատկառի՛լ, լորձնաշուրթն քծնի՛լ: — Ատոնք ուրիշ տիրուհի մը ստորագրելները կրնան կաթմել: Սահակ Պարպեւեան, պերճ ու լախտացի, ուրացաւ, ուրիշներու քով որեւէ ձեռով, որեւէ չափով պզտիկ մնալու, ասոր մտապատկերն իսկ ունենալու փոքրութիւնը, անգիտութիւնը, յիմարութիւնը: Ու ահա նորութիւն: Անիկա արուեստագէտին համար պահանջեց ու գործադրեց, երեսուն տարի առաջ, ինչ որ այսօր Արեւմտքի ռաւշաւոր երիտասարդութիւնը կը պահանջէ: — Արուեստագէտը, որպէսզի իրացնէ ինքզինքը, պիտի ըլլայ դերձ ընկերութեան բոլոր հրամայականներէն ու պարտիկներէն: Անոր պաշտօնը: — Բայց որով. դիտել, խնայել, ճշտել ու կաղապարել: Ուշադրաւ է, որ այս քառաթեւ պատգամին մէջ չեւեւայ ընթացիկ միւս միութիւնը, զԳալը: Անգղա՛յ, արեւմտահայ մեր արձակագիրը, որ մեր ժողովուրդին արհաւիրքները փղձկուծ պատկերներով բեմադրեց քաղաքակրթութեանց ճորդնախառնը՝ խղճմտանքին ու լացուց կիներն ու պարոցականները խոր ու թափ շնչտովը իր բառերուն, որոնք անոր ջիղերուն հեղանուտ, թեւաւոր տարրը կը փոխադրէին դէպի ունկընդիրները: Անգղա՛յ՝ ահ, որ կարողութեան տուրքի մը նման կ'ազար իր ֆրագները ու, անհասնում երանգներով, միակ յուզում մը էջերով կը գլխացնէր միշտ ապող, ուշադրաւ մնալու գաղտնիքը ունենալով, ապահովաբար խորն իր ջիղերուն: Դիտեցէք, հմտութիւնը քուն կը կը բերէ, առնուազն կը յոգնեցնէ՝ եթէ չէզոք է, բայց կ'ուզեմ՝ չէ անցած, ենթարկուելով, ջգային հոսումէն: Այդ փոքր տարբերութիւնն է, որ այս ու այն պննստիւտեմը կ'ընէ խորապէս անահեկան, հակառակ ծովածաւալ անոր հմտութեան, ու կ'ընէ խորապէս շահե-

կան այն միւս հերետիկոս, թերուս նշմարադիրը, որ կցկտուր տողե-
րու մէջ կը հանէ տասն անգամ անելի կպշուռ, զգրդուն յուզում, հա-
ւասար նման նիւթի մը: Բայց Սահակ Պարպեւեան յիմար չէր ան-
շուշտ: Ապրումի հերոս, անիկա քիտ Յելքիմի չէր, ինքզինքը վատա-
հելու համար թուղթերու բերդին: Ապրեցաւ անիկա, ըսել կ'ուզեմ՝
փորձեց, փորձարկեց իր զգայութիւնները մարդերու միտին վրայ ու
իկզմ, կճեփ, չորսուկ ու փայլուն բառ միայն պահեց, վերապահեց օ-
տարներու, հետաւորներու վայելումին: Չաշխատիլ: Այսինքն՝ իր
ժամանակը յատկացնել միայն իր մտքին: Այո՛, Բայց հա՛ցը: Հարո-
կա՛ւ: Անիծեմա՛լ հարցը: Մտովի ափսոսաց անցեալ դարերը, երբ
արուեստագէտը շանձ էր տիրոջ մը. կ'որսար անոր հաշտին ու կ'ու-
տէր իր սովորները: Բայց նուազ գեղեցիկ չին այդ բառերու նշխար-
ները արուեստին բոլոր ձեւերէն: Նոյնիսկ գերազանց: Անիկա հիտա-
ցումով ու նախանձով կը խորհէր օրինակէն, որ կու գար մեծահաւն-
ճոր արուեստագէտէ մը, բանտարկուած տարիներով իր կամարին
ներքեւ, ինչպէս թրթուրը իր բոժոժին մէջ, Բայց որմէ բխած են բա-
ժակը ձևի ամէնէն զմայելի զոհարին: Մտածեց, Բայց ամշցաւ այդ
չգթայումը փառաբանելու: Կարդացած չէ՛ր Տոթոնեակին, որպէսզի
գոնէ զբական fiction-ով մը, մարմին տար իր երազին, ինչպէս
ըրած է աստուածամեծը հեղինակը Բաբամագոփ Եղբայրները, ինչ,
հաստաքննիչին ու Յիսուսին միջեւ զննելով ամէնէն եղբարկան
թանձրութեամբ ինչ որ արդի խղճմտանքներու խորագոյն տալու պն
է, հաստաքի մարդէն: Անշուշտ անցած էին վերածնունդի դարերը:
Ու պատերը՝ ջրիներուն վրայ իրենց հեղինակութիւնը չվտանգել
աշխատող, փոխտեսակ դամբարաններու հողէն վեր բխումը հետա-
պնդելու: Չաշխատիլ: Ու լուծեց անիկա առեղծուածը իւրայայտուել
կորովամտութեամբ: Մեծապատիւ մուրացկանութիւնը սաքիւր մը չէ
անշուշտ: Անիկա անցեալ մը եւ մտայնութիւն մը կը պատկերէ: Ա-
նիկա, որոշ չափով, զբարեշրջուածք նորէն հիմներանդն է մեր գրա-
կան կենցաղին: Պարպեւեան, յեղափոխական, նորողեց տարազը,
ինչպէս գայն հասկնալու ու գործածելու կերպը: Աղայական մէթո-
տէն անցաւ անիկա պահանջողականին ու ծանրացաւ ունեւորներուն:
Երկար ու անտեղի ալ է հետեւիլ անոր տխրակտիկային, որով գին-
ւած ինկաւ հրապարակ: Եղբայրացութիւնը՝ աւելորդ չէ դուցէ՛. զնը-
կատելով որ, որ, որ... հետեւաբար մտքի աշխատաւորը կատարե-
լտուէս իրաւունք ունի սպասելու իր վարձքին: Ու խօսքէն՝ գործ:
Առանց նեղուելու, հանդիսաւոր, գեղեցիկ, չէն, ստեղծագործ եր-
կունքին ճառագայթմամբը, անիկա կը անկուէր որեւէ տեղ, ու կը
սկսէր իր սինիզմը պերճ ու դառն իր բարբառովը: Եղաւ անիկա հազ-
ազիւտ, հերոս, բնկճող մարդը, որ իրաւունքով կը մտնէր վաճա-
ռականին առանձնասենեակը, կէսօրին, կ'ապսպրէր փառաւոր ճաշ,
կ'ուտէր զուարթ ու գեղեցիկ անտաք-նստի մը, արհամարհանքի մօտ
բարձրատրտութեամբ մը զրպանելով սիւրբոյն վրայ նոր բացուած
սիկառի տուփը, յաջորդ շարթումն համար ժամադրութիւն dicter ը-
նելով: Ու կ'իլլէր գուրո, վեհափառ ու բարի, հայհոյելով քթին տա-
կէն փաթերներն, ուրիշ մը՝ ճարտարապետին, ուրիշ մը՝ առաջնորդին:
ու. կարգաւ՝ հայազգի պանքայի վարիչներուն, պետական պաշտօնա-
տարներուն, ծխախոտի աղաներուն ու անոնց տնօրէններուն, հաւա-
սար հեշտանքով, լրբութեամբ: Այս պնդութիւնը կ'ըլլար բացառիկ,

դրեթէ կատակերգական դասթակդութիւն, երբ, հրաշքով, ունենար, այսինքն՝ դրպանը ըլլար քիչ մը ծանր: Անիկա կը փոէր թուղթերը ու կը վերցնէր, պարտադրելով դէմինները վճարումի, տաղանդի տուրքին վարժեցնելու համար իր ազգակիցները ու փաստելու համար, թէ մեծապատիւ մուրացկանութեան անցած են օրերը: Հիմա հոս անոր աղկալին գիտակցութեան տեսած աբարք մըն է, մեր ցեղի փրկարարը խոր բխում: Աղդ մը կը մեռնի, երբ իր միտքը կը մեռնի: Միտքը չի մեռնիր, երբ անոր մշակոյթը կ'աշխատի: Եղնիկին «առա՛ծը», որոյ կը հրամայուի կալ դարձող եղին չկապել ցոռուկը: Ուրե՛մն: Այո՛: Այս պնդութիւնը, դարձեալ, հաւատար ստատուկութեամբ էրբ շունենար, այսինքն՝ դրեթէ միշտ: Քիչեր, անոր չափ յիտեթեամբ, արդարացուցին այն միւս առա՛ծն ալ, որ գոնչը կ'ընէ մեծամիտ ու անհաւան: Ուրիշներուն դրամը ուրիշներուն գիտակցութեամբը ուտելը հասարակ մակարածութիւն է: Գիտէր ռաթիկա՛: Իտրմանելու համար նման վերադրումի մը ազտը, արհեստին մէջ առնկու ներմուծեց իւրահնար նարութիւն: Անիկա այդ մորի ճաշերը կ'ընէր տաղա՛ւքով, այսինքն՝ կը սկսէր սղասներուն իրայ գործադրութեամբ շուտ բծայինգիր մտքախուզութեամբ մը, սղասաւորները շարաւորելով անխոնջ հետապնդումով, մերժելով թատերապէս անձեռոցները, սրտի շնորհէն արդուկ, գաւաթները, որոնց բիւրեղին գրայ մտելի մը մշուշիկը տարտամէր, ու կը մերժէր նման առարկութիւններով դրալ, պնակ, պատտուաղ, երեք-չորս անգամ փոխել հարկադրելով ամէն բան: Կերակուրներուն իրայ իր քիթին պատկառանքը ու զիմպիւծին թրթիւրը, կնճիւր կամ թաքուն հեշտը զայնումը պատմական կը մնան: Անգութ հղաւ ամէն ծառայի հանդէպ, թերեւս յարգած ըլլալու համար Գերմարդու ստորոգելիներէն մէկը: Անոնց հրամայելու իր արձակութիւնը բռնի մարգամբ մըն էր գործադրութեամբ՝ պատկերելու համար մշտածառայ կորսնքը իր խղճմանքին, թէ ցուցածութիւն մը, փարիսեցիութիւն մը: Ուրիշներուն հարկադրութեամբ մէկ կ'ապահար, եթէ չա՛նար, պնդեցեալութիւնն է, ուրիշ մէկ կ'անտան ալ իշխել կարենալու փաստն է: Ու մարդ պէտք վարժուի այդ «պարտականութեան» խոնարհ աստիճաններէն: Անուն հիւսիս մը իր արժանիքներուն, քաղաքիկ իր տեսակէն» (անոր անկողինները՝ բազմաշարան ու աղետներն արգելէ յետոյ սխիւք ճշգրէ տարրողութիւնը՝ այս գիտելիներուն ու մարքիզուհիներուն — տարիներու րնթացքին, այդ յաւակնութիւնը վերածեցին տեւեալիդ դադարաւորի, հաւաքի) անիկա շնորհ մը կը նկատէր մեծ իր անձնաւորութեան ժամուան մը սա հեղուճը, արտածարութի՛ զիջումը գիտե՛ք, քոսնե՛ք, շրջելու համար զկողմա՛ պտրժուաններուն, որոնք, այդ ասիթով, մրի՛, կը վայելէին մեծութեան, տաղանդի շողարձակումը, ռադիոմագումը: Բա՛նց, անոր առջեւ, դուռները, խանութները: Քոսանը՛նիդ տարի տաալ Եդիպտոս աշտորուան պէս գերբայած չէր արուեստով: Մարդիկ, զիս իրենց կենցաղին մէջ շատ չէին տեսնել: Երբ անիկ ինքնատուգ քանի մը անթի խաղցնել հարթութեամբ: Ու արուեստապէսը սարսափը չէր կազմեր ընտանիքներուն՝ իր տոճ-տակներուն, պրոչիւրներուն, ճնշաստներուն իրերաշայած, անողոք, աննահանջ գրոհով: Ան էր պատճառը դուցէ, որ չվռնառուցաւ, թուրի, մաղաղայէն դուրս գրուելով՝ ֆելլան բեռնակիր-պահապանին կողմէ: Միւս կողմէն՝ տեղնոգ, ակնարկով, իսկ շատ արագ ու շատ

խոր, տեսածը իւրացնող, իւրացուցածը գոնէ՛ բառով, եթէ ոչ գիրով միւս չահագործող, պատմումի իր համեղ ձեւէն, անիկա բաց պահեց, տեսնի մը համար, Գահիրէն ու Աղեքսանդրիան, որամիտ իր առած-ներովը, ուրուադիներովը, յեղումովը, որոնց մէջ մարդերը կը մերկացնէր ահաւոր արագութեամբ մը իրենց ներկայէն, պատմութեան կամ փաթաթ, ոսկիէ ու մետաքոն, ու մասի նոյնքան ահաւոր ուրիշ ցուցումով կը բերէր ետ, անոնց աչքերուն մօտաւոր անցեալը, որ անմեղէ՛ այնքան ցանցաւ, թաթխելով անոնց 'ներկայի ոսկեղարը' ինչպէս փերթ մը աղուած միտ՝ սխտորին կամ չամանին մէջ, ու թու-թէ պատեղին անհիւս կտանելը թոթուելով քննադատաւ տիկիններու մերկութեան դիմաց։ Անիկա անդուծ է եղած մեր կիներուն մտքի մերկութեան դէմ, անգութ ըլլալէ ետքը հոգեկան մերկութեան ալ վրայ։ Ու կը սոնքար, կ'ուռէր, այդ՝ հայերէն իսկ արմիւ չկըր-ցած փաթոններուն ապականած տգիտութեանը մօտ ինքզինքը երկ-նաւաք բարիք մը, բարձրութիւն մը, Վեպին սուրբեան շնորհ մը ծախելով։ Եղաւ անիկա Եգիպտոս, զանազան շրջաններու։ Ոսկեղա-րը։ — Առաջին երիտասարդութեան կը զուգարկուի առիկա։ Ձեւա-կան գոտութեան մը աղմուկովը յեղափոխական իր ընկերներէն, ընոր կուսակցութիւնը կազմելու համար Նեղոսի պարարտ ափերուն վրայ, իրականին մէջ Վարաբէր մտած՝ տարեկիւրեայ համերու խնթ ցըն-ծուկներուն, անիկա ինկաւ յաւիտենական ծերութեան ու յաւիտե-նական սերմին երկիրը, կիներու շքախումբով մը, որուն շողն ու ներ-կըսած պերճանքը, արեւմտեան ջնարակէ, յուզումի հանց մեր աւա-զանին, զեռ հաւատարիմ՝ առիկան իրենց խոդումին։ Ու անիկա չ'իւրմի մտաւ ծխախոտի ու բամպակի կամ հողի մեծ վաճառական-ներուն հետ մեղքի ճամբաներէ ու զինքը Եգիպտոս պտոյտի հանած կիտաշխարհիկ կիները, կիտաշխարհէր արժեքուց թանգ, յորդ, մեծ-աղաներուն, աւազ-պաշտօնականներուն քոնե՛ մոլութեանց կըր-կէտին։ Անոր անունին կապուած պիտի մնար անդրանիկ այս դերա-սանութիւնը ու աւելի վերջը, մարդիկ պիտի դառնային իր շուրջը մեղրի հոտ առած մեղուներու նման, իր Վիկնը, Վաղջիկը՝ զատել շուրջով փարիզէն բերուած «իշխանուհիներէն»։ Այս պատմութեան տրամին մէջ տեղ ունի այս դրուագը՝ անոր առաջաւոր անցեալին։ Գինով։ Քանի որ օրէնք է ատիկա սեռին ըմբիշներուն մօտ։ Իրողու-թիւն է, որ շեղաւ երբեք արթուն, իր չիմած ըմպիլիքին մշուշէն ա-ւելի իր սպառած, բայց անհաշիւ սպառած առնութեան տեւական զգիւրովը։ Գրած։ Դարձեալ կիները, երբ կը ծախուին ուրիշներու հաւոյն կամ կը գնեն իրենց հաւոյն։ Լեզու։ Որով անիկա կը պա-հէր կսպ, ոսկի այդ իշխաններուն հետ, առհասարակ խնայող, եր-բեմն ազա՛ւ ըլլալու չափ խիստ։ — Իր'նը, որուն լեզուն կը բանայ բոլոր արկղերը։ Աւելի։ Այսինքն՝ Եւրոպա ըրած փառանքներուն մօտ վարկի՛ մը համար։ — Էսթէթի ու տնտիսի ծերծեքումներու տա-ղանդ, այսինքն՝ Բանիմ հուրքը, ինչպէս մասնագիտութիւնը կիներ-բու վրայով, սեռային օրկազմը արուեստին հանելու։ Աւելի'ն։ — Գրադէտի պատմութեան զուտակիչ, Բաղրատունիէն միտքը մնացած բառով մը տաղաւարելով իր սուղումը զի խորս անդրանդնդոց մե-ղաց։ Երբեք նանրամիտ, խոր ատելութեամբ, զինուած զգրականու-թեանն սնտի փառքին դէմ, նմանելու համար իր օրերու առաջաւոր երիտասարդութեան սնուցած արհամարհանքին՝ բառ ու փոխաբերու-

Թիւն եղող, երբեք ապրում, մարմնական կամ գիմազական փորձարկումներն չեղող գրեթե մեկ մը դէմ, խարաղանքով ու խարանքով իր ընկերներուն վրայ ամէնէն ընդունելի շտեմութիւններուն, զրական շտեմութիւնը՝ ինչպէ՞ս կը հաշտուէր անիկա սա մարմնեղէն շտեմութիւն: Այս տնկումներուն, ներոնատիպ շտեմութիւններն մէջ ինչպէ՞ս կը տարբերուէր անոնք որ ինքնաշտեմութիւնը, որ այդ իսկ հարաւոր կ'աշխատէր անոր մարմինը, շնորհի, ցնծութեան, տիտ-նեթոսեան արքայանքի ատուան մը ընելով զայն: Հաստ ու հաստ-րակ վաշխի մօտ, որոյ արեւելեան քաղաքները կը բարձրանան Սոգոմ ու Գոմոր հեքիաթէն, ու բողոքներու դաշկահար ապետներուն վրայով հետեւող կը վերածուի ամէնէն թթու, աշխատ, տա-րապարհակ վատնուած ինքնաշտեմութիւն, ո՞րն է տեղը Բանին քաղաք ու Զինին կախարդ սեւաշուի գիշարներն, ինչպէս կ'ողէին իր անունը Թալիսներու անմահ բերանները, նոյն ափերէն ու նոյն խորաններէն: Մըն էր տեղը յորդ, մշտապատրաստ սեռային այս Հերակլէսին, մօտիկը՝ այն միւսներուն, սմեղուկ ինչպիսիք ու ճարտար, որոնք-նէր, որոնք փոքի համբարութեամբ ու աղուէնի հնարքներով դիտեն պարտել իրենց խեղութիւնները, անասութիւնը ու կը մնան միւս արթուն, տասը տարազով, պատրաստ, փետուրու ցանցը արդարութեան ուղիներուն, վատնողի որսը ունի իր վտանգները, երբեմն վաշխէն խոշոր: Ատոնց տարապետ, վերապահ դիրքէն կոտորած ու յաճախ զաւակին կամ կնիկին սրտառու ողորդութեամբը հակա-կուռած փաղանդին դիմաց՝ Սահակ Պարգեհեան զեղարուեստագէտ շառնար էր, պարզ, առանց վերադիրի: Այնքան՝ որ իր արարքները մտքէն չանցող ուրիշին ճանկ ենթարկել: Այս պատմութենէն քանի մը տարի առաջ, խորտակուածի դժուակ դրուագէ մը ետք, որուն մէջ անիկա մաղ էր մնացեալ զոգուանքէն ինքնուրուշ, յուզուած այդ քաղաքումէն խղճմտանքի տեսակ մը քննութիւն փորձեց, բանաձեւ փետուրով իր կեանքը կապարիշող: Ի՞նչ, ի վերջոյ Արեւմտահայ մեծաշտեման արձակագիրը: Անիկա կ'արհամարհէր զրական փառքը: Անո՞ր զաւակը: Խոնարհաւ այդ յուշքէն դառնութիւնը անոր կոկի-ծին, բայց բոլորէ մը միայն: Նոյն պահուն առջեւէն անցնող հոյա-չէն կին մը անոր մէջ ծագեցող իր կեանքին ճշգրիտ իմաստը: Ձեռը կ'անցնէր, անցնելու էր: Չանդակ էր անիկա դասական փոխաբերու-թեան: Թուրքը: Անշուշտ: Այս կերպ դատաստանի մը թեթեւութիւնը ինչո՞ւ չտեսաւ, ծերութեան իսկ մուտքին, երբ ատոր տալին թաթը զգաց ողնայարին խրամին երկայնքովը: Տարփանքի քահանա-յապետ... Այս ամէնը լրիւ, փառ ու պատկի մէջ, երբ երիտաւարդ էր անիկա: Մինչեւ քառօուն անիկա չկասկածեցաւ իր աստղէն: Այդ տարիները, այնքան տարբեր ուրիշներու կենսակերպին վրայ: Սա-հակ Պարգեհեան աշխարհէ աշխարհ, քաղաքակրթութենէ քաղաքա-կրթութիւն անցաւ իր սովոր արադութեամբը, հետապնդելով վայել-քին ու փորին զոյգ պողոտաները, որոնցմէ կ'ընթանան, տարտամ սկիզբով ու անկող յանդուժով, ժամանակակից կեանքին բոլոր ջուրե-րը գրեթէ: Որոնց յայն մարմինին վրայ՝ ակօ՞ւր կ'իներու, արեւնով ու ցեղով, շնորհով ու պղծութեամբ ցողաթո՞ւլմ: Ու ակօսը՝ ար-եւտին, հմտական բորբոսով ու արեւելեան որդան կարմիրով ներ-կրած ու ծագած: Երբեմն ինչ քիչ բան է մեր հպարտութիւնը, երբ կը դուրս մօտիկը տարիներու փոքիին, ամէն մարդէ մեծութեանց

պատմութեան: ... Ու ապրեցուց անկէս իր մարմինը ուրիշներուն մարմինը բուծանելով: Ու փրկեց իր ազգանդը՝ զայն հովանոցելով մեր օրերու ցեղային դերագոյն իրացումով: Գիտէ՞ք, որ ամէն կուսակցութենէ վտարուելէն ետեւ ալ չհրաժարեցաւ յեղափոխական գիտականէն ու չորս-հինգ անգամ, թարմ պատանիներու դրօշակներուն յառաջարան գրելով, տնոնցմէ նոր կուսակցութիւն դառնորել ձեռնարկեցաւ: Ու ինկաւ ու ելաւ: Պէտք է կարճ կապել ուս վերլուծումը... Հիմա, Եզրիպտոս, յիսունէն քիչ վեր, անիկա կը քաւէր իր ոսկեղարը: Այս պատմութիւնը կը բացուի այդ քաւութիւնը պատկերելու առաջնորդութեամբ: Փաւութիւն՝ որ սկիզբ էր առած քառասունէն ետքը, կոնակին ղերակը կնոջ մը, որմէ առեւանգուած էր բաւոյն տառացի իմաստովը: Ու կուշտին, սրտին՝ աղջիկ մը, անկէ հոսող եղբորական, անորակելի հոգեւորականութիւն մը: Ծակտին՝ իր անցեալը, ուր դեռ ծխաշունչ ու զբոսորդ կը պտուկէին հեղեղատները անոր մեղքերուն, աչք առնելու չափ տպաւորիչ դիտողին, զիտոգողին: Սաքերուն տակ, ճամբկուած պատմութեան ճամբը՝ համարաւը, որ թեփոնած էր գոյնովը հօթը մայրաքաղաքներու: Ու դադարէն էր անիկա իր փառքին: Անոր խառնուածքը ընդոտնած էր «փոփոփողուն» պտակը անոր տաղանդին, սրտած, ծամած անկէ ամէն կանաչ մաս ու դրած երևան սկաւառակը անոր հոգիին սեւ ու չորացած փոկերու զազիր սարդոստայնը: Իր փոյթը չէր ո՛չ հիմա, ոչ ալ տոնին, որ դատէին մարդիկ այդ ոսկորակոյտը իրենց չափերով: Վասնզի անիկա, «Նոր տախտակներու» մարդարէ, դեռ պատանի, չըլած էր հին տախտակները ու «գինուորուած» նոր տախտակներու: Ան՝ որ նոր ժամանակներու ամէնէն հսկայ կայսրութեան ոստանին մէջ (Լոնտոն) գերիշխանիկ ցաւագարներ միայն տեսաւ ու սեւեռեց, ուրանալով այդ մանրանկար երկրաշունտին զուսպ, խոր, այլապէս թելադրիչ քաղաքակրթութիւնը. ան՝ որ նոր ժամանակներու երիցս մեծ Բարեկոյնին, Փարիզի մէջ պերեհեշտաւոր ցնծ ուհիներ միայն տեսաւ (վկայ՝ այդ մայրաքաղաքներէն իր վերցուցած պատկերները, որոնք լեցուն են զոհարներովը այս ժխտումին) ու դատեց Արեւմտեքին երկու մեծ ժողովուրդները իրենց ապականութեան եւ մեղքերուն հսկայ հանդիսանքէն. անիկա պիտի գտնէր անշուշտ ինքնատիպ ձեւ մըն ալ, իր ժողովուրդին հետ արդար ըլլալու, անոր մէջ փերիզակներ ու պոնդոյրներ միայն տեսնելով: — Միա՛կ կէտը, ուր անիկա կը տարբերի մեր ժամանակի, իրեն պէս ժխտող, բայց մեր ժողովուրդը յարող ուրիշ մարդերէ: Աշխարհին մէջ (հասկնար, թէ ինչու կ'ընդարձակէր իր ժխտումին կարկինը. իր ժողովուրդը անոր պիտիկութիւնները վերցնելով կայսրութեանց կրկէսէն, երբ, ոչ մէկը նման բան մը կը պահանջէր կամ առնուած իր կարծիքը կ'ուզէր այդ «կեղծաթուրմ» անդուհիներէն կամ քառակուսի ամբիկուհիներէն, Փրկութեան Բանակի խորանարդ ապշուհիներէն դիմքը «իշու» պէս, «ցուլ»ի պէս վարձած, շահագործած ատեններն) անիկա ոչինչ գտաւ արժանի իր յարգանքին, առնուածն գութին: Բայց իր ոճէն, գտարին նժոյզ, փրիթերախ վարդող քրնչ ամեռն ասպարէզս Գերբազանք Լոնտոնից կտակարանաց, զոր սրեց արիւնին մէջ իր թշնամիներուն ու քնացուց միտերուն մէջ աղիւճներուն, անիկա խանդաղատանք չզգաց ձեւական, փլատիւք ոչ մէկ դեղեցկութեան առջեւ (չիտէ՞ք, որ կիները կը խոշտանդէր): Բացի իր ոճէն՝ հլու՛ւ՛ ա-

նոր բոլոր ատելութիւնները հալածողի, պատկերի, ձեւի ու կարկաս-
տի վերածելու գծնդակ տնդին, ու սուսն՝ երկասյրի, իջնող քաղ-
քենին հրու գլխուն յորնապահան կշռոյթով, անիկա սշինչ սիրեց մեր օ-
րերին: Փարատօ՞քս: Երբ անոր զղայարանական կեանքը առնեմ վեր-
լուծումի, պլտի պարզութիւն ստոյգ արժէքները այս յեղումներուն:
Առայժմ բաւ ըլլայ յայտնել, որ անոր զէմքին ալ նշմարելի երուկ-
մունքին մէջ մաղմաղ, արմատ-արմատ կը պոկէին ու կը սեւեւա-
յին անոր նոզկալից բոցէնները բռնամարտ տարփանքի: Գործողու-
թիւնը ինչ աղբիւրէ ուղէ ըլլայ, կրկնուելով-կրկնուելով մեր զէմքին
կտաւ կը շինէ: Մանօթ է կնճիռներու տեսութիւնը, բայց դեռ ան-
ձտնթ՝ անոնց ճարտարապետութիւնը, ըսել կ'ուզեմ՝ հիմնական դը-
ղորդումը, տեմպը, հիւյշական (ինչ գէշ է բառը) թրթռականութիւ-
նը ի խնդիր ոճի, գիծի, որով այդ իւրընդմնադր արտաքինացումի կ'ըլ-
լան ներքին բարդ ու երկարատեւ խռովքներու: Ով որ նայէր Պար-
դեւեանին սղաւոր ճակատին, արտում աչքերուն, կը յուզուէր գոյովը
անոր մշտական հոգիին: Ու անոր շրթներուն թանձր ձանձրութիւն
վրայ իր դաժմոհում, զբիթէ բերումած սեղաններուն թոյն կայլակ-
ները կ'այրէին անմխիթար: Ու եղաւ անիկա մշտապէս մինակը, չը-
սիրողը ու չսիրուածը: Փարատօ՞քս: Ձեմ կրկնէր վերի առարկու-
թիւնը: Անոր հզօրագոյն տառապանքը, երկաթ պատգամի մը նման
մնաց կախ անոր աչքերուն առջեւ: Ու ինչ որ տրամն իսկ է այս
պատմութեան, արդենք է դուցէ սիրոյ ծաղակի մը, որուն կարտը
ունեցաւ անդուլ, բայց նման գինովի մը, որ կը մոռնայ ըտրը, ատեն
չձգելով ալքովն զատուելու, բայց դիտէ անոր կարելի համը: Այս
ծորաւն էր, որ գինքը պիտի ընէր անպատասպար, յիսունի դռներուն,
մանկամարդ աղջկան մը աղապատանքին գիմաց ու խորտակէր պիտի
բաժակը իր սիրտին: Այդ մասին քիչ մը ետքը: Ուրի՞շ: Բանի՞, որ
մարդոց մեծ մասը կը կապեն կեանքին: Ձուր կը փնտռէք: Բացի
դրական տկարութենէն անիկա անխոցելի, զրա՛ւտած հերոսը եղաւ
խմացական հակումներէն: Ինչո՞ւ իր ոճին վրայ սա անմեկնելի ու
անհաճանջ միամտութիւնը: Ձէ՞ որ միշտ իր վկայութեամբը այդ
գրքծիֆիմ տէրերը, դոնէ մեր մէջ, տխուր, անժառանգ ապարժէ ա-
բարածներ եղան: Ձէ՞ որ ղլուսամիտ խենթութեան օր մը անիկա ա-
ւելորդ հռչակեց զբաղէտը, բայց փառաբանեց մեր գրականութիւնը:
Անիկա մարդն էր հակասութեան, ժխտումի քարոզ, խանդի ստեղ-
ծիչ: Իր վրայ երկարեակ է ամէն բան, անհուն բնականութեամբ մը:
Սնոպսիֆիմը: Կարելի է: 1900ը չըջանն է այդ մենագարութեան,
չըջանը՝ զարտադրումի, ախտաւորումի, հիւանդութիւնը օրինաւորե-
լու հզօր ճիգի մը: Անշուշտ Պօլէն, Հիւպլման, Ուայլտ, քիւ-
պիթիները բառեր ըլլալէ տուջ ջղային դրութիւններ էին, որոնց ան-
թել հոսումներու լայնօրէն բաց անոր ընկալուչ դրութիւնը չուրա-
ցաւ իր ստացումները: Սնոպսիֆիմ մեր մէջ 1900ին, Պոլսէն դուրս,
երբ մեր գրողները կարմիր Սուլթան կը ներկեն ու Մայր Հայաստան
կը խաղցնեն, բայց անկարելի միամտութեամբ, անքանդելի հաւատ-
քով ու կը յուսան հայրենիքը ազատել քերթուածով ու հոնտորու-
թեամբ: Գուցէ՞, պէտք է բարեփոխել տարոգութիւնը բառին (սնոպ),
արեւմտեան մշակոյթի այդ Էկվեմային: Ըսի՞, թէ անոր աչքին կուս-
չէին արժէր ժամանակակից քաղաքակրթութիւնները, որոնք ընդար-
ձակ, կայսերական կեղծիքներ էին ամէն բանէ առաջ: Ձե՛ւ ու շա՛հ:

— Աշխարհին լծակները, կը պոռար ու չէր զիտեր, թէ ինքզինքը կը նկարէր: Անցեալը, Անշուշտ, Քիչ մը աւելի: Գոնէ, հոն, դերու-թիւնը, տգիտութիւնը հիմնադրեալներ էին, որոնց դէմ դառնանալու յիմարութիւնը խնայուած ալ էր իրենց տոռապանքին: Ազատագրու-ւած սա դերութիւնը նոր կարգերուն, ալապուստիկ իր ներկումներովը չազար անգամ աւելի վատ էր ու գոնէիկ, քան անցեալին ճանապարհ-ներուն: ճակատագիրը: Մարդիկը գոնէ քար մը հաց ունէին իրենց սկռաներուն տակ նետելիք ու աղալիք: ... Պէտք է քայլել: Աշխա-տեցաւ տնիկա մեր մամուլին, իր ժամերուն, երբ օրերով ինկաւ ա-նոթի: Ու աշխատեցաւ իրբեւ փարիա: Անիկա չարհամարհեց ոչ մէկ թերթուկ, Գիտէք, թէ ինչպէս կը ծախէր իր յառաջարանները: Ու արտառուչ էր անոր բուխարտութիւնը մեր մամուլին բոլոր թշուառ-կան-անօթիներուն հանդէպ: Օ՛, «հերոսներ», նահատակներ, խո-նարհ աչք «մեծութիւններ», աղքատօրէն «քանդարար», որոնք իրենց փարիայի ճակատագրովը, իրենց վեճ «գոհարեմամբ» ա-ռիթ կու տային անոր, երկու սիւնակ զեղումներու Գահիրէէն գուր, Սուրիա կամ Ամերիկա, աս ու ան ետօրեայի կամ տոտնօրեայի մէջ: Հայ մամուլին այս համեստ սպասարկուները, շարթ տոտն անոր յօդուածները կ'աւետէին իրենց ընթերցողներուն՝ «ուրախ ըլլալով», որ մեծահայտակ արձակագիրն այնքան կորովի, փնտռուած, մնայուն աշխատակցութիւնը ապահոված էին միանգամ ընդմիշտ, յետ այսու, կանոնաւորաբար ի լոյս բնծալելով անոր անգուղական գրչին թան-կագին արդիւնքները, այսպէսով անգամ մըն ալ ապացոյցը տալով, զոտ յօդուած ժողովուրդի բարեւոյն, իրենց ստանձնած արդէն ծանր զսոգութեանց շարքին, նորի մըն ալ, — հայ տաղանդաւոր գրագէտ-ները կապուած պահելու իրենց օրգանին: Այս կարգադրութեամբ, երկնց բարեբաւտիկ ընթերցողները պարբերաբար պիտի ըմբռնա-նէին գլուխ-գործոց այն վիպակները, որոնք անոր անունը ոսկեւտառ ու անթիւն քանդակած էին հայ դպրութեանց համեստունակ կամար-ներուն ներքեւ: Այս պայծառ ռեքլամին կը հետեւէր երկու սիւնակ թուում, գործերու անուն, շփացուած կենսագրութիւն, որոնք շան-թահարիչ տպաւորութիւն կը գործէին բոլոր այն վայրերուն մէջ, ուր չէին կոխած ունոր ոտքերը ու չէր ծաւալած շուշը: Առհասարակ օ-րերին համարուած այս թերթուկներու փիլանալիս խօթութեան վաղածանթ, Սահակ Պարպեւեան, փրցնելու, իր բառերովը՝ «յետս թափելու» համար ի սփուռ աշխարհի խոտապուած, զաւարափող-ւած իր աշխատավարձը աչք գողաններուն ժանիքէն (իր կեցողութի-ւնը դասակարգութիւն տիտղոսով սրածիտ Փանթեղիին մէջ անիկա բոլոր խմբագիրները դասաւորած էր երկուստեք գիշակերմերու ամէ-նէն կատարելագործուած տեսակին մէջ, անոնց համասեռ ու համա-տիճան տալով յուշկահարները, քաղահատները) կը սպասէր մինչեւ հրորդ նամակը: Յոյսն ու պաղարիւնը մեր զրոգներուն մեծագոյն առաքինութիւնները եղան: Մինչեւ որ շարաշար «ծուղակուելէն» կատարած նստէ՛ր շորրորդ նամակին առջեւ: Երկու մեծագիր էջ հայ-հոյութիւն կազապարելէ յետոյ, մեղքնալով հանդերձ պահարանին, բայց միթախոյզ կը յանձնէր նամակը փոստին՝ առանց զրոշմա-թուիթի, առաջանքի ենթարկելով անբարեխիղճ «զրուկները», կը զո-վանա՛ր, թէ կը զայրանար: Անոր աւելութիւնը դարձեալ, աննա-հանջ ու միապաղաղ, հայ միտքին հզօրագոյն ցեցին, զբաւանաւին

դէմ, որ «սատկած էջերու պայտերը քակելով» (կ'ակնարկէր անոնց ծագումին, փոշայական բարձրուն, անսպառ ախորժակին ու դրացեղ տղայի վաճառելով անմեղքիւր ապրելու անոնց նենգ ու նուաճող տաղանդին) հիմը կը դնէր երբեմն փայլուն անտեսութեան: Այս անհասկնալի ապագայութիւնը անիկա խարանդ պարտ ու պատշաճ զայրոյթով, գիտնալով հանդերձ արհեստաւորներուն ընդերկրեայ դասակարգին անվրէպ պատուհասը, որով վերցունցան իւր դրժոյթները շրջապատէրէն, իբրեւ սպառած ու մոռցուցին իր անունն անգամ, դանդաղելով զայն դրացունցական էջերէն: Եղաւ ընդդիմադիր ժամուն ու դալորցին, մուշտակաւոր բարոյախօսներուն, յեղափոխականներուն, որոնք «կը հալածէին» զինքը: Իրականին մէջ իւր դժբախտութեան մէջ խորատու իր ջանքի մարդն էր անիկա, սեռէն ու փորէն դուրս: Ծահկան է անոր բարոյական դիմագծութիւնը սեւեռող քանի մը առանձնէր դնել այս տողերուն թնճուկին մէջ: Անիկա չէ ըսած այս բառերով, բայց մտածած անոնց պարունակէն: Անիկա կը պոռար նոր ժամանակներու աւետարանէն իր համարները ու կ'ըսէր.

— Մաքրեցէ՛ք Տիրոջը ախոռները, որպէսզի արժանաւոր դառնան ընդունելու խոզերը, որոնք մարդիկ չեն ուտեր, բայց ոսկի կը հազնին ու իրենց մեղքերուն ազամանդ ծրարները կը ձգեն դուռին, ելլելու աստեղ կրկին տանելու իրենց ուտերուն: Վասնզի մեղքը սրբութիւնն է հիմա, «աւետարանում» ու մկրտում: Ձինուորուհիները աւելի կ'արժեն, քան քրքուհիները:

— Մաքրեցէ՛ք Տիրոջը այգիները տատասկէ ու լուծէ, որպէսզի անոնց արգանդները պեղուին լուսեղինէջ, «բանաւոր» բոխներով ու տուններուն ոսկի շուքին՝ փրկութեան նախիրները իրենց ապաստում, ցաւազար մոլութիւններով մակաղին ու կենսագործուն:

— Մաքրեցէ՛ք Տիրոջը անդամատները, որպէսզի անոնք արժանի ըլլան ընդունելու իրենց մաքրամաքուր որովայններուն մէջ սերմերը ոսկի, արծաթ, գորտիկ ու ազամանդ առաքինութիւններուն, ու բեղմնաւորին «բանաւոր հացով», դժբախտ, ժառանգազուրկ սըրտերը բարի Աստուծոյն:

— Մաքրեցէ՛ք Տիրոջը աղախիններուն սիրտերն ու երեսները, օծեցէ՛ք զանոնք նարդոսեան հզով ու հալուէով, հանդերձելու համար անոնց առագաստները երկնային փեային ու անոր երկրաւոր փոխանորդներուն:

— ... Մաքրեցէ՛ք Տիրոջը կոկորդը, վասնզի ուղտերու փոխան երկրամասեր են հասուն...:

Յ. ՕՇԿԻՆ

(Շար. 4)


Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

Ձեռ գիտելի,
 Թե՛ որ քա՛նն մտահանջած եմ
 Հաւանելու համար քու հեռաւորութեան,
 Ուր կապոյտ էր երկինքը
 Ու կը ձիւնէր
 Հովանոցին վրայ մեր տխուր քառերուն.
 Ապարանքը՝
 Մեր շուրջ զատարկութեան շրջապատը կը հիւսէր.
 Ու գիշերը անտառ մըն էր՝
 Իր մեղախօս թռչուններուն ունկնդիր:

Առաւօտուն,
 Երբ վերջապէս վերագտնէր երկինքը,
 Դիտեցինք զազքը թռչուններու,
 Որոնք, իրենց քիւներուն տակ պահած
 Վերջին յօրքը մեր փետրաքափ երազներուն՝
 Կ'երթային երանգ-երանգ
 Հեռուններու լռութիւնը յօրինելու,
 Ու հինաւորց
 Մեր ստուերներուն մէջ պարուրուած՝
 Կը համադրէինք եռուզեռը չվերջացող մայրերուն,
 Ուր անձամբ ուղեւորնիր
 Մտաւցման յուշեր կ'արձանագրէին
 Մայրերու խառնաշփոթ ծաղաւէտներուն:

Դատարկուած պաշտտա՛յ,
 Հիմա որ կը փակես
 Ննջող քաղաքի աչքերը մէկ-մէկ,
 Փռնիներուդ մէջ մտամած իր մանկութեան հետքերով
 Քեզի կը վերադառնայ երեխայ մը հեզ՝
 Մայրերուդ վրայ տրտնուած իր տօնածառին
 Դեղին տերեւները հաւաքելու:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ
 /



Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ԻՐԱՊԱԾՏՈՒԹԵՆԵՆ

ԱՆԴԻՆ՝

ՎՈՐ - ԻՐԱՊԱԾՏՈՒԹԻՒՆ՝Ը

ՀԱՅՐԵՆԻ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ

ՄԷՋ



Արուեստի մը զտղափարարանական, ձեւարանական եւ այլ ստորագու-
թեանց գործածութիւնը թէեւ անհրաժեշտ, բայց միաժամանակ վտանգաւոր
աշխատանք է: Յաճախ անոնք այնքան ընդարձակ սահմանումներ են, որ
միեւնոյն ստորագրութեան տակ կը մէկտեղուին իրարմէ հիմնովին տարբեր
երեւոյթներ, ուղղութիւններ եւ դէմքեր, որոնք, սակայն, ունին «քաղաքա-
ցիական» հաւասար իրաւունքներ:

Այսպիսի ստորագրութիւն մըն է «իրապաշտութիւնը», թերեւս արդի
զեկագիտութեան եւ խմաստասիրութեան ամէնէն կոնսոսոս հարցը, որ սակայն
ձեւով մը խուսափած է ուղադրութենէ, աւելի եւս բարդացնելով արդէն իսկ
իւր շուրջ կուտակուած խնդիրները:

Ակադեմականօրէն, նաեւ լրագրական դրականութեան մէջ, իրապաշ-
տութիւնը կը հակադրուի «արդիւնաւորութեամբ» (modernism), իսկ այս
վերջինը ժխտականօրէն կը սահմանուի իրրեւ «հակա-իրապաշտութիւն»: Ի-
րողութիւնը այն է, որ իրապաշտութիւնը անպայմանօրէն «հակա-արդիւն-
աւորութեամբ»:

digitised by A.R.A.R.@

պաշտութիւն» չէ, ճիշդ չէ նաեւ հակառակը: Իրապաշտութիւնը յաճախ շըփոթուած է ուժիկ, անստեղծագործ ընդօրինակութեան հետ, իսկ ժողովրդական մակարդակի վրայ անիկա կը գործածուի բացատրելու համար այն ոճը, որ միշտ մտածել կը մնայ իրականացման մեկերուն, այսինքն՝ արտայայտութեան «ուժերացական» կերպերուն:


Եթէ իրապաշտութիւնը հիմնականին մէջ կը նշէ արամադորութիւն մը, հակում մը՝ դիմադրուելու իրողութիւնները, իսկ արուեստի մէջ՝ իրականութեան ճշմարիտ վերականգնում մը, ապա՝ աստուարակ աղբուածը-ըզգացուածը ներկայացնելը նաեւ մաս պէտք է կազմէ իրապաշտութեան: Այսպէս, գոյադաշտ-գերիլայաշտ յուսն արուեստները թէեւ ճարդիապաշտական» կոչուած են, սակայն կը մնան խորապէս հիւմանիստական ուղղութիւններ, որոնք ալ խոցելի ըլլան տնտես գողտփառական մեկնակէտները:

Տակաւին, իրապաշտութիւնը եւ իտէալապաշտութիւնը (idealism), որոնք սովորաբար ընթացիկ լրագրութեան մէջ կը հակադրուին, կը նոյնանան իմացութեանութեան եւ բնագոյնութեան մէջ: Որովհետեւ իտէալիստը, իր կարգին, «իրապաշտ» մըն է, ա՛յն իմաստով, որ ան իտէալները կը նկատէ իրական գոյութիւններ, իսկ նիւթական իրերը եւ իրողութիւնները՝ անցողիկ երեւոյթներ, հետեւաբար՝ «ուժերական», որովհետեւ տնտես մնայուն չեն: Այսպէս, ան իրականութեան հիմնական յատկանիշը կը նկատէ յաւերժանութիւնը, եւ ոչ թէ որոշ ժամանակի մը եւ տեղի մը մէջ առարկայական գոյութիւնը, եւ ժիւ՛յն այդքանը, ինչպէս որ նիւթապաշտը (materialist) կը հասկնայ:

Պարզ է, որ իրապաշտութիւնը շտապանց լայն իմացք մըն է, եւ ոչ թէ իմաստափրական կամ գեղարուեստական ուղղութիւն մը. պարզապէս որովհետեւ իր ընկարմագութեամբ անիկա կը ներկայացնէ այնքան բազմա-



Նմայշ մը Մ. Աւստրալիայի գործերէն՝ «ճանապարհը — ծնողքի վերջիլումը»



Շնորհարարության հիմնադրամիկ Մ. Անտիոնիանի «Մեր դերը»

դան երեւոյթներ, որ կը ձախողի սահմանում մը բլլա է: Իր կարգին՝ պէտք ունի լրացուցիչ եւ մասնատրիչ ստորոգութեանց:

Պատմականօրէն, իրապաշտութեան տնտեսական սկզբնաւորութիւնը պզտոնեղան փոխադրութիւնն է: անիկա կը շարունակուի, յարաբերէն ըստանալով նոր եւ տարբեր բովանդակութիւն, սկսած տրիստոսէիստէ իրապաշտութեամբ, մինչեւ Նոր դարու իրապաշտութիւնը, քննադատական-իրապաշտութիւնը, տգիտութեան յատուկ՝ տեղեկական-գիտապաշտութիւնը, Զորք դարու սկիզբէն՝ ընկերային-իրապաշտութիւնը (socialism), ապա՝ գերիրապաշտ, գոյապաշտ եւ անհեթեթի արուեստներուն յատուկ «իրապաշտութիւնը»: Այս բոլոր երեւոյթներուն եւ ուղղութեանց դաշափարաբանական խարխիւր իւրաքանչիւրին իրականութեան ուրոյն պատկերացումն է եւ համապատասխան հակադրեցութիւնը:

Ուրեմն, արուեստագէտը իրապաշտ մըն է այնքան ատեն, որ յատկ կերպով կը սահմանէ եւ կը ներկայացնէ այն՝ ինչ որ ինքը կը նկատէ իսկապէս «իրաւը», գոյացականը, որ այնքան իրական է, որ եթէ դադրի ըլլալէ, ամբողջ իրականութիւնը կը կորոնցնէ գոյութեան պատճառը:

Ստիպոյն իրականութեան բնոյթին ըմբռնումը, ինքնին կայուն եւ անփոփոխ իրապաշտութեամբ մը չէ, այլ՝ սեփական եւ տիրապէթիք պրոցնս մը, որ նոր կացութեանց հետ շփումն՝ բով կը ստանայ նոր հետաւորութիւններ, երբեմն նոյնիօր լքելով իր նախնական զիրքերը: Այս կայունութիւնն է (որուն մէջ սայթաքած են շատեր), որ յաճախ արուեստագէտը կ'առաջնորդէ ձեռնապաշտութեան: Որովհետեւ, եթէ իրականութիւնը ինքնին յարատեւ չարժուածքն է, արուեստը, իր կարգին, չի կրնար կասեցնել իր ընթացքը, որեւէ լը-

ճացում անհրաժեշտորեն կ'առաջնորդէ այլասերումի, ձեւապաշտութեան, իսկ սովորական ձեւապաշտութիւնը (formalism) իր մէկնակէտերով եւ գործունէութեան դաշտով դուրս է արուեստներէն եւ զեղապիտութենէն:

Այսպէս կոչուած, եւ բնականաբար առմամբ՝ «իրապաշտ» արուեստի բոլոր երեւոյթներն ու ղէմքերը միշտ ալ կը մնան, առնուազն յանձնառու արուեստի, ամէնէն հետաքրքրական նիւթերը:

Հայրենի նկարչութիւնը քնդհանուր առմամբ կարելի է կոչել «իրապաշտ», անշուշտ թ մօտ ունենալով այս ստորագրութեան արտակարգ ընդարձակութիւնը: Այս նկարչութեան (ներքին, եւ միջազգային արուեստի մէջ) դասաւորումը ինքնին չափազանց հետաքրքրական եւ կարեւոր աշխատանք է, որուն ուղղութեամբ փոքր քայլ մըն է ներկայ յօդուածը:

«Իրապաշտ» այս նկարչիներէն մասնաւորաբար կ'առանձնացնենք Սարգիս Մուրադեանը (ծնած՝ Երեւան, 1927ին) եւ Յակոբ Յակոբեանը (ծնած՝ Աղեքսանդրիա, 1923ին, ներգաղթած՝ 1963ին): Այս երկուքին իրապաշտութիւնը կը սերտուին անկառաբար եւ մասնաւոր յարաբերութեամբ՝ Սարեանի եւ Աւետիսեանի գիրքերուն:

Մուրադեան եւ Յակոբեան կը կոչուին եւ իրենք զիրենք ալ կը կոչեն «իրապաշտներ», իսկ տալիսն՝ յաճախ եւ սխալմամբ կը կոչուի «աւագեմական» նկարիչ: Առնել «իրապաշտներ» են, որովհետեւ կը նկարեն իրերը, մարդիկը, բնութիւնը, այնպէս՝ ինչպէս որ կը ներկայանան անոնք իրենց տեսողութեան, եւ տնչուտ՝ մտածողութեան, առանց վերացականացումներու (abstraction) կամ անձնական միջոցաւորութեան: Ուրեմն, Մուրադեան, ընդէկ Երեւանցի, կու տայ, եւ տուած է, Հայաստանի իրականութիւնը, իսկ Յակոբեան՝ նախ Եղիպտոսինը (մինչեւ 1962), ապա՝ Հայաստանինը:

Երևութապէս սլորդ այս կացութեան ետին սակայն, կան վիթխարի համեմատութիւններով հարցեր, կապուած ո'չ միայն իրենց իրապաշտութեան, այլեւ՝ զիրենք նախորդող եւ ժամանակակից իրապաշտներուն, որոնց վերջիններէն են այս Երկուքը, ոչ թէ ժամանակագրական կամ որակական նկատումներով, այլ՝ իրենց տեսողութեան ինքնատուութեան: Բնականաբար կան բազմաթիւ տաղանդաւոր ղէմքեր, դազաթներ եւ, անշուշտ, յստակ ուղղութիւններ՝ բոլորն ալ իրապաշտ դպրոցներ, որոնցմէ, սակայն, իւրաքանչէրին «իրականութիւն» կը տարբերի միւսներէն: Իսկ Մուրադեանի եւ Յակոբեանի իրապաշտութիւնը կը զատորոշուի ընդհանուր պատկերէն, իր յաւելեալ՝ նոր-իրապաշտութեամբ:


Այլ առիթներով շեշտած ենք, թէ զեղապիտական որեւէ աշխատանքի համար անհրաժեշտ, առաջնորդող սկզբունքը՝ տուեալ ընկերութիւնը յուղող սապնաղներուն ամբողջական հասկացողութիւնն է: Այս հասկացողութեան դիմաց պէտք է դիտուի արուեստագէտին գործը: Այլ խօսքով՝ անիկա պէտք է արժեւորուի ըստ զինքը լրջապատող իրականութեան հետ իր ունեցած յարաբերութեան: Հետեւաբար, նոյն արժեւորութիւնը կարելի չէ գործածել բոլոր արուեստներուն պարագային: Այսպէս, իրանահայ, ֆրանսահայ, ամերիկահայ եւ սփիւռքահայ այլ արուեստները եւ հայրենի նկարչութիւնը պէտք է դիտուին իւրաքանչիւրը իր պայմաններուն մէջ, իսկ վերջինին պարագային կան յաւելեալ սղդակներ՝ հողը եւ պետականութիւնը:

Եթէ սփիւռքահայ արուեստները բացառող «բնագոյնական» սկզբունքը պատկանէ իրութեան տաղանդին է, հայրենի նկարչութեան պարագա-


յին՝ անկիւս սեփական երկրին մէջ, եւ դարեւ չէ՛ ետք՝ առաջին պետականութեան մթնոլորտին մէջ՝ այդ ազգային ինքնութեան բնութագրումին ուղղւած ճիշդն է։ Մասնաւորաբար արուեստի մէջ, առարկայական ներկայացում կամ բնութագրում գոյութիւն չի կրնար ունենայ։ Ճիշդ է, որ առկայ իրականութիւնը ինքը կը պայմանաւորէ արուեստը, սակայն արուեստի գործը անոր վերարտադրութիւնը ըլլալէ աւելի, դատողութիւն մըն է անոր մասին (ընդհանուր առմամբ կամ կողմերէն մէկուն), եւ այս իմաստով՝ բնութագրում մը։

Մուրադեանի եւ Յակոբեանի իրապատուի իրապաշտութիւնը շրջապատէն կը տարբերի իր արժանական, տեսակ մը «հողային» բնոյթովը։ Հայրենի միւս իրապաշտ գպրոցներէն են «հերոսականը», «առասպելականը», «խաչակրականը» եւ «տոհմիկը»։ Այլ խօսքով՝ անոնց բնութեւն եւ ներկայացուցած իրականութիւնը հերոսականը չէ (Քոչարի եւ Յանջեանի պարագան), ոչ ալ առասպելականը (Կոչոյեանի պարագան) կամ պարզապէս տոհմիկը (չատուրու պարագան, ներստեալ՝ «միամիտ» գպրոցը) կամ տակաւին՝ եւ մասնաւորաբար՝ խաչակրականը — փսեմը, յուկրժականը (Ստրեանի եւ Աւետիսեանի պարագան)։

● Մուրադեանի դեղաբուսական զարդացումին ընդհանուր վերատեսութենէն, առաջին անհարկով կը պարզուի, թէ իր մօտ աստիճանական փոխանցում մը կայ՝ հերոսական, խաչակրական, առասպելական եւ տոհմիկ արժէքներու դունադեղ մակարդակներէն դէպի տարբեր մակարդակ մը, արտայայտուած՝ պատկերներու եւ մտայնաբանութեան յաւելեալ պարզութեամբ



Նմէշ մը Ա. Մուրադեանի գործերէն՝ «Էլտարացիք առաջ»



Ս. Մուրադեանի արուեստը բնորոշող այլ ստեղծում մը՝ «Տեկերնէ»


և բիւրեղացումով: Մուրադեանի «Կամիտասի վերջին գիշերներն», «Որդիները չվերադարձան», մինչև «Տեկերնէ» կամ «Պարզ երկմէի տակ», այս հոլովոյթը աւելի քան յստակ է: Ակադեմականութենէ դէպի նոսր-քրապաշտական և քննադատական խիզախ արուեստ՝ յարաւել ընթացք մըն է իբրև: Դիրքորումի յստակացումն է, որ օգնած է իրեն իրականութիւնները տեսնելու ներքնապէս միացած, ներդաշնակ տեսութիւններէ: Այս իրողութիւնը կը մտածանշեն իր գոյները և, անշուշտ, համադրական հմտութիւնը: Մուրադեան զարգացուցած է զունաշարերու արտասովոր բաղադրութիւնները, այնպիսի՝ ձեւով մը, որ սրելէ պատաստի մէջ, ամբողջ զունաշարը ներկայ է մէկ գոյնի մէջ, և այս մէկը՝ բոլորին: Տեսողութեան հասունացումը, այլ խօսքով՝ գատողութեանց վճռականութիւնը կ'արտացոլան համադրութեանց մէջ: Մուրադեանի տիպարները անբաժանելի մասնիկներն են բնութեան, որ կը չլիպապահ զիրենց: Սակայն անոնք այնպիսի՝ ձեւով մը կը ներկայանան, որ կը պարունակեն այդ իրականութեան ներքին տրամաբանութիւնը, կառոյցը, բնոյթը: «Որդիները չվերադարձան»-ին մէջ (1968), երկու ծերունիները, նաեւ խորքի կիսով երեւցող տիպարները կը բացատրեն ճշտօղ, ճշմող թափերը հաեւի լեռներուն, որոնք իրենց ահաւոր տիպութիւնը անպայմանօրէն ծերունիներուն վիշտէն չէ, որ կը ստանան: Այդ լեռները կը պարզեն գոյութեան

դուգահեռ եւ ներդաշնակ վիճակ մը՝ փերսեմիներուն վիճակին, Մուրադեանի ներկայացուցած այս իրականութեան մէջ այնչէ կայ առճակ, կամ հերոսական, կամ կոթողային: Լեռները վսեմ, յաւերժական ինքնութիւն մը կամ աշխարհ մը չեն մասնանշեր, իսկ դաշնային ձառնդնաշարք (մոխրագոյն-կապոյտ-սեւ-դեղնաւուն) անդարմանելի կարուստի, փլուզումի գիտակցութեան միայն կրնան առաջնորդել դիտողը: «Պարզ (կամ խաղաղ) երկնքի տակ» գործը (1973) կամ անկէ առաջ՝ «ՏԵԼԻՖՈՆ»-ը (1970) երթառարար գերանդին ներկայ եւ արագայ կացութեան, պատանիներու հոգեկան եւ ընկերային հաւասարակշռութեան հապուած հարցերուն մասին ցարդ կատարուած ամէնէն իրապաշտ եւ խոր վերլուծումներն են (առհասարակ, ոչ թէ միայն նկարչութեան մէջ): Մ. Սարեանի (1890) ամբողջ գործը, սկիզբէն ի վեր, եղած է աղջային ինքնութիւնը դաշնադ եւ բովանդակաւ տշխարհ վերականգնել, վերստեղծել: Իսկ Մ. Աւետիսեանի (1928) արտեւումը՝ ժողովուրդին դարաւար եւ յաւերժական օգիւնի պատկերացումն ու զետեղումը եղած է այդ կոթողային կառույցին մէջ:

Մուրադեանի իրապաշտութիւնը սակայն տարբեր մակարդակի վրայ կը գտնէ իր առարկան: Եթէ առաջին երկուքին պարագային ազնուագոյն իրականութիւնը իտէալականն է, այն՝ ինչ որ պէ՛տք է ըլլայ, որպէսզի ազգը վերականգնել, Մուրադեանի համար անիկա, այսինքն՝ իրականութիւնը, իսկապէս գոյութիւն ունեցողն է, առկայ իրականութիւնը՝ իր մասը եւ պայծառ գիծերով: Սարեան կը տեսնէ լեռները, դաշտերը, մարդիկը, կենդանիները, պտուղները խորհրդանշիչներ, որոնք «բառերը» կը կազմեն երազ մը պատմելու համար ստեղծուած լեզուի մը համար, որ իր արուեստն է: Աւետիսեան «կը պայթնէ» տուեալ իրականութիւնը, կը փրէ՛կ կեդիւր՝ հասնելու համար կորիզին, անո՛ր՝ որ կը կազմէ ազգային անհատականութիւնը, եւ որ իր արուեստով կը վերածուի յաւերժական բոցի մը: Մուրադեան ինքնուրոյն, տեսակ մը բնագոյնի փոխոփոխութեամբ մը, մեղմօրէն, առանց զեղարուեստական ծալրայեղ միջոցառումներու (Աւետիսեանի նման) «կ'որսայ» իրերու էութիւնը, ոչ թէ անոնց իտէալականացումները: Արդիւնքը՝ տխուր, բանաստեղծական, նոյնիսկ քնարական արուեստ մըն է, իսկ այն՝ ինչ որ կը փրկէ Մուրադեանը ամուլ յոռետեսութենէ կամ սիմիսիլիւնէ, իր խորագոյն հիմնականական կեցութեանն է, այսինքն՝ սէրը այն մարդոց եւ կացութեանց, զորս ինք կը ներկայացնէ: Մուրադեանի գործերը կը կառուցւին հաւասարակշռութեան արատաւոր կերպով նուրբ կէտի մը շուրջ: Այդ կէտը սահմանն է իրապաշտութեան եւ յոռետես գերիրապաշտութեան միջեւ: Իսկ այն՝ ինչ որ կը պահէ զինքը եւ իր արուեստը այդ կէտին վրայ, իր հիմնականին է: Մուրադեանի իրապաշտութիւնը՝ Սարեանի եւ Աւետիսեանի «բնագոյնական» իրապաշտութենէն կը տարբերի իր փաթեթիզումով, բան մը, որ բացակայ է առաջիններէն: Մուրադեանի տեսողութիւնը տրամաթիք է եւ, ա՛յդ պատճառով՝ ողբերգական: Այդտե՛ս մը վտանգը կամ առնուազն պահած, քողարկուած ներկայութեան սարսափը կայ իր գործերուն մէջ: Հաւանակ իր պաստառներուն մթնոլորտային թափոնութեան, հոն կայ մեծարենցեանն ուրախութիւն մը, որ կը բխի իրմէ, յաղթահարելով համառարած գործութիւնը: Սարեան եւ Աւետիսեան մոռովին եւ զգացականօրէն անցած են այս հանդրուար եւ կառած այնպիսի իտէալներու, որոնք ուրախութենէ եւ տխրութենէ անդին, «բնագոյնական», տեղեկական դուրսութիւն-



Մեկնադարձային «Մարգարիտ» և «Բոլոր»



և «Բոլոր» մը «Մարգարիտ»-ը


Ներքին: Ահա թէ ինչու Մարգարիտ կենդանիները կոթողային լեռնաշխարհի մը ստորոտէն շարժող բուռն և մութ իրերու ընթացք մը կը կազմեն, առանց կարենալ ապականելու իրականութեան վեհութիւնը: Աւետիսեանի մօտ, կըրկին, բացակայ է վաթեթիւմը, որովհետեւ այն ողին, որ ինք վերականգնող-ցած է, յարաանկողին բողբոջաւ, ապրող էութիւն մըն է, անկախ ժամանակին եւ նիւթին կաշկանդումներէն, հետեւաբար՝ ազատ անոնց դրական կամ ժխտական ազդեցութեան:

Յակոբեանի արուեստը կու գայ հնչել ինչու տհաշուութիւն, գուժելու այն «աղջար», որ յուշայն ներկայ է Մարգարիտի մօտ, որ սակայն կասեցուած է այս վերջինին հիմանդէմով: Յակոբեանի «Եղիպտական» շրջանի (1954-1962) գործերը հիմանադրական արուեստի՝ արուեստի պապականութիւն կրնան նկատուիլ: Նախընտրութիւնն էր, զիմանկարներէն մինչեւ «Մարգարիտ» (1963) անկիւնադարձային պատկերներ, ինքնին կոթողային գործ մը, Յակոբեան «Եղիպտական» քննադատութեամբ մը նկատած է իրականութեան ստորին, մութ խաւերը՝ մեծ յուզումով և վարպետութեամբ: Մայրաքաղաքէն մեղմապաշտ իր ներդրումէն և իրականութեան համապատասխան իր պատկերացումներէն՝ Յակոբեան ուղղած է ձերբազատուիլ և ներգաղթած է «Բոլոր» եւ «Բոլոր» անհատական-հոգեբանական դիմանկ վրայ այս անկիւնադարձը նոր գործն է. Հայաստանի մէջ, Յակոբեան՝ անկարող հասնելու Մարգարիտի վերամարդկային իտէալիզմին, կամ՝ Աւետիսեանի բողբոջապատմութեան, նաեւ անկարող ձերբազատուելու իր վրայականութենէն, նկարած է քնութիւնը: Այդ նոր աշխարհին մարդոցն ու տարածական տնտեսութիւն, Յակոբեան Լրիւր ժամանակ չէ յաջողած թափանցել այդ իրականութեան իսկական կառուցին: Անիկա պարզապէս անտեսելի ընդգծում մը, եւ հոգեկան-զգայական տեսողական ուժով մը, կըցած է հանճարեղօրէն վերականգնել իր տպաւոր-

բուժիչները, աւելի ճիշդ՝ իր դատումները այդ իրականութեան մասին, անկեղծօրէն, առանց նախատուելիքի:

Ահա թէ ինչու իր պոյները աւելի հարազատօրէն հայաստանեան (բայց աշխանայի՛ն) բնութիւնը կը պատկերացնեն, քան թէ հայրենի նկարիչներէն ունէ մէկունը: Յակոբեան առանց կրակներու կամ բոցափառումներու, «մերկ» աչքով մը տեսած եւ պարկեշտօրէն վերարտադրած է իր տեսածը: Վաթսուհական թուականներու կիսուն կատարուած իր «Ոչխարմերու սպամոլը», կամ՝ «Լեւնիականնում փողոց մը», կամ այդ շրջանի, եւ ժինչեւ այսօր, իր բնանկարները իրական եւ ճշգրիտ «բնորոշականութիւններն» են այդ տեսարաններուն, բայց միաժամանակ ծայրայեղօրէն եւ իսկապէս հիւանդագին վիճակներու ուղղակի արտայայտութիւնները:

Յակոբեանի 1962–1976 շրջանը կրնայ քննադատ–իրապաշտ կոչուել (բայց երբեք՝ դերիրապաշտ): 1976էն ետք, ան օտարմանարար անցած է սիմպոլիք–իրապաշտութեան կողմը: Իր իրապաշտութիւնը, ընդհանուր առմամբ՝ Մուրադեանի կեցուածքները հասցուցած է իրենց տրամաբանական եզրակացութեան, սակայն հիւանդագին դարձուածք մը փոխանցելով անոնց: Մուրադեան իսկական հիւանդագին մըն է, այդ պատճառով անիկա քնական դիմադրողականութիւն մը ունի «հիւանդագինին» եւ «անհեթեթին» դէմ: Յակոբեան անհատապաշտ մը, աւելի ճիշդը՝ ներհայեաց անհատականութեան տէր է. ան ծնած եւ հասունցած Սփիւռքի իրականութեան մէջ եւ տառապած անոր տաղնապաներով: Ահա թէ ինչու մարդը իր իրողական կշիռքով ինկած է Յակոբեանի արուեստէն, անդի տալով նոր իրականութեան ահաւոր ամայութեան դիմաց: Այդ ամայութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ իր սեփական անկարողութիւնը վեր ուժելու, բմբռնելու երեւոյթներուն էութիւնը:



Յակոբեանի աքցանն՝ բնական կապիտալիզմի շրջանը

ներ: Այդ բնանկարներուն մէջ, անմարդարեակ փողոցներուն, դաշտերուն մէջ թակայն, մնացած է միայն հանդիսատեսը՝ Յակոբեան ինքը, իբրեւ վկայ: Իր գործերուն մէջ յաճախ ներկայ, միայնակ կանգնած «սիւնը» իր ներկայութեան, գոյութեան հաստատումն է, «ես-ես»ը, տեքարթեան «ego»ն, դրականութիւնը եւ մեկնակէտը:

Միմայոյի գործը միշտ բնկրկում մը կը նշէ, սայթաքում մը իրապաշտութենէ դուրս: Իսկ Յակոբեանի պարագային անիկա դրական իմաստներ փրկող ճիգն է եւ, այս իմաստով՝ փոխանցման շրջան մը (լուսագոյն պարագային): Իր «Աւցանանք» հակիրթ սակտներուն մօտ, կամ ձեռնոցները եւ «մանրէկանք», կամ անգլուխ մարդիկը, անամէջ վերարկուններով ամբողջները, եւայլն, իբրեւ խորհրդանշական արժէքներ՝ արտակարգօրէն նոր գաղափարներ չեն առաջարկեր: Բայց մինչեւ 1976, աւելի քան քսան տարիներու գրեթէ հիւանդագին արուեստէ ետք, այս ճիգը՝ երեւոյթներէն անդին, շօշափելի իմաստներ գտնելու, գրական քայլ մըն է: Որովհետեւ Յակոբեան զոլաշական հիւանդագին իրապաշտութենէ յաճախ ինկած էր «զեւ-զարուեստական հիւանդախտութեան» (hypocondria) մէջ, այսինքն՝ ապստամբանաձէ՝ հիւանդութեան մը ետին, անկարող առողջ վիճակի պարտադրած յանձնառութիւններէն: Յակոբեան գիտակից է այն իրողութեան, թէ իրականութեան իր հիւանդ պատկերացումը անհրաժեշտօրէն այս վերջինին մօտին առարկայական գաղաղութիւն մը չէ, որովհետեւ ինք կը տառապի «ուրախ բաներու» եւ «պայծառ դոյներու» բացակայութենէն ինքն իր մէջ, բայց, միւս կողմէ՝ չի ձեռնարկեր անոնց փնտռութիւն: Իր վերջին գործերուն մէջ պատուհներ, ծաղիկներ՝ լուսաւոր դեղիններով եւ նարնջագոյններով, անկեղծ փորձեր են տեսակ մը քաղցրութիւն, ջերմութիւն ներմուծելու իր դառնահամ աշխարհին:

Սարեանի եւ Աւետիսեանի «բնադանցական» իրապաշտութենէն, Մուրադեանի անողոք իրապաշտութեան եւ, վերջապէս՝ Յակոբեանի հիւանդագին, բնապաշտական-իրապաշտութիւնը, հայրենի նկարչութեան մէջ կը նշուի մարութի իրապաշտ արուեստի արտասովոր զարգացում մը, որ իր նմանը չունի: Իրականութեան եւ արուեստի յարաբերութեան եւ վերջինին ընդթիւն եւ գերին առնչուած հարցերը կը ներկայանան վերջ յիշուած նկարիչներուն գործերուն մէջ, նաեւ անշուշտ՝ բազմաթիւ այլ տաղանդաւոր ղէմքերուն: Ռամբի, միամիտ եւ տակաւին քարոզչական իրապաշտութենէ հիմնովին տարբեր՝ նոր-իրապաշտութեան մը զարգացումին հանգրուանները կը նշուին այս նկարիչները, իսկ անոնց գործերը իրապաշտ արուեստի (բառին բոլոր տարբերակները եւ համապատասխան դպրոցները ներառեալ) լուսագոյն նմաններէն կրնան նկատուիլ:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆԸ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Յուլիանոսի դրական ժառանգութեան մէջ կարեւոր տեղ են բռնում նրա նամակները, որոնք շօշափում են բազմատեսակ իրողութիւններ ու վերաբերում են Քաղմաթիւ անձանց: Ժամանակին, ըստ ասանդարար փոխանցուած ժողովածուների կամ յիշատակումների, նրան էին վերադրւում 87 նամակներ, բայց, մասնագէտ հետազոտողների համոզումով, դրանց թւում բաւական չափ էին եւ կեղծերը: Նամակների ժամանակակից, ամենավերջին հրատարակութեան մէջ արդէն պարունակւում են միայն 62ը, իրեն վաւերական, ինչպէս եւ 14 անհրաժեշտ ու անանուն փոխանցներ, այստեղից աշխտեղից հաւաքուած:

Կեղծ նամակների թուին է պատկանում, օրինակ, նաեւ իբր թէ 363ին Հայոց Արշակ Բ. թագաւորին դրուած՝ բաւական տարօրինակ նամակը, որը բնաւ չի պատշաճում, ո՛չ ձեւով, ոչ էլ բովանդակութեամբ, ո՛չ Յուլիանոսի եւ ոչ էլ նման պարագաներում ընդունուած գրելակերպին: Այդ հարցին ժամանակին անդրադարձել է նաեւ ակադեմիկոս Յակոբ Մանանդեանը՝ իր «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» աշխատութեան մէջ (Հատոր Բ., Մասն Ա., Երեւան, 1957 թ. էջ 175—176), համամիտ լինելով ուրիշ պատմաբանների հետ եւ գտնելով, որ նամակը հաւանօրէն ունի մոլեռանդ քրիստոնեայի կողմից է յօրինուել՝ ուրացող կայսրին նախատեսելու եւ վարկաբեկելու նպատակով: Այդ նամակը, յիշատի, չի պարունակւում

նաեւ արդի գիտական-հրատարակութիւնների:

Այժմեան հրատարակութեան մէջ նամակները խմբաւորուած են ըստ բովանդակութեան, այսինքն՝ թէ ինչպիսի մարդկանց կամ հաստատութիւնների են յղուած եղել: Այսպէս, «Բարեկամներին, ուղեկիցներին, համախոհներին» ուղղւած է 16 նամակ, «Յարգաւած ու վստահելի անձանց»՝ 10ը, «Այլախոհներին եւ հակառակադիրներին»՝ 6ը, «Պաշտօնեաներին, զինուորներին, քրմերին»՝ 21ը, «Ձրադմուճեալին (մասնադատական) խաւերին, ցանցագնդին, համայնքներին»՝ 11ը: Ահա տղա նամակներից երկուսն էլ ներկայացւում են այստեղ, որովհետեւ վերաբերում են հայերի, մէկը՝ Պրոյեկտիստ-Պարոյրին յղուած նշանաւոր նամակն է, որը սովորաբար նկատի է առնւում եւ յիշատակում ուսումնասիրողները կողմից, իսկ միւսը՝ յղուած է մի այլ, նոյնպէս աչքի ընկնող հայի, որը սովորաբար անուշադրութեան է մատնւում: Խօսքը վերաբերում է Յուլիանոսի սենեկապետ Եւտերիոսին:

Նախ՝ ներկայացնենք Եւտերիոսին յղուած շատ կարճ նամակը, որը գետեղւած է «Բարեկամների, ուղեկիցների, համախոհների» բաժնում: Ահա այդ նամակը.

«Յաւիւամասք Եւտերիոսին. Մեքե պարում եմք՝ փրկուելով աստուածների կողմից: (Ուստի) շնորհակալութեամբ զան մատուցիր նրանք՝ ինձ համար. դու դիւանով զան կը մատուցես ոչ թէ մի առան-

մին մարդու, այլ բայժը Հելլենիսի համար: Եթէ դու ժամանակ ունենայիր՝ նաւարկելով Կոստանդնուպոլիս հասնելու համար, ես իմ քեզ եետ հանդիպելուն ոչ փոքր արժէք կը տայի:

Նամակի սկզբում գրուած արտայայտութիւնները հիթանոսներն յատուկ ծիսական արտայայտութիւններ են ուցոյց են տալիս, որ Եւտերիոսը եւս հեթանոս էր: Մասնագէտների կողմից ենթադրուած է, որ նամակը գրուել է 361ի վերջին կամ 362ի սկզբին, երբ Յուլիանոսն արդէն կայսր էր եւ գտնուած էր Կոստանդնուպոլսում: Նամակի բովանդակութիւնից կարելի է կոահել, որ Եւտերիոսն այդ ժամանակ կարող էր գտնուել, Կեսարիայում նրա դիւանագիտական առաքելութիւնն աւարտուելուց յետոյ, փոքրասիական որեւէ վայրում, որպէսզի Բոսֆորի վրայով «նաւարկելով» Կոստանդնուպոլիս հասնէր: Բայց աւելի կարեւոր է իմանալ, թէ ով էր Եւտերիոսը:

Եւտերիոսի մասին բաւական յստակ եւ պատկերաւոր տեղեկութիւններ են տրուած չորրորդ դարի պատմագիր Ամիանոս Մարկելիոսի երկում: Ամիանոսը, այսպէս ասած, «Հռոմէացած յոյն» էր: Մնուել է 330ին Անտիոքում եւ վաղեմանուել 395ին Հռոմում: Քրիստոնեայ չէր: Անուանի ընտանիքի զաւակ էր եւ առաջնակարգ կրթութեան տէր մի մարդ: Երիտասարդ տարիքից (մօտ 20 տարեկանից) ծառայում էր կայսերական հեծելազօրում, իբրեւ սպայ: Մոտեցել է բազմաթիւ կռիւների, ինչպէս ասում է՝ «Հռենոսից մինչեւ Եփրատ ու Տիգրիս»: Յուլիանոսի պարսկական արշաւանքի ժամողումից յետոյ վերադարձաւ ծննդավայր, այնտեղից էլ ուսումնական ճամբորդութեան զիմելով՝ եղաւ Եգիպտոսում, Յունաստանում, Թրակիայում, մինչեւ մօտ 381 թուականը, երբ վերջնականապէս բնակութիւն հաստատեց Հռոմում, սերտ կապեր հաստատելով Սենատի պաշտօնողական շրջանների հետ, միաժամանակ գրելով իր ընդարձակ պատմագրութեւն, որի մի մասը (սկզբի 13 գրքերը) կորել է, իսկ մնացածն էլ

(18 գրքը) գրել չէ՝ հեղինակին ու ժամանակաշրջանը ճանաչելու համար:

Ամիանոսի աշխատութեան 16րդ գրքի 7րդ գլուխը ամբողջովին նուիրուած է Եւտերիոսին, այսպիսի վերնագրով. «Յուլիանոսը Եւտերիոսի միջոցով պաշտպանութիւն է գտնում Կոստանդնուպոլսի մօտ. Եւտերիոսի գովիք»: Եւտերիոսի մասին խօսւում է նաեւ 20րդ գրքի 8րդ գլխում, միշտ էլ դրուատական շնչով:

Արդ, Եւտերիոսը ծնուել է Հայաստանում («ծնունդով հայ էր»), ազնուական (ազատների դասին պատկանող) ընտանիքում: Միջոտհմային հակառակութիւնների բերումով, փոքր տարիքում առեւանդուել է հարեւան թշնամի տոհմին պատկանողների կողմից, ամորձատուել ու ուզա ծախուել Հռոմէացի առեւտրականներին: Վերջին հաշուով նա ընկաւ Կոստանդնուպոլսի Մեծի պալատը, վաղ տարիքից աչքի ընկնելով իր մարդկային ու իմացական թարեմասնութիւններով: Հետագայում բարձր պաշտօնի կոչուեց Կոստանդնուպոլսում, բայց թէ ինչպիսի՞ յայտնի չէ, վերջում էլ նշանակուեց Յուլիանոսի սենեկապետ, երբ նա դեռ կեսար էր Գաղիայում: Յուլիանոսը ընդհանրապէս խոր հակակրօնք ունէր ներքինների դասի հանդէպ, բայց, իբրեւ բացառութիւն, անվերապահօրէն վստահուած էր Եւտերիոսին, նոյնիսկ հանդուրժելով, որ վերջինս երբեմն քննադատի իր այս կամ այն անյարմար վարմունքը կամ արտքը:

Յուլիանոսը երկու անգամ Եւտերիոսին յանձնարարել է դիւանագիտական փափուկ, աւելի ճիշդ՝ փշոտ, առաքելութիւն: Առաջին անգամ՝ 356/357ին, ներքին Միլան ուղարկեց, Կոստանդնուպոլսի մօտ կայսեր կողմից պաշտօնազրկուած աստիճանաւոր Մարկելոսի հակա-յուլիանոսեան բանասրկութիւնները հերքելու: առաջագրանքով: Իսկ երկրորդ անգամ՝ 360ի առաջին ամիսներին, փարիզեան բուռն ղեպքերից յետոյ, Եւտերիոսը մի այլ բարձրաստիճան պաշտօնեայի հետ ուղարկուեց Արեւելք՝ Կոստանդնուպոլսի կայսեր մօտ, թիւրիմացութիւնները հարթելու առաջագրանքով: Դէպքերը չարագրուեցին մի նամակով:

Դրուեց նաեւ մի այլ նամակ՝ բողոքովին դադարեց բովանդակութեամբ։ Եւ բանադնացներին յանձնարարուեց, որ տեղ հասնելուց յետոյ իրենց կողմից գրեն մի այլ անդեկադիր, աւելի մանրամասնօրէն, Հենց իրենց տեսածներէ ու լսածներէ մասին։ Բանադնացները մեծ դժուարութեամբ հասան Կեսարիա, զգալի ուշացումով ընդունուեցին կայսերկ ողուայացաւ ու ոչնչով չարձագանգեց, որոշ ժամանակ անց՝ Հենց ինքը բանադնացներ ուղարկելով Յուլիանոսի մօտ։ Եւ ահա յիշեալ Եւտերիոսի վերաբերեալ Ամիանոս Մարկելինոսը միայն գերազանցաւ զովասանքով է արտայայտուած, ասելով նաեւ, թէ իր ասածներին քատերը թերեւս կարող են չհաւատալ, քանի որ «նայնիսկ Նումա Պամպիլիուսը կամ Մուկատէսը ստախոս կը համարուէին, եթէ նրանք արեւէ քարի խօսք ասէին մերքիններէ մասին ու իրենց խօսքերը երդումով հաստատէին»։ Մինչդեռ՝ «փշաքփերի միջեւ եւս վարդեր եմ անում ու վայրի կնիքաւորներին սէջ եւս տեղտեղ ու երբեմն հեղ կնիքաւորներ եմ լինում»։ Ապա «համառօտարար» պատմութիւն է «նրա կեանքի ամենակարեւոր իրողութիւններէ մասին»։ Հետ պատմագրի, Եւտերիոսը «չառնալի սուր միտք էր ցուցարարութեամբ մեզ ու խնամած գործեր բնական», «նաեւ ունէր մի իսկապէս արտասովոր յիշողութիւն եւ ջերմեամեղ խանդով ցանում էր քարի գործել, մի մարդ էր, որ ամէն ժամանակ կարող էր յարմար խորհուրդ տալ»։ Նշում է Եւտերիոսի զգաստ միտքն ու նկարագրի ամբողջութիւնը, հաւատարմութիւնը, սակաւագետութիւնը, դադանապահութիւնը, ընչասիրութիւնից գերծ լինելը։ Վերջապէս է, թէ նա Հռոմում «հանգիստ խղճով» ապրեց մինչեւ ծերութիւն, յարգելով ու սիրելով բնակութեան բոլոր խաւերի կողմից, մինչդեռ ուրիշ պատակից մարդիկ, սովորաբար, ներքին ու աններքին ճանապարհներով հարստութիւն դիզելով, ծերութեան օրերին հեռուոր անկիւններ են փնտռում՝ ախտեղ հաւարակութեան աչքից հեռու իրենց հարբատութիւնը սպառելու եւ վայելելու համար։

Մարկելինոսն ասում է, թէ ինքը հին գրքերը հետազոտելով եւ ներքիններէ կեանքը ուսումնասիրելով՝ չի կորուզանում գտնել մէկը, որին կարողանար համեմատել Եւտերիոսի հետ, այնքան եզակի էր նա, իր նկարագրի ու կարողութիւնների ներգաշնակ ամբողջութեամբ։ Իրեւ մի վարդ փչէ ջանկարպատի մէջ»։

Յուլիանոսի Պրոյերեսիոս-Պարոյրին յղած նամակը գիտեղութեամբ է աշխատհերի եւ հակառակորդների» բաժնում։ Ահաւորակ այդ նամակը, որը առեալ գէղարում, ի հարկէ, թարգմանութիւն է թարգմանութիւնից, հետեւապէս պատմական նրբութիւնները կարող են եւ այսպէս թէ աչքից մասամբ հարթուել, բայց ընդհանուր բուն նիւթն ու ոգին մնում է մատչելի ու փոխանցելի նաեւ մեր օրերի համար։

«Մոփեստ Պրոյերեսիոսին. Ես ինչպէս կարող էի չաղջունել փառասէղ Պրոյերեսիոսին, մի մարդու, որն իր ճառերը հասցնում է այնպէս՝ ինչպէս որ գետներն են իրենց ջրերը (բարձունքներից) քափում դաշտավայրերի վրայ, մի մարդու, որն իր ճառերում մրցում է Պերիկլեսի հետ, միայն թէ առանց «Հելլադան շփաթութեան ու խռովութեան մատնելու»։ Բայց դու չպէտք է դարմանա, որ ես քեզ յայտ իմ համակուս խօսքի լակոնակեան հակիրճութիւնն եմ նախընտրում։ Քանիզի գիտուններիդ համար վայել է սեր ճառերը հանգամանօրէն ու հոյակապօրէն շարադրելը, մինչդեռ մեզ համար, ձեզ հետ յարաբերուելիս, սեղմ խօսքն էլ բաւական է։ Դու պէտք է որ, անշուշտ, իմանաս, որ չորս կողմից պարտականութիւնների մի հեղեղ է քափում վրաս։ Իմ վերադառնալու պատճառների մասին ես ուզում եմ քեզ, եթէ դու պատմական երկ գրելու լինես, ամէն ինչ ճշգրտօրէն ներկայացնել, ընդամենն քեզ յանձնել ցամակները՝ իրեն գրութեւր ապացոյցներ։ Իսկ եթէ դու վճռել ես մինչեւ խոր ծնութիւն եւ քո ուժերի սպառումը ամբողջովին մոփեստի քո ճարտասանական պարապմունքներին ու քանգերին, ապա քերես չկամեմա կշտամբել նաեւ իմ լուսինը»։

Մանագէտները, այս նամակի բո-

վանդակութիւնը վերլուծելով եւ այլ նա-
մաների հետ համեմատելով, գտնում
են, որ դա գրուել է 361-ի վերջին շաբաթ-
ները ընթացքում, Յուլիանոսի Գաղիա-
յից Կոստանդնուպոլիս հասնելուց յե-
տոյ, կամ էլ՝ մի քիչ աւելի շատ, յամե-
նայնդէպս, միայն նրա նիւ հաւնելուց
յետոյ, Կարելի է կուսնել նաեւ, որ Յու-
լիանոսն արձագանդում է նախապէս ըս-
տացուած մի նամակի, որի մէջ հաւանա-
բար Պրոքրեսիոսը որոշ յիշեցումներ ու
հարցումներ է արել: Այդ պարագայում
ամէն ինչ աւելի քան հասկանալի է դառ-
նում, այլապէս՝ անկարելի է կողմնո-
րոշուելը:

Նամակի սկզբում Պրոքրեսիոսի
անձն ու արուեստը մեծարելը հասկանա-
լի է ինքնին եւ իրովին ուշադրաւ: Սա-
կայն որոշ ծանօթագրութեան կարիք ու-
նի Պերիլլէսի առթիւ վկայակոչուած
հատուածը: Յուլիանոսն իր ժամանակա-
կիցներին նման, յաճախ նրանցից էլ ա-
ւելի, առհասարակ սովորութիւն ունէր
իր խօսքը համեմել յունական դասական
գրականութիւնից մէջըրելուով հատուած-
ներով, այլաբանութիւններով, դրանով
իսկ միաժամանակ ցոյց տալով իր զար-
գացածութիւնն ու լայն մտահորիզոնը:
Այդպէս էլ այս գէպը: Հատուածը
վերցուած է Արիստոփանի «Ալքարնացի-
ները» կատակերգութեան երկրորդ տեսա-
րանից, երբ Դիկայոպոլիսը ներկայացը-
նում է ժամանակի յունական հանրային
կեանքի որոշ երեւոյթներ, ընդամենն բա-
ցականչելով նաեւ հետեւեալը.

«Պերիլլէսը՝ Ոլիմպացիէն, քարկուքեան
մէջ,
Հելլադաւ շաճի ու որոտով
խառնակութեան մտովնց»:

Յուլիանոսի վկայակոչութիւնը պա-
տահանութիւն չէ, ոչ էլ սոսկ ձեւի
համար, այլ արտացոլում է իր ժամանա-
կի յատկանշական իրականութիւնը: Նա
Պրոքրեսիոսին ճարտասանութեան մէջ
մրցակից է համարում Պերիլլէսին, բայց
միաժամանակ վերապահութիւն անում,
«միայն թէ առանց... խռովայոյզ հե-
տեւանքներէ: Եւ, յերաւի, Պրոքրեսիոս-

սը իրեն շատ գուսպ էր պահում Յուլիա-
նոս - Կոստանդիոս հակամարտութեան
ինդրում, կրակի վրայ իւր չէր լցնում,
եւ զա գիտէր ու զնահատում էր Յուլիա-
նոսը, այլապէս ոչ մի գէպընդ կանգ չէր
առնի նամակում ասուածի վրայ:

Հասկանալի է նաեւ «խօսքի» հակիր-
ճութեան դրոյթը: Ուրիշ գէպերում
եւս Յուլիանոսը շեշտում է իր այդ նա-
խադրութիւնը՝ թէ՛ իրրեւ անհատ մարդ
եւ թէ իրրեւ պետական գործերով ծան-
րարեւոնուած բազմազան գործիչ, որի
համար թոյլատրելի չեն երկարապտու-
ն ու պերճաշուք զեղումները: Բայց Պրոք-
րեսիոսի պարագայում հաւանաբար գեր
է խաղում նաեւ նրա ոչ-հեթանոս, «այլա-
խոհ» քրիստոնէայ լինելը, որի հետ Յու-
լիանոսը խօսում է անընդ յարգանքով,
պատկառանքով, պահելով հանդերձ որոշ
հեռադրութիւն: Այդ գուսպ վերապա-
հութիւնը տուեալ պարագայում բացառա-
րեյի է: Յուլիանոսի՝ իր համախոհներին
ու բարեկամներին դրած նամաները,
իրրեւ կանոն, այդքան գուսպ չեն, այլ՝
մտերմական ու արտայայտ արտայայտու-
թիւններով լի, ազատորէն շարադրուած:
Պրոքրեսիոսի պարագայում ակնյայտ է
փափկանկատութիւնը ժամանակի հան-
գուցային հարցերի հանդէպ:

Ակնյայտորէն, շատ հետազոտողներ
ճիշդ չեն ըմբռնել նամակի վերջին տո-
ղերի իմաստը: Ահա թէ ինչու, դրա վը-
րայ հիմնուելով, ամէնուրեք այն դրոյթն
է տարածուել, թէ իրր Յուլիանոսը Պրո-
քրեսիոսին առաջարկել է իր գործերի
պատմագիրը դաճել, թէեւ նա ինքը ան-
ձամբ ամէն ինչում նախընտրութիւն էր
տալիս Լիբանիոսին: Նախ՝ անհաւանա-
կան է, որ կայրը նման մի առաջարկու-
թիւն անէր Պրոքրեսիոսին, տեղեակ լի-
նելով նրա ճարտասանական գրադուսնե-
րի բնոյթին ու, մանաւանդ՝ խիստ առա-
ջացած տարիքին: Եւ ապա՝ նամակից
քնաւ չի երեւում, թէ իրականում հենց
այդպիսի առաջարկութիւն եղել է: Այդ
կէտի վրայ ուշադրութիւն են դարձնում
նաեւ ժամանակակից որոշ հետազոտող-
ներ, Յուլիանոսի նամակը բոլոր կողմե-
րից հիմնովին վերլուծելուց յետոյ, ա-

ւելի շուտ եղրակացնելով, թէ նամակում հիմք չկայ՝ Պրոյերենիսին պատմագիր դարձնելու մտադրութեան համար:

Յուլիանոսի Պրոյերենիսին ուղղութեամբ խօսքերի բնագրային ու ենթարնագրային իմաստն այն է, որ՝ եթէ դու որեւէ նկատառումով պատմութիւն գրելու լինէիր, ապա ես պտտրասա կը լինէի զեզ վստահել իմ տրամադրութեան տակ դո՛ւնուղ դրաւոր փաստաթղթերը, առաջին հերթին ներթի հետ կապուած այն նամակները, որոնցից կարելի է անմիջապէս հասկնալ նաեւ իմ Գաղիայից Արեւելք վերադառնալու բուն պատճառները: Իսկ եթէ ոչ (աւելի ճշգրիտ՝ քանի որ ոչ)՝ ներողամտիւ հղիւր եւ աւելին մի՛ պահանջիր ինձնից, թոյլ տուր, որ այդ կապակցութեամբ լուսթիւն պահեմ: Այդպէս պատասխանելը կուհանէ է տարիս նաեւ, որ Պրոյերենիսը յատկապէս այդ ներթի շուրջ որոշ հրատապ հարցումներ

է ուղղել Յուլիանոսին, որպէսզի նրա «առաջին ձեռքի» բացատրութիւններից լուսարտունի ինքը: Ահա թէ ինչպիսին է հարցի պատմութիւնը: Գոնէ այդ նամակից չի բխում, թէ Յուլիանոսը իսկապէս առաջարկել է Պրոյերենիսին իր պատմագիրը դառնալ, իսկ նա էլ իբր թէ մերժել է: Նման առաջարկութիւն չի յաշտակուած նաեւ այլ հաւաստի աղբիւրներում:

Այդ պատմական նամակի մէջքերում մով ու յարակից բացատրութեամբ էլ կարելի է փակել այս ուսումնասիրութիւնը՝ Պարոյր Հայկազնի ու նրա մի շարք տկանաւոր ժամանակակիցների վերաբերեալ, որոնք այս կամ այն չափով աղբնուել են Հայաստանագրութիւն անվանաւոր ճարտասանի գործունէութեանը:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(Շաբ. 4 եւ վերջ)

ՕԳՏԱԿՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այսպիսի մի առումնասիրութիւն պատրաստելու համար, բնականաբար, պէտք է յիշուել համապատասխան մասնագիտական կամ յարակից գրականութեան վրայ: Արդ, առեալ դեպքում իմն համար հիմք են ծառայել առաւելագու գերմանացի ժամանակակից երաստագիրութիւնները, մասամբ էլ՝ ամգլերէն: Հայ ընթերցողի համար գործնական նշանակութիւն չունի, քի յատկապէս ո՛ր եւ ինչպիսի՞ երաստագիրութիւններ են նկատի առնուել: Բացի այդ, հնարաւոր էլ չէ ամէն ինչ յիշատակել՝ ամէնփանիշ ու անխտիր կարգով: Դրանով հանդերձ, ակնորդ չեմ համարում առումնասիրութեան վերջում գետնիկ վի գտնի, որը քերեստ արեւէ մասնաւոր հետաքրքրութիւն ներկայացնի այս կամ այն ընթերցողի աչքում, առնուազն ոկրքնական ու մտաւոր կողմնորոշումն եւ տեսգութեան առջիկ ներառական ուղեցիկներ ունենալու իմաստով:

Ահաւտիկ այդ ցանկը.—

- 1) «Realencyclopædie der classischen Altertumswissenschaft» (Pauly - Wissowa), Band 6, Band 23
- 2) «Der Kleine Pauly. Lexikon der Antike», in funf Baenden (1, 2, 3, 4, 5), («Deutscher Taschenbuch Verlag», Muenchen, 1979)
- 3) Paul Kroh «Lexikon der antiken Autoren» («Alfred Kroener Verlag», Stuttgart, 1972)

- 4) «Tusculum-Lexikon» (griechischer und lateinischer Autoren des Altertums und des Mittelalters) («Rowohlt», Hamburg, 1974)

- 5) Robert Browning «Julian, der abtrünnige Kaiser», Biographie («Nymphenburger Verlagshandlung», Muenchen, 1977)

- 6) The Works of the Emperor Julian («Loeb classical Library», London), I (13) 1962, II (29) 1969, III (157) 1980

- 7) Libanios «Autobiographische Schriften» («Artemis Verlage», Zuerich/Stuttgart, 1967)

- 8) Libanios «Selected Works» («Loeb classical Library», London), I (451) 1969, II (452) 1977

- 9) Philostratus and Eunapius «Lives of the Sophists» («Loeb classical Library», London, (134), 1968)

- 10) Julian «Briefe» («Heimeran Verlag», Muenchen, 1973)

- 11) Ammianus Marcellinus «Das roemische Weltreich vor der Untergang» («Artemis Verlag», Zuerich/Muenchen, 1974)

- 12) Aristophanes «Saemtliche Komoe-dien» («Artemis Verlag», Zuerich/Stuttgart, 1968)

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԼԻ ՍԹՐԱԶՊԸՐԿ ԵՒ «ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒ ՍԹԻՒՏԻՈՆ»

1982ի Փետրուար ամսուն Միացեալ Նահանգներու մէջ 80 տարեկան հասակին մահացաւ «Դերասաններու սթիւտիո»յին գեղարուեստական ղեկավարը՝ Լի Սթրազպըրկը:

Աւելի քան հինգ տասնամեակներու ընթացքին, ծնունդով լեհ այս դերուստյցը, որ խորաթափանց ու խիստ մանկավարժ մըն էր, նկատառելի դեր խաղացած է այնպիսի՝ դերասաններու կազմաւորման մէջ, ինչպիսիք են Տասթին Հոֆման, Ընէյն Չոնտա, Ալ Փաշինո, Սիւսին Փուարթէ, Փոլ Նիւմըն եւ Ճոան Ուրտուքտ:

Սթրազպըրկի թեքելքը՝ այսպէս կոչուած մեթոտը, իր ներշնչումը առած է ուսն ունեւոր բեմադրիչ ու գերուստյց Քոնսթանթին Սթանիսլաւսկիի (1863-1938) դերուստեցողական ու բեմադրական ուսմունքէն:

Երբ 1923ին Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնը Նիւ Եորք այցելելով կ'ունենայ շարք մը ելոյթներ եւ Սթանիսլաւսկիի հոգեբանական իրապաշտութիւնը մեծ չափով կը հմայէ թատերասերներն ու թատերադէտները, Գեղարուեստական Թատրոնէն երեք արուեստադէտներ՝ Պուլիակով, Պուլսլաւսկի եւ Մարիա Ուսիենսկայա Նիւ Եորքի մէջ կը մնան, աւելի համակողմանիօրէն ընդ-

հանրացնելու Սթանիսլաւսկիի ուղղութիւնը:

1935ին՝ Զեխով կ'այցելէ Ամերիկա եւ շարք մը դատախօսութիւններու ընդմէջէն կը տարածէ Սթանիսլաւսկիի ուսմունքին իր անձնական մեկնաբանութիւնը:

Իսկ 1936ին, Մ. Նահանգներու մէջ կը հրատարակուի Սթանիսլաւսկիի «Դերասանի նպատրաստութիւնը» հատորին թարգմանութիւնը:

Յիշեալ երեւոյթները, հաւանական ուրիշներու կարգին, պատճառ կ'ըլլան Սթանիսլաւսկիի հոգեբանական իրապաշտ թատրոնի տեսութեան տարածումին եւ ազդեցութեան ամերիկեան արհեստավարժ ու սիրողական թատրոններու դժով եւ, 1947ին, էլիսա Քաղանի կողմէ «Դերասաններու սթիւտիո»յի հիմնումին: Այս հիմնարկին տնօրէնութիւնը կը յանձնուի Լի Սթրազպըրկի: Վերջինս արդէն Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի Նիւ Եորքի մէջ տուած ելոյթներուն ակնատեսաւ կ'ըսէ էր եւ անմիջապէս սկսած Սթանիսլաւսկիի մեթոտին հիմամբ իր փորձերուն՝ «Ամերիկեան տարրալուծարան»ին մէջ, զոր հիմնած էր Պուլսլաւսկի: Ապա՝ 1931ին, Սթրազպըրկ հրաւիրուած էր Նիւ Եորքի «Գրութիւն» թատրոն» (Group Theatre) դերա-

սանները մարդերու, իսկ 1949ին՝ Էլիա Փազանի «Թատերական արուեստի տարաբաղումարան»ին մէջ աշխատելու:

1948էն սկսեալ՝ Սթրազզըրի կը վարէ «Դերասաններու սթիւտիո»յի դեղար-ւեստական զեկաւարի պաշտօնը: 38 տարիներ զեկաւարի եւ բեմադրիչի պաշտօններ վարելէ ետք, 1974ին կը վերսկսի իր գերակատարումներուն: «Անֆախայր»-ը Ֆիլմին մէջ զազանի կազմակերպութեան մը սկիզբն դերին խաղարկութիւնը կ'ըլլայ շարժապատկերի արուեստին մէջ Սթրազզըրիի նախաջայը, որ անոր կը բերէ օսֆար մը: Ապա, յաջորդաբար, ան հանդէս կու գայ «Եւ արդարութիւն» քոլորին» եւ «Going in Style» Ֆիլմերուն մէջ:

Անոր բեմադրական յաջողութիւններէն յիշատակելի են «Բախում» գիշերական մէջ» (1941), «Մեծ դամակը» (1949) եւ Փոլիցըր մրցանակին արժանացած «Men in White» դործը:

«Դերասաններու սթիւտիո» կը յաճախեն դերասաններ, որոնք արդէն կազմաւորուած որոշ հանդուանի մը հասած են: Անոնք հոն դառնեթացքներու եւ վարժութիւններու կը հետեւին հիմնական երկու նպատակներով.

— Թեքնիք հասունացման իրազարծում:

— Դերասանին անձին յատուկ կարգ մը թեքնիք հարցերու լուծում:

Սթրազզըրիի դերասաններ չէր պատրաստեր, այլ անոնց կ'օգնէր յայտնաբերելու իրենց անձը: Ինչպէս նաեւ ան միայն Սթիւտիոյաւիտի ուսմունքով չէր սահմանափակուեր, այլեւ կ'օգտուէր դերասանական արուեստի (օրինակ Քոմէտի Ֆրանսէզի) պատմութեան մէջ նշանաւոր դարձած հոգաներու փորձառութիւններէն: Անոնց կողքին ան իր դերակատարներուն միշտ կը թելադրէր ուսումնասիրել յունական քանդակագործութեան, հռոմէական նկարչութեան, այլ իտալացի՝ համալրարհային կերպար-

ւեստի աւանդոյթները, հասնելու համար մարդկային մարմնի գեղեցկութեան տարրերուն ըմբռնումին: Յամենայնդէպս, «Սթիւտիո»յի դերասանները ոչ մէկ այլ արուեստագէտ կը կապեն, այլ միշտ կ'ուզեն երեւան հանել իրենց թաքուն եսերը, որպէսզի կարենան դիմադրաւել իրենց ստանձնած դանապան կերպարներէն իւրաքանչիւրին ներկայացուցած դերակատարումի պահանջները եւ լուծել մեկնարանումի աշխատանքները: Այսպէս, Սթրազզըրիի մեթոտը, որ կը հիմնուի հոգեվերլուծումի վրայ, կը ձգտի իւրաքանչիւր դերասանի անհատական զբոսարութիւնները եւ հարցերը հարթել ոչ բնական լուծումին յանդեպնել: Այս պատճառով, «Սթիւտիո»յի գոտաւանդումները կը կատարուին ոչ թէ ուսանողներու խումբի մը հետ, այլ՝ մէկ կամ երկու դերասանի հետ անջատաբար: Իսկ «Սթիւտիո»յի միւս անդամները գերուսոյցին բացառութիւններուն ու հարցաւորման կը հետեւին լոկ ունկնդրութեամբ, վերջաւորութեան տալու համար կատարուած փորձերուն առնչութեամբ իրենց հարցումները: Եւ նիստին գործնապէս մասնակցող ուսանող պարտաւոր է յայտարարել մեկնաբանումի փորձերու ընթացքին իր դիմադրաւած զանազան մասնակի կամ ընդհանուր զբոսարութիւնները, ու բաշայայտել, թէ այս կամ այն վարկեանին իր դերակատարումը արդեօք իր փափաքած ձեւով ընթացաւ, եւ այդ յայտարարութիւններուն քննարկումին ընդմէջէն յաղթահարել զանոնք:

Սթրազզըրիի մեթոտը կարելի է ամփոփել հետեւեալ շորս հիմնական կէտերուն մէջ.

1. ԴԵՐԱՍԱՆԸ ՊԵՏԻ Ե ԸԼԼԱՅ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ

Դերակատարը իր մեկնաբանումին ընդմէջէն սկսեալ է ներկայացնել իր անձնական փորձառութիւնը եւ սկսեալ չէ թոյլ տալ, որ իր անձնականութիւնը կորսուի կամ նուազի իր ստանձնած կեր-

պարին կամ խաղակիցին անհատականու-
թեան առջեւ: Աւելի'ն. ան պէտք չէ թոյ-
լատրէ, որ բեմադրիչը, ո'վ որ ալ ըլլայ
վերջինս, խեղդէ կամ մասնատէ իր անձ-
նականութիւնը (պարզ խօսքով՝ դերա-
սանը պէտք չէ թոյլ տայ բեմադրիչին
կամ անկէ խնդրէ, ինչ որ ալ ըլլան իր
դիմադրաւած գծաւորութիւնները, որ իր
առջեւ կատարէ տուեալ դերը, որովհե-
տեւ աշխատանքի այս եղանակը կը սահ-
մանափակէ դերասանին ստեղծագործե-
լու հնարաւորութիւնները ու կը փոքրա-
ցնէ անոր անհատականութիւնը):

2. ԴԵՐԱՍԱՆԸ ՊԵՏՔ Ե ԻՆՔՋԻՆՔ
ՎԱՐԺԵՆՆ ՓՈՐՁԵՐԸ ԿԱՏԱՐԵՆԻ
ՀԱՆԳԻՍՏ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ

Այս կէտին մէջ Սթրաւզըրկ ամբող-
ջական համաձայնութեան մէջ կը դռնուի
Սթանիսլաւսկիի հետ: Սթրաւզըրկէ հա-
մար դերասանին հանգիստ (relax) վիճա-
կը լոկ ֆիզիքական իմաստ չունի, այլեւ՝
հոգեբանական, ա'յն առումով, որ դե-
րակաւարը աշխատանքի եւ ստեղծագոր-
ծութեան ընթացքին պէտք է ձերբազա-
ւի իր վարուելակերպային սովորոյթնե-
րէն եւ հոգեկան պրկումներէն, որոնք իր
մէջ արմատացած են մանկութենէն ի վեր
եւ ընկերային կեանքի պարտադրանքնե-
րուն ներքեւ:

3. ԴԵՐԱՍԱՆԸ ԲՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆ-
ՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՊԵՏՔ Ե ՀԵՏԱ-
ԽՈՒՋԷ ՅԱՅՏՆԱԲԵՐԵԼԻ
ԱՇԽԱՐՀ ՄԸ

Ինչ որ կը համապատասխանէ Սթա-
նիսլաւսկիի «բառերու» ետին գտնուածը
որոշելու սկզբունքին: Այսպէս, բնադրի
բառերու ետին կը դռնուի ինքնին ամ-
բողջական աշխարհ մը, զոր պէտք է
յայտնաբերէ դերասանը եւ, հետեւաբար,
ընդհանուր կացութենէն մեկնելով եւ
մանրամասնութիւններէն անցնելով՝ ան
պէտք է փնտռէ եւ ուսումնասիրէ թա-
տերական տուեալ աշխարհին զրգապատ-

ճառները, պայմանները եւ փոխարարե-
րութիւնները: Այս պարտականութիւնը
դերասանէն կը պահանջէ:

Ա) Հեղինակին բառերուն նեղ իմաս-
տին վրայ աւելցնել իր անձնական հա-
կադրեցութիւնները եւ ապա իրեն ժամա-
նակակից ընկերութիւնը մեկնակէտ ու
նեցող իր անձնական մեկնաբանութիւնը:

Բ) Բեմադրիչին մտքերուն վրայ ա-
ւելցնել նոր դիտեր եւ լուսարարումի
նոր դիտանկիւններ:

Գ) Երբեմն աշխատանքի մղել (գոր-
ծարկել) սեփական մտային կարողու-
թիւնները եւ երեւակայութեան հնարա-
ները:

Դ) Բեմահարթակին վրայ իրեն յառ-
կացուած տարածութիւնը եւ ժամանա-
կը լեցնելու համար ուսումնասիրել ար-
տայագիտական ու բեմական ներկայու-
թեան իր կարողութիւնները, առանց չա-
փազանցութիւններու երթալու այս գծով,
կամ անտեսելու իր խաղակիցներուն յառ-
կացուած տարածքները:

4. ԴԵՐԱՍԱՆԸ ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԻՐ ԶԿԱՅԱՎԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Այս մէկը մեթոտի գլխաւոր գիծն է
եւ միաժամանակ Սթրաւզըրկի եւ Սթա-
նիսլաւսկիի միջեւ տարակարծութեան
յոտակ կէտ մը:

Սթանիսլաւսկի իր նշանաւոր հար-
ցումը՝ «Եթէ ես ըլլայի...» կ'ուղղէր
հանելու համար բաղդատութեան մը՝
կերպարին տուեալ վիճակին եւ դերասա-
նի կեանքին մէջ տեղի ունեցած համա-
նման վիճակի մը միջեւ: Այս պարագա-
սին, դերասանը կը գիտէր թատերական
կերպարէն տարբեր եղող իրա'ւ կերպարի
մը, հոգ չէ թէ այդ կերպարը նոյնինքն
դերասանը ըլլար:

Սակայն, Սթրաւզըրկ դերասանէն
կը պահանջէ զպայական փորձառութիւ-
նը ո'չ թէ ծառայեցնել իրրեւ ներշնչու-
մի աղբիւր, այլ՝ զայն աղբիւր նոյնու-

թեամբ: Հետեւաբար, դերասանը Սթրազ-
պըրիկի մօտ պէտք է օժտուած ըլլայ ըզ-
դացական սուր յիշողութեամբ մը, որ
զայն կտրող կը դարձնէ ամէն գիշեր նոյն
զգացումը վերապրելու եւ վերստին
կեանքի կոչելու հանդիսականին առջեւ,
ճիշդ նման սիրքի մարգագողի մարդիկի
մը, որ ամէն գիշեր կամքի եւ ուժերու
նոյն լարումով ու բեւեռացումով կը դի-
մագրուէ մահուան ռատումը:

Տ.— ԴԵՐԱՍԱՆԸ ՊԵՏՔ Է ՎԱՐՈՒԻ
ԱՅՆՊԷՍ՝ ԻՆՉՊԷՍ ԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ Է
ԵՒ ԴՐԱՍԱՆԸ ԻՐ ՄՏԵՐԻՄԻ
ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԸ

Այս կէտը եւ տարակարծութեան
կէտ մըն է Սթրազպըրիկի եւ Սթանիսլա-
ւսիկի միջեւ: Այսպէս, երկրորդը դե-
րասանէն կը պահանջէ բեմահարթակին
վրայ ցուցաբերել ընկերային այն պատ-
շաճ վարուելակերպը, զոր կ'ունենայ իր
սեփական կեանքին մէջ, պայմանաւ, որ
հանդիսականներու ներկայութեան իր
գիտակցումը չարգելակէ կերպարը մարմ-
նաւորելու իր ճիգերը: Իսկ Սթրազպըր-
իկի մօտ դերասանը իր ստանձնած ու անձ-
նական մեկնաբանումի բովէն անցուցած
կերպարը կը ներկայացնէ անոր մարդ-
կային բոլոր թերութիւններով եւ բար-
դոյթներով: Այս պատճառով՝ դերակա-

տարը հանդիսատեսին առջեւ պէտք է ի
գործ դնէ իր մտերմիկ բոլոր վարուելա-
կերպերը, որոնք կրեան կու գան լոկ ա-
ռանձնացումի պահերուն: Այս սկզբունքի
վարձադրութեան մէջ կարգ մը դերա-
սաններ հասան ինքնամերկացումի աս-
տիճանին:

Ճիշդեական եւ զգացական վարժու-
թիւններու ոգտագործումին ընդմէջէն
Սթրազպըրիկ իր աշակերտներուն ուսու-
ցանեց շրջանցել դերակատարումի ար-
տաքին խաղերը եւ «ներսնանկանացը-
նելը» («internalize») դերերը, յառաջ մը-
ղելով դերասանին անձնական փորձառու-
թեան ու զգացումներու պահպանները:
Սթրազպըրիկի հետեւորդները գինք կը
կոչին «Rabbi», «Pope», եւայլն, եւ
կ'երդուէին անոր անունով: Անոր ընդ-
դիմախօսները, որոնք գինք կը դատա-
պարտէին «պատուած Tshirtի» դերասա-
նական դարացը՝ սկզբնաւորելուն համար,
կ'երդուէին անոր դէմ: Յամենայնդէպս,
Սթրազպըրիկ թատրոնին ամբողջովին նը-
ւերուած ու անոր աւանդութեան բոլոր-
բանուէր ճիգով ու լրիւ հաւատքով վե-
րանորոգել փորձած բեմագրիչ մը եւ
թատրոնի առաջնորդ մըն էր:

ԿՈՐԻԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

Պ. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

ՎԱՀԱԶԱՆԳԻՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ՝ ԱՎԱԶԱՆԳԵՆ ԱՆԴԻՆ

Երեսուն եւ աւելի տարիներէ ի վեր գրիչ կը շարժէ Վահէ Օշական ու իր ստորագրութեան ընթերցողը հանդիպած է քանի մը մարդերու վրայ, քննադատական, վիպական, հրապարակադրական ու բանաստեղծական յորինումներու տակ, բայց բազմաթիւ հատորներու նիւթ հայթայթող իր գործերէն հատորով լոյս բնծայած է բացառաբար բանաստեղծական երկեր, — «Պատուհան», «Քաղաք», «Քառուղի», եւ վերջինը՝ «Անգամը»:

Այս բացառութիւնը պարզապէս կը նշանակէ, որ Վահէ Օշական իր դժբախտութեան ծոնրութեան կեդրոնը կը համարէ բանաստեղծութիւնը:

Վահէ Օշականի աչքի դարձող առաջին յատկութիւնը զուտ մարդկային կացութեամբ շահագրգռելու իր հետեւողականութիւնն է: Մարդը՝ իր ներքին բարդ հարցերով, ծնունդին, լինելութեան եւ վախճանական առեղծուածին դէմ յանդիման: Ծնելու արկած, ապրելու անհեթեթութիւն, անհետանալու անձկութիւն, փրկութեան տալանալ: Ի վերուստ անպաշտպան ձգուած էակ մը՝ մարդը, որուն վրայ կը բռնանան նաեւ երկրային գործոնները՝ բաւարարական ու ընկերային օրէնքներով, օրոնք կեղծ են, խորդաւանանքներով լի եւ հարկ է խմայնել իրեն այդ դաւալից իրականութիւնը եւ ինք պէտք է ըմբոստանայ բոլորին դէմ, յայտարարէ իր անկախութիւնը, որպէսզի օր առաջ մօտենայ ինքն իրեն, հասնի իր բուն կացութեան եւ անձամբ ճշդէ իր վերջնական փրկութիւնը կամ կործանումը: Մինչեւ իսկ Եւ ատոր համար կայ միայն մէկ ճամբայ, ըմբոստութիւնը նորէն, յարատեւ կռիւր բոլորին դէմ, սուտ Աստուծոյ, սուտ կրօնքներուն, օրէնքներուն, աւանդութիւններուն, հասկացողութիւններուն, կռիւր՝ միակ նշանը ապրելու, միակ արժէքը՝ վերջին յաղթանակէն կամ պարտութենէն առաջ: «Աստուած մեռաւ որովհետեւ չէզոք մնաց մարդոց կռիւներում մէջ»: Նոյնն է մարդուն ապառնացող մտանգը, պիտի մեռնի, եթէ դադրի կռուելը, ըմբոստանալը: Ըմբոստութիւն՝ ստեղծուած, եղած, հնարուած, ըսուած, ընդունուած ու նուիրապարծուած ամէն բանի դէմ, ազատ՝ սմէն բանէ, մերկ՝ տիեզերքին դիմաց, այս մարդը, որ ոնջատուած է, եւ իրերու աշխարհին եւ բնազանցական հարցականներու թուհուրհին մէջ, կեանք կոչուած անծանօթին եւ մահ կոչուած անծանօթին միջեւ կախուած է բարակ թելէ մը, անձկայի, անձկայրեալ մարդը:

Վահէ Օշականի առանձնացող երկրորդ յատկութիւնը անպայման իր լեզուն է, յախուեն, վայրագ, շնոր բեր հայերէնը, կ'ըսենք լեզուն, որ յատուկ է միայն իրեն, կայտառ, ներկայ ժամանակներու խորհրդանշաններուն լայնօրէն բացուած եւ հասած այնպիսի ուժգնութեան մը, որուն դիմաց չի կրնար անտարբեր մնալ ոեւէ ընթերցող:

Այս երկու արժանիքներուն վրայ պէտք է գումարել երրորդ մը, հայ գրականութեան ծանօթ յղացքներէն ու ձեւերէն հեռանալու եւ եւրոպական ժամանակակից յղացքներուն եւ ձեւերուն հետ նորոգուելու իր փորձը:

Արտեք, սակայն, բանաստեղծի տիպարը հետաքրքրական կը դարձնեն,

digitised by A.R.A.R.®

բայց դեռ բանաստեղծական շնչող իրականութիւնն էր յայտարար նշաններ չեն: Բանաստեղծութիւնը կը ստացուի հաւանաբար այն ատեն, երբ բանաստեղծը ընդգրկուած նիւթին տիրակալելու ուժ էր կը յայտնաբերէ եւ անոր անսուտ ոսկին կամ տաք լույսը անտօր ձեւով կը յանձնէ թուղթին: Բանաստեղծ էր կրնայ ըսել, օրինակ, որ Աստուած չկայ, ու բան էր ըսած կ'ըլլայ անպայման, բայց այդ յայտարարութիւնը դեռ Բանին հասած ըլլալու կրնող փաստին առջեւ չի դնէր ընթերցողը: Ժխտումի տղա արարքը պէտք է երաշխաւորուի ներքին հրափռութեամբ, կենսախալա բառով, պատկերին ուժգնութեամբ, ձգողական յատկութիւններու աշուպիսի՝ գումարով մը վերջապէս, որ ըստինքեան արժէք մը ունենայ, բարձրանայ արարչադորձ մակարդակի մը եւ ոչ թէ մնայ չոր յայտարարութիւններու սահմանին մէջ: Պէտք ունի հան «ոխերի» յորջորջեց Աստուած, իր յորջորջումը օտակայն ներքին դժոխս յին իրականութեան մը տրամաբանական ճիշն էր, հաւաստի, համակող, ու ճիշդ տղա պատճառով ամէնէն ուղղափառ աստուածապաշտներն անգամ հաղորդուեցան բանաստեղծին ճշմարտութեան, ընկալեցին «ոխերի»-ը:

Նոր բանաստեղծութեան աստուածը Դուրեանի աստուածը պիտի չըլլայ: Հարկաւ, սէրը Թէքէհանի սէրը պիտի չըլլայ ու ճանապարհը Զարինցի Յարզագողի ճանապարհը պիտի չըլլայ, բայց ի վերջոյ պիտի ըլլայ բան մը, աստուածը «չեղած» պիտի ըլլայ, բանաստեղծութիւնը:

Վահէ Օշականի բանաստեղծական տիպարը շատ մտահոգ չի թուիր այդ կենսական հարցով, ան իր առօրեային պէս, անձկութիւններուն ու հարցադրումներուն պէս է, տակնուվրայ, չփոթահար մէկը, որ կեանքը կը վարէ ըստ իր ներքին կացութեան, չփոթ նախադասութիւններով ու չփոթահար դորձողութիւններով: Ձի փորձեր տիրապետել իր նիւթերուն, աւելի շուտ՝ կը յանձնուի անոնց, եւ որովհետեւ ի՛նք կը յանձնուի անոնց, ընթերցողը կը մերժէ յանձնուիլ իրեն, հետեւիլ իր սանձարձակ երեւակայութեան, հաւատալ ժխտումներուն, հաստատումներուն:

Առնենք իր ամէնէն կարճ եւ ամէնէն դիւրամբանի բանաստեղծութիւնը, ապրելու եւ մեռնելու փոխարարներութեան միայն կառուցուած ուժ տողնոց սա փոխափայլութիւնը, որ ունի «Մահեր» խորագիրը:

Ամենայն տեղ մահը մի չէ
կախում ունի ինչի համար կը մեռնիս,
մարդ բիրտ անգամ, զաղտագոյի, պիտ' մեռնի
որ հասկնայ՝ եթէ կրնայ՝ ինչ ըսել է ծնիլը,
բայց երանի մէջ մը մարդուն՝
որ պայժարի ընկերներուն հետ կը գառուի,
մէջ մ'ալ անոր
որ ազգէմ անդին, մարդէն աւելի, միւս միւսակը՝ կ'անհետի (էջ 69):

Մեռնելու պատճառը ոչ ոք է արժէք մը ունենայ, հարկաւ, գեղեցիկ է:

Ծնելու առեղծուածը հասկնալու փորձին համար բիրտ անգամ մեռնելու խորհուրդն ալ համակող է:

Սրտառուչ է նոյնպէս պայքարի ընկերներուն հետ մեռնող մարդուն տրուած երանին:

Բայց երբ անպամ մը ընդունած ենք պայքարի ընկերներուն գոյութիւնը եւ անոնց հետ մեռնիլը հռչակուած է երանութիւն, յուսալի ընդունած պէտք է ըլլանք նաեւ մեռնիլ մը արժող բաներու գոյութիւնը, կեանքէն վեր գառնիլ արժէքներու գոյութիւնը: Որեւէ բանի համար պայքար չեն մղեր մարդիկ,



արժէքներով համար կը մզեն պայքարը եւ մահէն չեն երկնչիր, երբ մահուան փառանքին տակ կը զոհուին այդ արժէքներէն համարուող ազգը, մարդը, բայց չփոթի կը մատնուի ընթերցողը, երբ կ'իմանայ, որ ընկերներու հաւատացող, ընկերներու պայքարին հաւատացող եւ պայքարի ընթացքին մեծնող մարդուն տրուած հրանիին համազօր երանի կը տրուի նաեւ անոր, քոր ազգէն անդին, մարդէն անդին, միւս միւսովը՝ կ'անհետնի: Դրո՞ւար է մինչեւ անգամ կռահել այս վերջինին ինքնութիւնը, հաշուի տնտեսածը անհատապէս, սարաֆեանական առումով՝ տարի վրայ ճարտող գերմա՞րդն է արդեօք, թէ՛ մէկը ոչնչապատճառն ոչնչութիւններէն, որոնք եկան աշխարհ եւ առանց ազգին ու մարդուն հետ որեւէ կապ զգայու ապրեցան ու անհետացան, կ'ապրին ու կ'անհետանան մեր աչքերուն առջեւ:

Անշուշտ պիտի ըսուի, որ նոր բանաստեղծութիւնը կապ չունի կարգ ու կանոնի հետ, կապ չունի տրամաբանութեան հետ, բանաստեղծութեան նոր բարոնութիւնը շատոնց քանդած է կառուցողական մանրամասնութիւնը, ինչ որ անկնթարթալին քառասունքը կը թելադրէ բանաստեղծին՝ անիկա՛ է նոր բանաստեղծութիւնը, անտրամաբանական՝ աշխարհին պէս, ու անհեթեթ՝ կեանքին պէս: Իրոպէ՞ս այդպէս է արդեօք ճշմարտութիւնը: Միայն այդքան բան իրադրծելու եւ միայն այդքան բան հաղորդելու համար հարկ կա՞յ զգայու բանաստեղծներուն կարօտը եւ այդքանով կարելի՞ է միթէ ըմբռնել սպիտակ թուղթին առջեւ տքնելու նահատակութիւն մը յանձն առնող բանաստեղծներուն սարսափելի դճարներութիւնը:

Խնչպէս միւս հատորներուն պարագային ընդհանրապէս, նաեւ վերջինին միջավայրը փաղաքն է, մեծ քաղաքին բաղկացուցիչ մասերը, փողոցը, կայարանը, քաղաքամերձ արուարձանը, մեթրոն, եւայլն, իսկ հերոսը՝ այդ բոլորին հետ ամէնօրեայ յարաբերութեան մէջ գտնուող մարդը, հարցասէր ու հարցախնդիր մարդը, որ կը դիտէ չըմտապար ու կը խղճահարի, կը տուգանապի, կը շուարի, կը բախի անդիտակիցներու բանակին, ինքնախտէութեան թակարդներուն մէջ օրօրուող միւս դրծոններուն, որոնք ամէնուրեք են ու կը կոչուին գիւղացի հարս, Եւրօպի վկայ, լարախաղաց, թմրահաւար, արտիստ, իրաւաբան, փամկոչ, փրօֆեսօր, լրտուրդ, ալքոլամոլ, վարդապետ, մաքաննեկ, բեռնակիր, մուրացկան, միասեռական, ոճրագործ, բժիշկ, վերարժ, խենթ, արտառոց, եւայլն, եւայլն:

Իրենց պաշտօններով, գերակաառութիւններով, մոլութիւններով ու ախտերով տարուած տիպարներ ասոնք, որոնք արդէլք են զիրար սիրելու ու հասնելու ճշմարտութեան եւ գլխաւոր հերոսը, ճշմարտութիւնը ահազանդին ընդմէջէն զգացած խուճապահար մարդը, իր ինքնութիւնը, ծագման ու ժառանգութեան նախադրեալները, բնաւորութեան գիծերը, առողջական վիճակը, լքուածութիւնը, կարօտները, ծարաւները, յարմարողական խորթութիւններն ու տենդերը կենսագրելէ ետք, կ'որոշէ հաւաքել մարդէրը, անոնց բոլոր տեսակները, որպէսզի բոլոր անոնց.

Ապստեղէ՛ք իմ գալուստ,

չեմ աշխատ:

Եւ չեմ գիտեր երբ կու գամ

միայն գիտեմ թէ ինչ պիտի ըմբօք միասին (էջ 13):

Ընթերցողին կ'ըսուի նաեւ ընելիքը, — հաւաքել բոլոր արաւ-փախուները, շատախօս իրաւաբանները, օրօր երգողները, նետող-բռնող փրօֆեսօրները, բարոյախօսները, օրէնսպէսները, յղփացած վարդապետները, ի-

մաստութեան ու երջանկութեան վաշխառուները, տիեզերական դաւին մէջ ով որ մաս ունի՝ եւ աքսորել բոլորը իրենց զմիականի աստուծոյ քովը:

Այս ամբողջը

որ կարեմամբ, ի վերջոյ, գիրար տեսնել, իրար դպնալ ու հետաւորտալ գիրար սիրել ու շարչարել, քիչ պէտք է մեղցնել

որ ճշմարտութեամբ մօտեցնամ:

Ես եկեր եմ ու կ'երթամ, հաւանաբար այս գիշեր դեռ քանի դար պիտի ամցնի մինչեւ ճար մը տեղս գայ, կ'եմաց մահու խնդիր է առ, եւ՛յ մարդիկ, մեղք է ձեզի (էջ 14):

Անոր՝ որ պիտի սպասեն մարդիկ, յուշարար է ու դերասան նոյն ատեն եւ հաշիւ ունի մաքրելիք բոլորին հետ, մարդ ըլլան անոնք թէ աստուած. ատելութիւն չունի ան, ունի միայն զիշեր-ցերեկ կոտորացող դառնութիւն մը, իրենց ճակատադրին անծանօթ, խարող, խարուող մարդոց իրականութեանէն իրան, բայց ունի յամառ է, լուրջ, մասախուղ ճեղքող, վարժ՝ խոր-խորտախն եղբորէն քաղելու, կախարդները փախցնելով ընթանալու ոտի մը տէր, որ կը մերժէ որեւէ յուսահատութիւն, որովհետեւ առած է ձայնը ահագանգին եւ ունի անոր ճշմարտութիւնը մարդոց հաղորդելու առաքելութիւն մը:

Բայց պիտի գամ

կասկածներու ու վախերու շամփուրներով ծակծկուած,

պիտի տեսնեմք ու հաւատամք

քիչ ապսխարող չի մեղցուիր, չի մոռցուիր ու չ'ապրուիր

այլ կը նետուի անդու, յամառ վագֆի քափին մարդէ մարդ (էջ 16):

Հոս պարզեցուած տողերէն կը զգացուի հարկաւ, որ «Անուանգ» քերթւածին ո՛չ խորքը նորութիւն մը կը բերէ, ոչ ալ արտայայտչական կարգ մը մտաւերտու սեռանքերը: Իրենց էութեան խորքը իջնելու, դիտար տեսնելու, գիրար սիրելու եւ էութեանս ճշմարտութեան մը հասնելու փոխարէն, իրենք իրենց դէմ ու այլոց դէմ դաւող գործօնները անծանօթ չեն մարդկութեան, եղած են անոնք աշխարհատեղծման առաջին օրէն, կային Բարեկոնի ուշադրական ստորտը, գիրար կը հրմշակէին Նազովրեցի Յիսուսի ատեն եւ բացակայ չեղան հետագայ ժամանակաշրջաններուն: Բարեկոնի չարագործները տարբեր չեն Վահէ Օշականի տեսածներէն եւ Նազովրեցիի «յայտնագործած» փտրիսեցիներէն, սաղուկեցիներէն, մաքսաւորներէն, դպրիներէն, պիղատոններէն, աղունկմաններէն ու լուծալիներէն, այսահարներէն ու առաւաններէն շատ տարբեր չեն այն տիպարները, զորս Վահէ Օշական կը սպառնայ աքսորել իրենց միականի աստուծոյ քովը: Հին աքսորին պէս բան մըն է նաեւ իր հաստատած ապսխարող, որուն գոյութեան զգայնութիւնը բոլոր-զացնելով կը բաւարարուի ինք:

Անգամ մը, որ զգացինք ապսխարին գոյութիւնն ու տաղնապը, դրժւար կ'ըմբռնենք այլեւս, թէ ինչու համար երկրորդ անգամ դալու պէտք մը կը զգայ հերոսը, երբ զայն յաղթահարող խօսքի մը կամ լոյսի լուրջ կը զը-յանայ մեզի: Վահէ Օշականի հերոսին ապսխարող նոյնն է, ինչ որ էր այս դժբախտ մոլորակին մէջ պարբերաբար զգացուած անշնչելի քառու, որուն յաղթահարման համար ճիւղներ փորձեցին վառել մարդիկ, խոտառումներ

տունին, «զիրար տեսնելու, իրար գպնալու ու հուսաբարասու» այնպիսի հրա-
պուրիչ բաներ ըսին, որոնք առնուադն ելքի մը կը ձգտին:

Յետոյ՝ արտայայտութեան կերպը. ուշանալու, երկրորդ անգամ գալու
խոստումները, առ այդ պատրաստութեան անհրաժեշտութիւնը, որ շատ մօ-
տէն կը յիշեցնէ նազովրեցիի յորդորը:

«Ինչպէս եղծրաւ պատրաստ» զի յորում ժամու ո'յ կարծիցէ՛ք, գայ
Որդի Մարդոյ»:

Բայց ըսուածէն ու բռնիոյ կերպերէն անկախ, այս բերթուածը, «Անա-
զանգ», ունի ուրիշ բան մը, Վ. Ոչականի բանաստեղծութիւններուն մէջ բա-
րասրկ հնդկութիւն մը, որ կու գայ ցարդ իր անտեսած ակերէն, ջիզերուն
կծիկներէն: Կ'անհարկեմք խոտոտմանութեան բաժիններուն, օրադրային իրա-
կանութեան մը բերեղներուն, որոնք կը պարտադրեն իրենք զիրենք՝ ընթեր-
ցողին մէջ տարածուելու ու ճիւղաւորուելու իրենց համով, թերեւս մեր ա-
րեւին պարտադրուած ոգրեղականութեան երակներէն եկած:

Նոյնն է նաեւ «Անազանգ»-ին յաջորդող բանաստեղծութիւններուն հե-
րոսը, մարդուն ինքնաճանաչման բուն կոչումը արգելակող գոյալիճակնե-
րուն, դիմակներուն, թակարդներուն, պատերուն, թակարդ ու պատ ստեղ-
ծած աստուածներուն, կրօններուն, օրէնքներուն, աւանդութիւններու սու-
տին ու քաղաքակրթական շարաններուն դէմ դրօշ պարգած ներկայ մարդը,
որ կը գարնուի ամէն ինչի, տակնուվրայ կ'ընէ ամէն բան, կը փորձէ տակ-
նուվրայ ընել ամէն բան, կը նետուի արեւի արեւի, կ'ընդհարի երկրին ու եր-
կինքին, բայց որ կը զգացնէ աւելի, քան կը յայտնակերպէ, կը խօսի թա-
կարդի մէջ բռնուած մարդուն մասին, առանց անձկութիւնը բանաստեղծա-
կան գիւտով մը կարենալ յաղթահարելու: Ծնամարտութեան որոնումը բան մըն
է հարկաւ, բայց ճշմարտութեան գիւտն է հակաբն, որուն ծարաւ կը մնայ
ընթերցողը Վահէ Ոչականի պատկերացումներուն մեծ մասին մէջ:

Վահէ Ոչականի բանաստեղծական հերոսին մայր մտասեւեռումներէն
մէկը, էթէ ոչ գիտութիւն, ծնելու արկածն է: Շարունակ կը յիշէ ու կը յի-
շեցնէ այդ մէկը, որ աղբիւրն է առաջին ողբերգութեան, եւ անոր անտեղ-
եակ մնալը կամ այդ «գիտութիւն» վարագուրելու փորձերը կը հանդիսանան ող-
բերգութեան լրացուցիչ տուեալները:

Հոս ոչ մէկ մէկ ունինք մենք: Կեանքը արկած համարուի թէ նախա-
նահանումը պարզեւ՝ քիչ նշանակութիւն ունի բանաստեղծութեան մէջ:
Ըստինքեան ոչ մէկ նշանակութիւն ունին նաեւ բանաստեղծի մը բարձունք-
ները, անդունդները, անձկութիւնները, մղձաւանջները: Կարեւորը այն է մե-
զի համար, որ բանաստեղծ մը իր բարձունքին վրայ կարենայ շնչելի դարձը-
նել օդը, կարենայ տեսանիլ դարձնել իր անդունդը, տնտեսական կեանք մը
հաղորդէ անձկութիւններուն, փոխանցիկ ուժ մը՝ մղձաւանջներուն:

Կարդանք.

Խուցեքու մէջ երկու կողմէն գետինն ծոխը մտիկ կ'ընեն
անեղ բժոժ ու անձանակ պարսպաբեւոյն զառանցանքը կը պատմե՞ս
քէ կը կրկնես ազուաշ վանկը յիշատակի
ու մենք շարքդ ցուակցական յանցանքի բազ
շփոթ Արգոս ակամոցէն մանրաշէտը մէկիկ մէկիկ մեր վրայ
ի՞նչ անք ասանք սլայտ մեծդի միջատ կ'ունակ իմկած քէ չնչին անծեղ մարդու
սպառն օգէ որ խեղդուիմք իրենք իրենց մէջ
ծփում առված անդրինքու բողբոջը պատուելի շարքը կայմած
սպասելով բառը
բոլոր անտէր կայք առում

digitised by A.R.A.R.®

վերջին դաշտամեջ է Տիկին վերջին անդաք՝ տարուտ միշի յոյսի դայեակին
 քալոտ մեզոն քա փայլակ մը լոկ
 վերջին տամուկ հառաչանքէն մախավկային Բիւզանդական
 ցովք մը գայտ շիլ ու գար
 քառը չաւարտած չամցած ամոյին (էջ 48) :

Մենք կրկին ու կրկին կարգացինք մէջքերուած հատուածը ու պիտի
 չբաւուինք խոստովանելու, որ դժուար եղաւ մեզի հաղորդակցութեան մէջ
 մտնել անոր հետ :

Նման կացութիւններու դիմաց յաճախ լսուած է նոր բանաստեղծնե-
 րունք բերելը ու պակաս չէ եղած ընթերցողին հասցէին նետուած մեղադրան-
 քը, թէ ան, ընթերցողը, ծանօթ չէ բանաստեղծական նոր յղացքներուն, ճշգ-
 րութեանն, լեզուին, կատուցողական նոր փորձառութիւններուն եւ հետե-
 ւաբար ի վիճակի չէ հասկնալու դիրքնք : Մեր կարծիքով շատ վստահելի չէ
 սակայն ընթերցողը մեղադրելով առեւտրային աշխատանքներուն, — հասկը-
 ցնելու կարողութիւնը : Ընթերցող խառնուածքները անծանօթ շատ բաներ
 պայթեցուցած են արուեստի մէջ եւ ուրիշներ խենթացած են յայտնաբեր-
 ւած նորութիւններով : Հասկնալի որեւէ բան երկար տուն անհասկնալի եր-
 բեք մնացած չէ այս երկինքին տակ : Ըսել պէտք է միայն, աւելի ճիշդը կըրկ-
 նել պէտք է, որ հասցնելու կարողութիւնը նոյնքան մեծ արժանիք է, որքան
 հասկնալու կարողութիւնը, ինչպէս զգացնելու ուժը նոյնքան մեծ շնորհ
 կ'ենթադրէ, որքան զգալու նրբութիւնը : Ըսել կ'ուզենք՝ հասկնելու կարո-
 ղութիւնէն զուրկ ծնած մէկը աւելի բախտաւոր չէ, քան հասկնալու իր կա-
 րողութիւնը անմշակ ձգած միւսը :

Ի վերջոյ շենք կրնար մեղադրել ցրտահար մարդ մը, երբ ամպամած
 է երկինքը :

Մնաց որ, բուն հարցը հասկնալիութեան ու հասկնալու կարողութեան
 չի վերաբերիր. կը վերաբերի արուեստին անդրազոյն պայմանին, ձգողա-
 կանութեան, մոգութեան, աւելի ընդհանուր բաւով մը՝ հաղորդականու-
 րեան :

Կեանքին, մահուան, արեգեղբուն եւ միւս առեղծուածներուն մասին բա-
 նաստեղծներուն հայթայթածէն աւելի հաւաստի աղբիւրներ չեն պակսիր, ե-
 թէ բան մը հասկնալու տալանալէ մը մրկած ըլլան մարդիկ :

Բանաստեղծական հատոր մը կը բանանք այդ բոլորին յարաբերաբար
 լուծաստեղծին պարզած ընկալչութեան հետ յարաբերութեան մէջ մտնելու իզ-
 ձով, ապրելու համար, այնպէս՝ ինչպէս կ'ապրինք արեւին շառլը ընծան, ա-
 ռանց արեւին «ինչութեամբ» շատ հետաքրքրուելու, կը ցնորինք երազի մը
 պատկերով, եւ յաճախ պէտք չենք զգար հոգեբաններու մեկնութիւններուն
 դիմելու եւ հիասքանչ աչքերով կը դիտենք համաստեղութիւնը, աստղա-
 րաշխներուն ձգելով ձգողական օրէնքները տարազելու հոգը :

Բանաստեղծին սպասուածը այդ է, արեւը ընկալելու եւ ջղային իւրա-
 յատուկ հրափառութեամբ մը հաղորդելու համը, երազին ահողը, աստղերուն
 խորհուրդը, ընդգրկած իւրաքանչիւր նիւթը Բանին թարմացնելու կախա-
 դանքը, բռնկումը, մեր վրայ խորհուրդ մը կամ մեզ խորհուրդի մը վրայ
 առկախելու մոգութիւնը :

«Խառնակ»ին մէջ դրուած հասկնալին չէ ի վերջոյ անոր բուն տարերքը,
 այլ հոն դրուած ամենահաս ու ամենակուլ կրակը :

Վերի բառերուն ու տողերուն յաջորդականութեան մէջ արժանիքներու ալ զտմարին պակասն է, որ կը նեղէ ընթերցողը: Ո՛ւր է ի վերջոյ հեղինակային ույն անհրաժեշտ ձգողականութիւնը, որ բառը բառին կը կապէ, մէկ նախադասութեան պապակը կ'առնէ յաջորդներուն կարօտին եւ ստացւած հաւասարակշռութեան մայիլքին կը հրաւիրէ ընթերցողը:

Գաղափարները, նախադասութիւնները, պատկերները, լեզուն քայքայելու եւ առաջացած տակնուվրայութեան ցունցով մարդը իր ներքին ճշմարտութեան վերադարձնելու փիլիսոփայութիւն մը ծայր տուաւ: Համաշխարհային Առաջին պատերազմի վաղորդայինն եւ երկրորդին օրօք ու յաջորդող տարիներուն տարածուեցաւ ողջ եւրոպայի վրայ: Մարդէ մարդ, ժողովուրդէ ժողովուրդ, աշխարհամասէ աշխարհամաս զգացուեցաւ հաղորդակցութեան պակաս մը, ախտահանողութիւնն զբօշակիւններուն համաձայն՝ աղբիւրը բոլոր չարիքներուն, աղէտներուն, սպանդներուն, եւ արուեստագէտներուն առաջնահերթ պարտականութիւնն է պատկերացնել ալ իրողութիւնը եւ զգացնել մարդէ մարդին իր միտակութիւնը, անկատար, ապուստաններուն անանկութիւնը եւ ընկերային հեղձուցիչ օրէնքներու մէջ բռնուած ըլլալու իր ողբերգական կացութիւնը: Այդ զիտակցութեան պիտի սկսի ինքնաճանաչման հոլովոյթը, պիտի ճամբորդէ դէպի իր ինքնութեան խորքը, պիտի գտնէ իր սեփական ճշմարտութիւնը ու ինք աւօրինէ իր ճակատագիրը:

Այս մասին, «Լիֆօփիւս» ֆրանսական շարաթաթերթի մէկ հարցումին պատասխանելով, Թատերագիր Էօժէն Իոնեսքօ հոթանասունական թուականներուն կը յայտարարէր.

«Ես ուզեցի արտայայտել գոյութեան անձկութիւնը, մարդուն անբաւարար իր վերացական արժանութիւն. ուզեցի նոյնպէս ըսել, որ ամէ՞ն ինչ խօսելով, մարդիկ չեն գիտեր, ք-է ինչ կ'ուզէին ըսել, եւ որ կը խօսէին ոչինչ ըսելու համար, որ լեզուն մարդերը իրարու մօտեցնելու փոխարէն, պայտապէտ զանազանի կը ըստնէր իրարմէ: Ես ուզեցի արտայայտել անսովոր երկարացիրը մեր գոյութեան»:

Եւ այն:

Վահէ Օլական յաճախ զարնուած է ալ տառնապին եւ ձևագծանքին մէջ քիչ չեն եւրոպացիներէն սերած նոյն երեւոյթին բացուող էջերը: Նոյն շրջաններէն մէկուն հանդիպեցանք վերը: Նոյն տառնապը աւելի յատկանշական ձևով մը պատկերացուած է «Անձկութիւն» խորագրուած բանաստեղծութեան առաջին էջին: Մանօֆանտնք անոր առաջին ութ տողերուն.

Կը ճշմարտիմ

կ'ար բորստ յորձ ամբոյ զառնայ հեռու միմեկ հեւք

ամբաւալոյժ գանգուած արուարձանի արձակուած

դանդաղ մաշուող խրտուիլակներ կրկու-երկու կը քաշեն

սեւ նեղ անցք հազիւ ասի շուտ կեռ ցից

մէջքիմ խոնաւ փաթքուեր՝ հիպոտոսացած սգրուկներու դայիակներ

հագալուար ծուռ դիմակ շրջանակուած պատերով

սուր գլու լեզ ժանգ կարթ մը (էջ 97):

Պատկերուածը անխտումն է նորէն, թերեւս ինքնախորթացումը, մեքենականացումը, որովհետեւ արուարձանէն արձակուած անդամալոյժ զանազաններն երկու խրտուիլակներուն բառերը ներքին բխում չեն, վարձու են (Այսպէս վարձու բառեր ամտուն կեանքի դրամ առջին խօսք բռնուեր): Մարդիկ հազիւ այսքան բան կ'ըսեն իրարու, հազիւ այսքան բան կը հասկնան իրարմէ, կէս բառեր, կէս ձայներ, կէս վանկեր, անդուշակելի մըմունքներ:

digitised by A.R.A.R.®

Այդքան :

Այդքանը սակայն լուրն է եւ ոչ թէ լուրին բանաստեղծութիւնը :
Հաղորդակցութեան պակասը անուշադարձի է նիւթ դարձնել բանաստեղծութեան, բայց հաղորդական ըլլալու պայմանով :
Մատնափնթորը միշտ տեղ ունեցած է դրականութեան մէջ, առանց խառնափնթոր ըլլալու սակայն :

Տաղտկալին հնարաւոր է ամբողջ էջեր յատկացնել, տաղտկալի չմնալու արուեստագէտի խզմատութեամբ :

Կարելի է գտնակութիւնը նիւթ ընտրել, գտնակ ըլլալու անպատեհութեանն զերծ մնալու նախնաձախնդիր ոգիով միայն :

Յուզութիւնը մեծ նիւթ է ինքնին, առանց սակայն յոգնեցուցիչ ըլլալու :

Ընդգրկուած երեւոյթէն, կացութենէն, վիճակէն վեր որակ մը կայ, արուեստագէտին բխումը, ընտրութիւնը, առանց որուն դեռ սրեւէ արժէք չէ նուաճուած :

Արդէն խառնակ իրականութիւնները պատկերելով կամ ծանօթ խառնակութիւնները աւելի խառնելով ընթերցողը քառսի մը տոջիւ դնելու բռնութիւնը մեծ վարպետութեան յի կարօտիր : Ձենք կարծեք նաեւ, որ այդ կեցութեան կրնայ հեռու տանել բանաստեղծ մը : «Եթէ աշխարհը պայծառ ըլլար, արտեստը գոյութիւն չէր ունենար», կ'ըսէ Ալպէր Գամիւ :

Վահէ Օշականի կարգ մը էջերուն եւ, յատկապէս՝ «Առանձնութիւն», «Թաղալալ», «Անձկութիւն», «Ոնիր եւ պատիժ» խորագրուած կտորներուն ընդարձակ բաժիններուն մէջ այնքան հում ձգուած են կտորները, այնքան տարբային է ամէն բան ու քառասյին, որ անոնց մէջ միտքուած ընթերցողը բանաստեղծութեան հանդիպելէ աւելի՝ ծարաւը կը զոյգ բանաստեղծութեան, խաղաղութեան մը, կազդուրիչ արձակուրդի մը :

Այդ անհասկնալի կուտակումներուն չափ մեղի համար խորթ են նաեւ «Անազանգ»-ին յատ հասկնալի բաներուն անհասկնալի առատութիւնը, որ հետեւանք է դարձնալ անհասկնալի վերաբերումի մը : Վահէ Օշական կը տեսնէ՝

Պուրնի մէջտեղ չորս մարգարէ հիմզ ստիկամի երկու բռն (էջ 122) :

Բացառելով մարգարէները, որոնք մարգարէաբար տեղ գտած են հող, Պուրնի ծանօթ ոեւէ մէկուն համար տարօրինակ չէ ներկայութիւնը ո՛չ ոստիկաններուն եւ ոչ ալ բողբոջուն : Տարօրինակ բան մը կայ սակայն հոս, — մարգարէներուն, ոստիկաններուն ու բողբոջուն բանաստեղծական մարդաւան մարը : Մենք չենք գիտեր, թէ ինչ կը փոխուի բանաստեղծական հատուածին իմաստէն ու կառուցէն, եթէ մէկով աւելցնենք մարգարէները, երբեքով աճեցնենք ոստիկանները ու երկուքով բազմապատկենք բողբոջուն թիւը :

Պուրնի մէջտեղ հիմզ մարգարէ եօթ ստիկամի չորս բռն

Դիւրին տեղափոխելի, փոփոխելի, փոխադրելի բաներուն հանդէպ ցուցաբերուած այս անտարբերութիւնը, իր կարգին, նեղացուցիչ կը դարձնէ ընթերցումը :

Այս ընդհանուր դիտողութիւններու շարքին մէջ թերեւս ամէնէն հիմնականը Վահէ Օշականի արտայայտական անհարկի յանդգնութիւնն է, մերկայաբանող բառերու ա՛յն յաճախակիութիւնը մանաւանդ, որ մարդոց կեղծ կամ իրաւ խզմատանքը վիրաւորեց, պատճառ դառնալով, որ անոնք կոտորտան են աշխարհի բառերուն վրայ եւ քմեղծազգով կամ ընդվզումով գոցեն իր մէկ կամ միւս հատորը :

Իր լաւագոյնին դէմ լարուած այս դաւին առաջին դերակատարը ի՛նքն էր՝ Վահէ Օշական, որ երբեք չփորձեց վերջ մը տալ աւելորդ այդ պերճան-

քին: Կ'անկարկենք ծննդական դործարանները ուղղակիօրէն անուանելու եւ ծննդական դործարաններուն անուններով կազմուած թուրքերէն ու հայերէն այն արտայայտութիւններուն, որոնք անպայմանօրէն հարուածեցին միւս բաժիններուն լրջութիւնը: Մնաց որ, իրեն յանդգնութիւն կիրարկուած այդ մերկութիւնները այսօր լայն տարածում գտած ըլլալով հանդերձ եւրոպական դրականութեան մէջ, բնաւ նորութիւն չեն մեղի համար: Միայն թէ՝ մեր մէջ արուեստագէտները գտած են ձեւը աւելի նուրբ ըլլալու: Զմոռնանք մեր դրականութեան ամենասուրբ դէմքը, Նարեկացին: Նարեկացին անհրաժեշտ պահուն չվարանցաւ թուղթին յանձնել ծննդական դործարաններուն ներդրածները, որ շիշանդամն էր, ու լոռոնսնք Շնորհալի սուրբին մեղաներէն մէկը, ուր տողերը կը կառուցուին ճիշդեղէն զգայարանօք, ի վեցեկի շարժմամբս: Վեցեկի՝ Դիւն չենք խօսիր միջնադարու տաղերգուներուն «խորաններէն», զամամներէն» ու մեր օրերուն Լալազները մերկացնող հեթանոս քուրմերուն հեթանոս տեսարաններէն, ուր կեանք մը կ'ետայ եւ ոչ թէ բառեր կը պոռան:

Կարդալու ատեն, բնթացքին, ընթերցողը երբեք անտարբեր չի մնար Վահէ Օշականի հատորին մէջ, կը վիճի շարունակ անոր հետ, կ'ընդունի, կը մերժէ, կը համաձայնի, կը ջգտանայ, կը հիմնայ երբեմն, կ'ապրի յուսաբեկութեան պահեր, կը տարակուսի, կը քմբծաղի, տարբեր աշխարհի մէջ ինկած ըլլալու պատրանքը կ'ապրի մերթ, պատրանքաբար կ'ըլլայ ինկոյն, այլ երբ կը գոցէ գիրքը՝ իրբեւ աւագ տպաւորութիւն իր մէջ կը մնայ բանաստեղծի մը ահապար եւ բանաստեղծութիւն գրելու ոճ մը եւ ոչ այն բանաստեղծութիւնը, որ, իրեն ինքնուրոյն լինելութիւն՝ անկասկածեամբ կը շնչէ ու կը խառնուի մարդոց շնչառութեան: Հեղինակ մը պէտք է ըլլայ հարկաւ, աշխինքն՝ ոճ մը պէտք է ըլլայ, բայց գերազույն ստեղծումները անոնք եղած են, որոնք ամէնէն ուշ կը զգացնեն հեղինակին գոյութիւնը, կը շնչեն, կ'ապրին, կ'ապրեցնեն հեղինակէն անկաս: Վահէ Օշական շատ կը բռնանայ իր ստեղծումներուն վրայ, այնքան քիչ ազատութիւն կը շնորհէ տեղեց, որ ձեւով մը կը նմանին այն գաւազներուն, որոնք չեն կրնար տունէն դուրս գալ տանց իրենց հօրը հովանաւորութեան:

Հակադիր օրինակով մը աւելի պարզացնենք մեր միտքը.

Սա ամիսամսում կ'էտօրին՝ ամէն կողմ լոյս՝ ոչ մէկ արեւ (էջ 109):

Ի՞նչ է հեղինակը այս տողին, պատկերին, մորմոքին, պապակին: Զենք հարցներ, կ'ապրինք թելադրած կեանքը, քաղաքակիրթ ցրտութիւնը ու արեւային ծարաւը եւ ապա միայն ու երախտագէտ հիացումով մը կը խօսինք հեղինակին մասին, որ պահ մը անջատեց մեզ մեզմէ, կամ թերեւս մեզ վերադարձուց արդի մարդուն ամէնօրեայ տառապանքին ու անոր թաքուն էութեան մէկ տենչին:

Վահէ Օշականի էջերուն մէջ քիչ են ներկայ քաղաքակիրթութեան լուսաւոր բանտերուն մէջ հիւծող ու երկնային բնական սնունդներէն սովահար ախպարները, արեւային լոյսերու, ջրմուտեան ծարաւ հողիներուն ողորմող գութիւնները, որոնք իրաւութեամբ կը բարբառեն ու կը վարակեն:

Սխալ կ'ըլլա՞ր արդեօք, եթէ մարդիկ բանաստեղծութիւն ըսուածն ալ նոյն եզրերով ուղեն ըմբռնել ու մեկնաբանել:

Լոյսով ու արեւով:

Կան բանաստեղծութիւններ, որոնք լոյս ունին անպայման, հարցեր, մտածումներ, պատկերներ, բայց մարդ անտարբեր կը մնայ անոնց դիմաց, որովհետեւ արուեստական է այդ լոյսը, ցոլիւտ, զրքային իմաստութեան պէս: Եւ կան ուրիշներ, որոնց լոյսը տեսողական չլացք չէ միայն, այլ կեանքաութեան կայծ է, ողողիչ ջերմութեամբ մը կը խուսէ մեր ներքին դադարնարանները:

Կենդանարար արեւին պէս բանաստեղծութեան մեռնող տուող կայ եւ ուրիշ տուեալ մը, որ արեւին պէս տեղանքի ու զգալի չէ, բայց կենսական է նորէն, մարդերը անծանօթին մօտեցնող ձգողականութիւնը, ա՛յն՝ որ խորհուրդի մը թեւերով տարբեր տեղ մը կը տանի մարդկային հոգին եւ բացուեալու անոր պապական կը հաղորդէ շտապութիւն խռովքներ:

Վահէ Օշականին չեն պակսիր նաեւ այս կարգի գիւտեր:

Այդ մասին օրինակ մը տալէ աւա՛յ, կատարենք ոչ օրինակելի մէջբերում մը.

Գուրգուրամբի ծարաւ ունիմ, վաշիւքներէ ազատ եմ
երբամկուրքեամ իմիջ քլլալը չեմ գիտեր, ժամամակս ալ կը նստնի,
անպէտ ու աննշան մարդ մըն եմ, ողորմելի կիսաւարտ (էջ 9):

Ըստ ամենայնի պարզ են բնութիւնը, միտքերը, կը հաւատանք նաեւ ունեց անկեղծութեան, բայց կը կարգանք ու կ'անցնինք, ըսել կ'ուզենք՝ ոչ մէկ անսովոր բան կը կալաւէ մեզ, կրնանք նոյնիսկ ըսել աւելին, որ նոյն բաները կարելի է ըսել առանց տողերը կարտելու, չոր արձակով եւ ստանալ նոյն տպաւորութիւնը, բայց նոյնը չէ պարագան, երբ կը կարդանք խորհուրդով ու ձգողականութեամբ շաղախեալ նոյն քանակութեամբ սա տողերը.

Երկու աթօտ երեկոյեան պատշգամի յիշատակ, օրացոյցի դիմած էջ մը,
ափէս գիծ մը ինձմէ դուրս ուրիշ տեղ մը շարունակուելը
ու քարգմամեր երդիկներու ու ծառերու գագաթի լեզուն (էջ 79):

Երջանկութեան ընդհատուած պատրանքի մը ցաւը կայ հոս, անգործի մը կարտելի ընդմէջէն կուսնիլի տատապանք մը ու բացայայտուելու ու բացայայտելու կարօտ մը, որուն ասոյդ աղբիւրը չէ ըստած մեզի, բայց վարակումը անմիջական է, որովհետեւ տպւորած չենք գիտեր ինչ բանի մը գոյութիւնը կը գգանք հոս ու կը վերագրանանք լեզու չունեցող մեր զգալունքներուն: Մեզի համար բուն Վահէ Օշականը, այսինքն՝ Վահէ Օշականի մէջ բանաստեղծը հոս է, նման տողերու, հատուածներու մէջ, երբ իրական աշխարհի մը հաւաստի տուեալներէն կը մեկնի ու կը մտնէ խորհուրդներու աշխարհի մէջ ու խորհուրդի մը մշուշներուն կը նետէ մեր չարչարուած հոգին: Կը հասկցուի, որ հաղորդակցութեան պակասը, որ իրեն թեմա լայն տեղ կը գրաւէ այսօր գրականութեան մէջ ու մեծ յարգ կը վայելէ Վահէ Օշականի մօտ, բացարձակ ճշմարտութիւն մը չէ, ու մարդիկ, անոնց հետ նաեւ Վահէ Օշական միշտ խուլերու եւ համբերու պէս չեն խօսիր իրարու հետ ու մեզի հետ, ունին խուլերուն ու համբերուն հասանելի մտքեր, խորհուրդներ, բառեր, պատկերներ, հունչեր, ցոլքեր:

Կեանքին կառչելու եւ կեանքը անհեթեթ համարելու երկընտրանք մը կայ Վահէ Օշականի մէջ:

Տատանում մը բնազդականին եւ դիտակցականին միջեւ:

Իր մէջ վէճի մէջ են կարծես Արեւելքն ու Արեւմուտքը:

Հայը եւ մարդը՝ նորէն:

Ապրողը եւ մտածողը՝ դարձեալ:

Մեր տպաւորութեամբ սակայն, առաջինները աւելի զօրաւոր են իր մէջ, կենսախայտ, աւելի եռուն՝ իր էջերուն իսկ վկայութեամբ: Հոս բառերը կեանք ունին՝ ինչպէս «Անգամազ» բանաստեղծութեան օրագրային եւ խոստովանական բաժիններուն մէջ, «Աէր» բանաստեղծութեան հատուածներուն, չՄանիքսուն ու «Երեւել» ամբողջ երկայնքին: Ուսեղ է յատկապէս

այս վերջինին թրթռացումը: Ձեռք գիտեր ներքին թէ արտաքին, բայց անօրինակ անզգամիտ մը ազդեցութեան տակ յորդած կեանք մը կայ Հոս, առնչութենէ մը անխառնելու ապրումի մը եռուն զգացողութիւնը, շանջատու ելու բուն տենչ մը նաեւ, որոնք մարդկայնութեամբ մը կ'օծեն ամբողջ բանաստեղծութիւնը:

Վերջին կէտ դարուն յայտնուեցան դրական մեր երիտասարդութեան համարումին մէջ բացառիկ տեղ մը դրուած գէմքեր, որոնցմէ յիշենք երեքը, ֆրանսացի մը, Ալլպէն Քամիւ, եւ երկու հայեր, արեւելահայ Նոյնի Զարենց եւ սփիւռքահայ Նիկողոս Սարաֆեան, որոնք պատերազմներու եւ սպանդներու ընդարձակ քառսէ մը անցան, ունկնդրեցին բոլոր ճիշերը, ձայները, ապրեցան տակնուվրայութիւններու քառսէ մը մէջ եւ կասկածի տակ դնելով ժինչեւ իրենց օրը ստեղծուած արժէքները, կարգերը, կրօնները, փրկութեան պատրանքներ ընծայած բոլոր դրութիւնները, իրենց կարգին միւրհուսեցան մտքի եւ արտայայտչական քառսներու մէջ, հասան անհեթեթին ծայրարեւունքներ ժինչեւ, բայց երեքն ալ կրկին կառչեցան կեանքին, մարդկայնութեան, հակալ պատասխանատուութիւն մը զգալով իրենց նմաններուն հանդէպ, արուեստին ու անոր մէծ օրէնքներուն հանդէպ:

Ալլպէն Քամիւ իր «Ապստամբ մարդը» անուն հուշակաւոր դործին մէջ տեղ մը կ'ըսէ.

«Իր ծագումէն սկսեալ, գերիւրապաշտութիւնը, աւետարանիչը անկարգութեամբ, ինքզինքն զգաց կարգ մը ստեղծելու հարկադրամքին տակ»:

Նոյնի Զարենց, որ անկարգութիւնը դրօշակի վերածեց բաւական հրկար ատեն, ի վերջոյ յանգեցաւ նոյն իմաստութեան.

«Եւ...»

Բայց հասել է մա մի ջինջ պարզութեամբ,
Որ ձեռք է բերում «շուար վարժութեամբ»:

Տարբեր չեղաւ նաեւ Ն. Սարաֆեանի հասունութեան ու պարզութեան հոյսովայնը.

Ո՛ր, հատումութեամբ մեծ խորհուրդը մեր:

Կ'աղոյէր հոգիս բարութիւն մը մեծ:

Պարզութիւն մը սուրբ:

Եւ իմչպէ՛ս նկաւ, գիշեր մը մտաւ,

Եւ խոնարհ արտով՝ գրեցի այսպէս:

Վահէ Օշական նման խոստովանութիւններ չէ կատարած, բայց իր հատորին շնոր բաժինները այդ մասին կը վկայեն լուրեայն:

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Վ. Օ Շ Ա Կ Ա Ն

Լ Ճ Ա Կ

Պ. ԴՈՒՐԵԱՆԻՆ

Կա՞ր թէ չկար...

Լնակ մը կար —

Ամէն առտու՝ նմաթկուած ու աղօտա՝ կարսոնները գայն կը փռեն
սեղաններուն

ու կը սպասեն մինչեւ գիշեր որ ետ ծալեն ու պահեն

մթութեան մէջ մօլեֆիւլի գաղթականացի կ'երկարի

տանիքներուն ճուռն պառկեր է կոնակին կը հագայ

Մարայ Մելիք անմահութեան՝ Լիլիփութի սկառտներ ճեղ շալկեր
ենք ու կ'երթա՛նք

ճախ աջ ճախ աջ լուցկի՛ մը տուր ա՛ւր փախեր է ամէն մարդ,
համագգեստներ գետին թափեր կը վազենք

Ժամացոյցը ամէն օր քսանչորս ժամ ետ կը տանինք որ շուտ
հասնինք

ճամբան հիմա կը հատնի...

արեւ արդէն իր աւելցում պիտի աւել չորս կողմէն ու մայրիկն
վրայ երկնայ

ու կահագործի աշկերտներ առտու գիշեր խելայեղ

հին հազուագիւտ կարասիներ կը փայլեցնենք,

ծովուն տակը՝ շունչը բռնած՝ Թիթանիք կը ներկենք,

մեղրալուսնի պիտի երթանք:

Օգուտ չունի —

ուղեւորն է իր ուղին

բայց ախորի ճամբաները վերջ չունին

տիեզերքի պաս-սքոփներուն կոյր Կիլիսպներ կը մռնչեն կ'անիծեն

ժողովրդի փափուկ ցօղ՝ չդիմանար առաջին խսկ ճառագայթին

անջրպետի մէկ ծայրէն միւս՝ հրշէջ կառքեր ութսունի վրայ

կը սուրան

ահագանգի վայնասունէն կը խուլնանք՝ բայց հրդեհ չկայ մէջտեղը

ու կը մնանք ի վերջոյ Պիաֆրայի որքանոցին բակին մէջ...

գարնան քիւրեղ այգ կը ճաթի՛ս՝ սարդոստայնի պողպատ փայլէ՛ն

չճաղ շառայլ կը պոռթկա՛յ՝ կենանքի կտղուց՝ կը պայթի՛նք...

յետոյ՝ պատանքը արդուկել, ներդուքիւն խնդրել, կամաց մը

գոցել կափարիչը

իբրեւ թէ դուն չէիր, բան մը չես յիշեր աստուած վկայ

Քիւրիմացութիւն մըն էր եղածը, շատ կը ցաւիմք...

Այնպես որ
վիթխարի մեհենան կարելի չեղաւ աշխատցնել
ու չգիտցան ո՞վ էր սապոթած ընողը
ոչ ալ ինչպէ՞ս բռնապետը
պատանդները հաւաքելով, հե՛րաք-նէրու մէջ փաթ-թելով
չարչարելով

խենթեցնելով միակ համար վկաները աղէտին՝
կրնայ գիտնալ զազոսնիք:
Այ որո՞ւ պատմեմք գիրացածնս —
բոլոր անունք որ չմտան պատահողներու ցանկին մէջ
ու կ'առ կարասի բռնականութեամբ ու մէջ դիպած՝ սահմանէն ետ
փշուեցան,
անունք որ չկայնեցան, ձեռներն աչիքը կապում՝ փլած
կամուրջի նիւղ կէսին
այլ լիւեցան մոռացումի աշխարհամաս, գետէն անդին,
անմուրագ,

ինչ որ չեղաւ
ու ա'լ չըլլար յաւիտեան,
ինչ որ իր րացակայ լիութեամբ տիեզերքը կը հեղձէ՝
հոս է արդէն ու ամէն կողմ մեզմէ առաջ
խնուդիի ամբողջ լայնքին ու երկայնքին՝
արկածահար ու ազմկուտ անշարժացեք
աննախըմթաց թրափիք նէս ստեղծեր է,
հագիւ տեղ կայ ռուք դնելու՝
ու արդէն սփտացող սովալլուկ իւշ-ֆիարթնի կ'անապարհն քեզ
գտնել

հաշիշ-ծախող ու հիւանդկախ ինչ միմոս կայ կը վագե-
վրադ կը թափին՝ խմբանկար պիտի քաշուին:
Օգուտ չունի...

Կարելի Կիտի չլլա՞ց մարբայ ելլել
ոչ իսկ կայնի՛ն անմաւսաւ, շուրջը մայիլ,
սա ահաւոր ժխորին մէջ մտածեմ իսկ անհար է,
գտնէ արեան քանի մը քի, աղոսկելով սալարկներու ճեղքներն
իրար գուցէ մտեհնան պատահմամբ
նոյնիսկ դպնան մէկգմէկու, ով գիտէ
Քոյոսէտումի աւագին մէջ չծծուած,
գտնէ շոգեկառփի էին տոմսակ մը գտնէի, քարտէսի մը

գերեզման մը, խորովածի խարոյկի մը սեւ փայերը,
 երկու աքռո երեկոյեան պատշգամի յիշատակ, օրացոյցի
 ափէն գիծ մը ինձմէ դուրս ուրիշ տեղ մը շարունակուէր

ու թարգմանէր երդիկներու ու ծառերու գաղտնի լեզուն
երբ կը յուշէ վերելակի փառակոյտի արմատին մէջ
թրածի-ֆումիֆ սա տրամին մեծախօսին տարտամ անկապ
վանկերը:

Բայց ոչ —

կարսոնները պիտի շարուին, անանձնական յարգալի
վիշապներու նախանշէն պատանիի կմախֆ մը լուկ կը մնայ
տիդմին տակը՝ ոչ երգեհ կայ ոչ մատեան
այլ կարօտը մերկ բառերու լատերում
որ ակնթարթ մը ծփացի՞ն՝
թէ այդ իսկ չկար սկիզբէն
միայն ձեռք մը, հեռաւոր ու անտես
որ լնակի մակերեսին անթիւ խիներ կը սրսկէ
ջուրի օղակ կը բխին մէկիկ մէկիկ կը փակուին կը ծփան դէպի ասի
իրարու մէջ կը պլուրին կը հալին միմյեւ պատը ձայնին, պատը
լռյսին, մտածումի՞ն՝

ու դեռ անդին դեռ կը փախին այիֆները լեղապատառ աջէն ձախէն՝
բայց չեն հասնիր լնի սպին
որու եզրին ծունկի եկեր վար հակեր ջուրին ծոցը
յորձանուտի պորտին վրայ
ինձնութիւն մը կը փնտռէ...:
Գիտակցութեան լնակ իմ
դուռ դաւանան սիրունի
երբեք ինծի չմերկացար ու մատներս քեզ չդպան
մութին մէջէն քեզ սիրեցի, չեմ գիտեր թէ գեղանի՞ ես
երբ իմ դէմքովս գիս կը դիտես թափստեղ
այդպէս անհաս, սրսիացող կրկնապատկեր
ինչի՞ն ինչի՞ն
որու խորքին ողջ ողջ թաղուած՝ ես կը ծնինք
ծօռատ պագշոտ անիծապարտ մարդակերներ
իրար կառչած լակելով մակընթաց ու տեղատու,
ովասիսի աւագան՝ կեանքի քաղցով կը յորդինք
աշխարհ գրկեր խուփ աչքերով կը յօրանցենք կը պրկուինք
շուֆին ձեռքը կ'երկնայ մինչեւ արուարձանները սովի
ու դեռ անդին...
առանձնութեան լնակ իմ

ի՞նչ անձնութեամբ քեզ կը դիտեմ որ չըլլայ թէ գիս խեղդես
ու դառնութեան վայելքներու ամբողջութեան
լացի պատեր համբուրելու ու կարծելով արեւն աչքէս կը ծագի
ջուրը կեանքիս՝ կացինահար վայրկեաններէն կը ժայթփես
օրօրոցի ճօճանքով գիս առերես կը տանիս
առփերս գետին չեն դաւար, լողալ ալ չեմ գիտեր
ու ամէն ինչ օդէն կախուեր թելերով՝ ուրիշ տեղ մը կը մայի
հաստ թափանցիկ լուսութեան պատերուն մէջ մեծ ժխորը
կ'անշարժանայ կը սառի,

Հերովտէսի զինուորները գաւակներս հազիւ ծնած՝ կը սպաննենմ,
 մեր օրերուն մեքենայ կայ միսը ոսկորէն կը բաժնէ
 երէցկիւնը ծալապատիկ *Հիբիսթի* կարմիր միսը կը քակէ
 քիչ կը փնտռէ որ գատէ —
 Իմ լնակս նեղուց մըն է ինքզինքը կը փոխադրէ
 ձիգ ամառիկ ղղեակին ստորերկրեայ ջրամբար
 պիտի տոկանք ամապատի պաշարումին
 պատրանքներու դաւադրութեան
 պիտի հասնիմ քու եզերքս անցնիմ անդին
 Իմ լնակս ջրանցք մըն է ինքզինքը կ'ոռագէ
 կը պարպուի կը լեցուի մարդու կարօտ կեանք կը ստեղծէ
 եւ իմ անձիս կրկնապատկեր՝ պիտի դիտեմ դաժան դաժին
 խեղճ փարաւուն բառերու բուրգին տակը չեմ քաղուիր
 Դարաբալլայի քաղցիւններու վերակացու՝ պիտի չձգեմ որ
 քնանայ...

միայն քէ դո՛ւն
 պզտիկ լնակ
 մեր երկուքին զազունիքով մեզ չխեղդես
 անդորր, յիմար երջանկութեան մը ուրիշ-էնտին
 դես հեքիաթը չաւարտած:

Վ. ՕՇԱԿԱՆ



ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (ՅԱԿՈՐ ՕՇԱԿԱՆ)

Յ. Օշական՝ ողջութեանը, հակա-գրութեան իր անունին եւ գրականութեան հանդէպ ցուցաբերուած խաչակրութեանց, անհասկնալիութեան մեղքով իր վէպերը դասապարտողներուն եւ ուրացումներուն՝ կրկնած եղաւ, թէ յիսուն տարի պէտք էր, հասկնալու համար Օշականը:

Օշական եղած է իմ ուսուցիչս, Մել-գոնեան կրթական Հաստատութեան մէջ, Կիպրոս, ինչպէս ան եղած է ուսուցիչը Պօղոս Մնայեանին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վարժարանին մէջ: Քառորդ դարեան վարժապետական իր ասպարէզին բերումով, Միլի Արեւելքի մէջ հայկական Սփիւռքի նոր սերունդէն հաշուաւոր աշակերտներու առած է իր շունչէն կտակ մը, անոնց մէջ արժատաւորելով սէրը հանդէպ հայ գրականութեան, ինչպէս՝ զրեւու, դասելու, ընկալելու ինքնատիպ շնորհ մը: Յիշատակեցի տնունը Պ. Մնայեանին, որովհետեւ ան բանով մը կը յիշեցնէ Յ. Օշականի վերլուծական դատումներուն թողած բացին մխիթարական մէկ երեսին վերադարձը, յարատեւող անուամբ մը: Յիշեցի զրեւու գրական աշխատքի շնորհէն պակաս չեղաւ Օշականին անունը եւ անյայտութեան խորերէն, սարգոստայնային մըթին ցանցաթելերէն ազատագրուելով դժբախտ մտածողներ, երբեմն, լրիւ գրութիւններ ելան տարածուեցան ամսագիրի էջերուն վրայ, միշտ հետաքրքրութեան բեւեռումի մը մտահոգութեամբ: Այսօր, Օշականի մահունէ մօտաւորապէս երե-

սունըհինգ տարի ետք, կտրեւի է վստահօրէն նշել, թէ հատորէ զուրկ, կողքի տակ չմտած երկ Յ. Օշականէն հագեւ գտնուի, անյայտին մատնուած: Իր մէկ անտիպ վէպը լոյս պիտի տեսնէ, ընթացիկ տարուան «Բազին» ամսագիրի համարներուն մէջ եւ հաւանական է, որ հատորի վերածուի հրապարակման լրումին հետ:

Եթէ Յ. Օշականի ծանօթ երեք վէպերը՝ «Ծակ-Պտուկը», «Հանի Մուրաւս» եւ «Հանի Արախիլի» լայն տարածում գտնեն՝ շնորհիւ իրենց բարձրորակ տպագրութեան, բայց Յ. Օշականի երեք հատորեայ խոշոր վէպը՝ «Մնացորդացք եւ դաւ տպագրական կատարեալ ձախողման մը» «Յուսարեք» մաշած գիրքուն եւ վատորակ թուղթին զոյգ տկարութեամբը վերաւոր, որ իր անընթեռնելիութեան կնիքով պատրանքը ստեղծեց անհասկնալիութեան եւ մթութեան: Յ. Օշականի համար ողբալի էր խոշոր վէպին դամբանումը: Պօռելով միշտ ստուար ծաւալով գործերու անունէն, բախտաւոր եղան, տպագրական անփութութենէն փրկուելով եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տպարանին խնամուած դուրս ելած իր «Հայ գրականութիւն» դասագիրքը եւ «Համապատկեր»ներուն Ա. հատորը: Առաջինը 1942ին, եւ երկրորդը՝ 1945ին լոյս տեսած, պիտի տային Ալեքոյ գրագետին հոգեկան առաջին եւ վերջին մը խիթարութիւն մը, երբ ծնունդ առաւ իր դէմ ծրագրուած խաչակրութիւնը, 1946ին, բուրիւն ծանօթ, «Վկայութիւն

մը» գիրքին առիթով: Գրականության պատմության մէջ անանուն այդ խաչահրութեան հետեւեալը եղաւ, հաւանաբար, ամենածանր վիշտը Յ. Օշականին, որ դինք զամենց սեղանին ու լուսնուց ընդմիտ, 1948ին:

Յ. Օշականի մահուանէն ետք, 1952ին, Երուսաղէմի Հայոց վանքին տըպարանէն լոյս կը տեսնէ «Համապատկերներու եւ հատորը եւ յաջորդաբար նոյն տպարանը լոյսին կ'ընծայէ Բ. Գ. Դ. հատորները, 1953ին, 1954ին եւ 1956ին: Երուսաղէմի վանքին շրջափակէն կը հեռանան Օշականի ժառանգորդները եւ իրենց հետ կը գաղթէ «Համապատկերներու մնացորդացը, որոնք ձեռագիր վիճակի մէջ՝ քուն պիտի մտնէին ծրարներու մէջ, դարաններու անկիւնները: Սակայն, «Համապատկերներու շուրջ հետաքրքրութիւնը շուրջդարձի մէջ առնուած ուրուականի պէս, հոս-հոն կը փոթորկէր միտքերու վրայ: Հաստատուն հրատարակչականի մը պակասը, գրական ֆոնտերու չգոյութիւնը կը զգացւէին դառնութեամբ: Եւ ահա, տասներկու տարի ետք Դ. հատորի լոյս տեսնելէն, Պէյրութի Համազգայինը հրատարակութեան կու տայ Զ. հատորը, 1968ին: Մինչ այդ, Յ. Օշականի «Խամարներ»ը շարքին պատմութեանը կը մտնեն միեւնոյն շապկիկին տակ, կազմելով կոկիկ հատոր մը, 1958ին, Օշականի աշակերտներուն նախաձեռնութեամբ եւ ծախքով: 1973ին, Անթիլիասի Հայոց Կաթողիկոսարանի տպարանէն եւ Գէորգ Մէլիտինեցի Գրական Մրցանակի թիւ 9 համարով, լոյս կը տեսնեն, Յ. Օշականի երեք վէպերը, «Հայրենիք» ամսագրի էջերէն արտատպուելով՝ «Մակ-Պրտուկը», «Համի Մուրատ» եւ «Համի Ապտիլլան», կողք կողքի, մէկ հատորի մէջ:

Եւ սակայն, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» ողբականը կը շարունակուի: Վերջին երեք կարեւորագոյն եւ հետաքրքրական հատորներուն բացակայութիւնը անվաւեր կը դարձնէր նախորդներուն հմայքն ու արժանիքը,

իրրեւ շարքային ամբողջութիւն... Իսկ մեծարեցեան արտայայտութեամբ, «գիրքիչ կը մաշէր» հոգին ձեռագիրներուն: Գուցէ կէսդարեան ժամանակաշրջան մը սրբեր-տարեր էր անոնց գիրքին մեղանը, որ միշտ տագոյն եղած էր գրիչին ծալքէն իջած պահուն թուղթին, որ ժամանակէն գունաթափուած պիտի ըլլար: Ու շատ հաւանական էր, որ Օշականի մանուշաքանդ տողերը, պոչատուելով ու գըլխատուելով՝ գիրքի ըլլային տողագիրծերու ստուերին, դառնալու համար անվերձանելիութեան զաղտնիքին: Ոչ ոք պիտի ուզէր մտնել այդ ձեռագիրներու լարերին թուղթին ներս: Ահաւոր ճիւղի կը կարօտէին անոնք: Ժամանակի եղեռնէն փրկելու համար «Համապատկերներու վերջին երեք հատորներուն ձեռագիրները եւ զանոնք լոյսին ընծայելու հոգով էր կյանուած ահա, գրականութեան եւ մըշակութիւնի սիրահար, անկուր կամբով մը գիտնած Գարեգին Բ. կաթողիկոսը, Անթիլիասի մէջ հաստատուելէ ետք:

«Համապատկերներու ողբականին լրիւ պատկերը տրուած է արդէն 1979ին լոյս տեսած է. հատորին սկիզբը, Յաւաքաքանի մէջ՝ Գարեգին Բ. վեհափառին ստորագրութեամբ: Վերջին երեք հատորները (Է. Ը. Թ.) «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան», իրրեւ թուղթով, կը կրեն իրենց շապկաթերթին ստորեւը, որպէս տպարանային պիտակ, հեռեւեալ տիտղոսը, ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵՄԻ ՏԱՆՆԻ ԿԻՒԼԻԿԻՈՑ, Անթիլիաս — Լիբանան, 1979 — է. հատոր, 1980 — Ը. Ե. Թ. հատորները: Ինչ որ կը նշանակէ, թէ Կաթողիկոսարանի անմիջական հսկողութեան եւ շնորհիւ լոյս են տեսած եռակ հատորները, բարեբաւութեամբ... բայց կարգանք Յաւաքաքանի մէկ էջին վրայ, վեհափառ Գարեգին Բ. ին նշումը.

— Պատասխանեցիմ մեր խնդրանքին Ազգային քարերար Պր. Աւետիս Ն. Զաքարեան (Եգիպտոսէն), որ յաճախ առաւ հոգալ ծախսերը է. եւ Ը. հատորներուն... յաւերժացնելու յիշատակը տիկնոջ՝ Վերմիմ Զաքարեանի, մէկը Ե. Օշականի աշակերտուելներէն... Եւ Պր.

Եղաարդ Մահակեան (Նիւ Եորքէն) խըմ-
քագիր «Հայրենիք»ի, սիրահար գրական-
նութեան եւ համակիր մտաւարականի,
մեկեմասի պատմութեան կը վերցնէ Թ-
հատրի ծախքերը հազարով:

Նիւթական նպատին զուգահեռ, ձե-
ռագիրներու մէկտեղման, ոմանց մեքե-
նագրումին, յստակացման, արտագրու-
թեան աշխատանքին պիտի յծուէին հե-
ղինակին հարազատները եւ Դպրեմանքի
սաներէն Եղիշէ Վարդերեսեան, տպա-
գրական զործը իր լրումին հասցնելու
համար: Եւ սակայն, այս բոլոր աշխա-
տանքները կը մնային անաւարտ, եթէ
չլրար հովանաւորող, գրական մտահո-
ղութիւնը միս ու ոսկորով շնչաւորող
խանդավառ ոգին, որ եղած է ու կը մը-
նայ՝ Դարեգին Բ. վեհափառը: Վերջին
երեք հատորները լոյս տեսած են զեղա-
տիպ, լաւորակ թուղթի նպաստով, գի-
րի ու մելանի պայծառութեամբ, այն-
քան խնամքով ոգեղինացած, որ պատիւ
սփռի բերէր Անթիլիասի Հայոց Կաթո-
ղիկոսարանին եւ տպագրական գործին:
Եթէ չլրար Դարեգին Բ. վեհափառին
գրականութեան եւ մշակոյթի հանգչւ
ունեցած բուն սէրը, Յ. Օշականի «Հա-
մապատկեր Արեւմտահայ գրականու-
թեան» համագրական հսկայ գործը կը
մնար կաղնիկազ, թերի, անաւարտ: Հե-
տեւարար՝ ափսոսայի անկարելիութիւն
մը զեռ երկար ժամանակով: Յ. Օշական,
Հալէպի իր շիրիմին մէջ այլեւս հան-
գիստ կրնայ քնանալ յաւիտենական քու-
նը, մասնով դառնեցան մարգիկ, որ
կրցան կանխել իր գուշակութեան ժա-
մանակը տասնըհինգ տարիով: «Համա-
պատկերներու ամբողջացումով, մատե-
նագրական իր արխիւը կ'ունենայ լրիւ
ցանկը օշականեան ստեղծագործութիւն-
ներուն:

Ու փակելէ առաջ հակիրճ այս գրա-

խօսականը, «Համապատկերներու վեր-
ջին երեք հատորներու տպագրութեան ա-
ռիթով, կրկնեմք, որ Յ. Օշական գրա-
կան բացառիկ երեւոյթներէն մէկն է մեր
գրականութեան վերջին հարիւր տար-
ւան պատմութեան մէջ: Մասնագիտա-
ցած ինքնուրույն քննադատ, համադրող,
վերլուծական բացառիկ բնկալով շեշ-
տաւորութեամբ, գրագէտ, բանաստեղ-
ծական ոգի, քնարական շունչ, ուսուցիչ
եւ այս ամէնուն վերեւ սաւառնող հա-
րուստ յիշողութիւն՝ մարդու մը, որ չէ
կոխած ոչ մէկ ուսման բարձրագոյն կա-
ճառ եւ չէ բախած դուռը ոչ մէկ համա-
լսարանի: Եղած ինքնուր, բայց բարձ-
րացած է անքան, որ կարենար նա-
ւածքին տակ առնել բոլոր գագաթները
հայ գրականութեան լեռնաշղթային...»

Բնատուր ձեւերով օժտուած, հե-
ղեղային միտք մը, որ վերաբաղ չըրաւ
անձին՝ ինչ որ գրեց մանրատառ իր գիրե-
րովը: Ինչպէս սովոր ենք ըսել, Օշական
գրեց մէկ շունչով, իր յիշողութեան երե-
վարին նստած, իր վէպերը, վերլուծա-
կան տեսութիւններն ու «Համապատ-
կերներու հատորները, ուր յիստն երեք
արեւմտահայ գրողներ՝ տրեխով կամ
թագաւորական կարմիր մուճակով գրա-
կանութեան պատմութեան անցան: Սա-
կայն, կարելի չէ շտապով անել, թէ վը-
րիպումներէ զերծ մնաց իր գործը: Նը-
ման վերկանքներ եւ շեղումներ, հետե-
ւանք՝ առաջին տպագրութեան եւ մէկ
շունչով գրելուն՝ անտեսուած են տկա-
մայ, որովհետեւ Օշական չէ փորձած
զրածը վերամշակել, վախճանով ժամա-
նակէն, կորուստէն չմշակուած ատաղ-
ձին, զոր ամբարած էր միտքին մէջ. հե-
տեւարար մանրուքները զինք չէին հե-
տաքըքեր...: Ըսի արդէն, թէ իր աշա-
կերտներէն մէկը եղած եմ ու տեսած իր
ձեռագիրը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ 19ԲԴ ԴԱՐՈՒՆ (ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ)

Ընդամենը դասախոսութիւն մըն է Վահէ Օշակեանի զննարկական ազդեցութիւնը Արեւմտահայ գրականութեան վրայ 19րդ դարուն 50-էն սկսած անգլիական հատորը, որ հրատարակուած է Գլեն-լանտ համալսարանի մէջ, Ալեք Մանուկեան մշակութային հիմնադրամի օժանդակութեամբ, ըսյց եւ այնպէս անկա կը մնայ շահեկան:

Գրքոյից, որ կը բաղկանայ հինգ գլուխներէ, շատ կարճ ներածականէ մը, վերջաբանէ մը եւ երեք յանձնարարներէ՝ կրնայ տեղեկութիւններով խեղդուած թուիլ նիւթին եւ ժամանակաշրջանին անձանց շնորհակցելի համար, սակայն խորքին մէջ գիտական լայն աշխատանքի մը ամփոփումը կը թուի, նիւթի մը շուրջ, որուն մասին դժբախտաբար զիջ հետազոտութիւն կամ ստեղծագործութիւն կատարուած է:

Առաջին գլուխը, որ կը խօսի անգլիական եւ հայկական առեւտրական ու քաղաքական յարաբերութիւններուն ու մշակութային ազդեցութիւններուն մասին՝ հետաքրքրական փաստեր կը բերէ: Օրինակ, շահեկան է այն պարագան, որ Ռեւոլյուցիոն հղալիս, 1736ին, հայերէն բնագրին լատիներէնի կը թարգմանեն Մովսէս Խորենացիի պատմագրէն ու Անանիոս Շիրակացիին: Կ'արժէ յիշատակել նաեւ Մանչեսթըրի հայ դպրոցին հրատարակած «Երկրագունաց թերթը» 1863ին: Սակայն անգլիական մշակոյթի հիմնական ազդեցութիւնը կը սկսի Հնդկաստանի դպրոցներէն՝ Մատրանէ եւ Կալկաթայէն, ուր հաստատուած առեւտրական հասարակականութիւնը հետզհետէ հարստանալով՝ կը սկսի քաջալերել գիրն ու արուեստները, իրեն անմեղական արդիւնք, 1790ին կը թարգմանուի Հինուէյի «Նամսիդ» շանի պատմութիւնը, Պոլսո Միդաթեանի կողմէ, Մատրանէ:

Շահեկան է նաեւ այն յիշատակումը, որ 1812ին կը թարգմանուի Շէյքսպիրի մէկ թատերախաղը (կամ թարգմանութիւններ Շէյքսպիրի դրոբերէն): Դժբախտաբար, Վ. Օշակեան ո'չ դասախոսութեան ընթացքին եւ ո'չ ալ յանձնարարին մէջ կը յիշէ, թէ մեծածախ թատերադերձի ո'ր դրոբէն կատարուած է թարգմանութիւնը:

Սակայն այս իրադրութիւնը արդէն դրժուկին երկրորդ բաժնին մէջ կ'իյնայ, ուր դասախոս-հեղինակը կը խօսի հայ դրականութեան զարթոնքին, իզմիրի եւ Վենետիկի կեդրոններուն մասին: 1817ին՝ Միթթարիան միաբան մը կը թարգմանէ Տանիէլ Տեֆոյի «Բողոքներ» Գրողոցն, իսկ 1821ին եւ 1825ին, յաջորդաբար, հայր Աւսրեան կը պատրաստէ եւ երկու հատորով լայն կ'ընծայէ առաջին հայերէն-անգլիական բառարանը, Սամուէլ Ժոնսոնի «Անգլիքան» լեզուի քառաբանքին օրինակով:

Վ. Օշակեան կանգ կ'առնէ այս ժամանակաշրջանի դէմքերէն Թադէոս Աւետուհեանցի, Յովհաննէս Աւետիսեանցի եւ, մասնաւորաբար՝ Մեարոյ Թադեոսեանցի այնպիսիներէն վրայ, այս վերջինը, 1840ին, «Ազգասէր» մէջ Պայրենէն շուրջ մը բանաստեղծութիւններ թարգմանելէ եւ հրատարակելէ ետք, յաջորդաբար կը թարգմանէ նաեւ Միթթարի, Շէյքսպիրի, Ժոն Լոքի, Ալեքսանտր Փոփի, Բոյլըրի Պլեյզի, եւ ուրիշներու դրոբերէն:

Պէտք է ընդունիլ, որ այս ու յաջորդական հատուածներուն մէջ բառական յոտակ կերպով պատկերացուած են անգլիական ազդեցութեան կապուած հարցերը, միջ-համայնային տարակարծութիւնները, հնդկական դպրոցներուն, իզմիրի, Կ. Պոլսո եւ Վենետիկի դերը, դպրոցներու դերը, եւայլն:

Դասախոս-հեղինակը քառական երկար կը ծանրանայ Խախտ-Վիպադալտներու ձգած ազդեցութեան, մասնաւորաբար Հայկունիի, Մամուրեանի եւ Մերենցի դրոբերուն վրայ: Անգլիական մշակոյթի ազդեցութեան կամ զոյգ մշակոյթներու յարաբերութիւններուն լուսաւոյն դրսեւորումներէն մէկը կը հանդիսանայ Մատթէոս Մամուրեանի «Անգլիական ցամաքային» Վ. Օշակեան ցոյց կու տայ նաեւ Սըր Ուոլթըր Սքոթի վէպերուն ազդեցութիւնը Մամուրեանի եւ Մերենցի վէպերուն վրայ...

Այս ազդեցութիւնը, ընկալանաբար, Ժառանգ է 20րդ դարու սկզբնաւորութեան եւ, ֆրանսական դրականութեան ու մշակոյթին հետ՝ ա-

նիկա եւս կարենոր ազգեցութիւն ունեցած է Սրբուհի Տիւսարի, Մ. Մենարենցի եւ, մա'նաւանդ՝ Ռուբէն Որբերեանի կազմաւորման վրայ:

Պէտք է ըսել, որ Վ. Օշական ոչ մէկ ասան կ'անտեսէ ֆրանսական դրականութեան ու մշակութիւն ազգեցութենը արեւմտահայ գիրին ու դրականութեան վրայ, որ, խորքին մէջ, կը մընայ ազգեցութեան գլխաւոր գործուն:

Բնականուր քննարկումի ֆիրին մէջ շահական է նաեւ Լորտ Պայրընին եւ Միքիթարեաններուն յատկացուած քաժինը եւ, յա'տկապէս Շէյք-զըսփիրի արծարծած հետաքրքրութիւնը արեւմտահայ թատրոնին վրայ, որ իսկապէս ուշադրաւ եւ նոյնիսկ աննախընթաց երեւոյթ է հայ մշակոյթին մէջ:

Անդրական ազգեցութեան գծով եւ, ընդհանրապէս, Վ. Օշական շատ յաճախ բազմաթիւութիւններ կը Պատարէ Թրքական եւ արաբական դրականութիւններուն հետ. եւ զարմանալի չէ այն պարագան, որ հայ գիրը միշտ ալ քանի մը ասանակ տարիներով աւելի կանուխ կը բացուի Շէյքզփիրին եւ միւս մեծերուն:

Ասկայն այս ազգեցութեան գծով կ'արժէ կանգ առնել քանի մը ժանրամասնութիւններու վրայ:

Առաջին՝ աեղ մը Վ. Օշական կը զարմանայ, որ անգլիերէն գաղափարաւոր բազմաթիւ գրչնեմբէն շատ քիչեր կարենոր ազգեցութիւն կ'ունենան հայ գիրին վրայ (էջ 12), իսկ այլուր կը կոտարէ այն հաստատումը, որ հայ բողոքական հաւատաւանութիւնը, զարմանալի երեւոյթ մը


պարզելով, օտեղնագործական լատ քիչ ներդրում կը բերէ եւ գրեթէ ոչ մէկ առանձնացող գէժը կու տայ (էջ 33), ինչ որ բաւական պերճախօս է միոննարներու կողմէ հկած անդլիական ազգեցութեան գծով:

Երկրորդ՝ վստահ ենք, որ եթէ հեղինակը ընդլայնումի եւ խորացումի աւելի լայն միջոց ունենար (վերջ ի վերջոյ՝ դասախօսութիւն մըն է ապրտանը), նախաւիդապաշտներու դրական եւ ժխտական ազգեցութիւններուն զնահատումը պիտի կատարէր աւելի մանրամասնորէն, արովհեմեւ նախաւիդապաշտ եւ վիպապաշտ շարժումը իր հետ առանձին հոգեբանութիւն մը եւս բերաւ նաեւ:

Եւ երրորդ՝ քնականացոր աւելի քան վերապահ ենք հեղինակի վերջաբանին մէջ արտայայտած եզրակացութեան՝ արեւմտահայ-սփիւսգահայ դրականութեան ներկային աղբիւրութեամբ, այսինքն՝ հայերէնով եւ անգլիերէն լեզուով մշակուած դրականութեան (կամ այս իմաստով արեւմտահայ դրականութեան երկնիւղումին), սակայն այս հարցին քննարկումը կը կատարուի այլուր:

Այս բոլորով հանգերմ, պէտք է արձանագրել, որ առեւալ աշխատանքը կը յաջի հաժապուելեր ակնարկ մը ըլլալ հայ գիրին վրայ ունեցած անդլիական ազգեցութեան, նոյնիսկ գաղափարութեան մը սահմաններուն մէջ եւ օգտակար պիտի ըլլար այս քիչ հետազոտուած թեման ու ժամանակաշրջանը աւելի լայն ուսումնասիրութեան մը սահմաններուն մէջ տեսնել նաեւ:

Թ. Գ.



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄՈՅ

Վաղի պղտիկ ելմամբ արտադրելիք հայրենի մասունքն պարզապես անոր համար, որ գրաբարին արժեք տալու հարցը մաս կը կազմէ նաեւ օփիւոքահայութեան մտահոգութեան: Ծիւղ է, որ մեր մանուկներուն ու պատանիներուն արուած դասացուցակը հասկնալի պատճառներով խճողուած է յատ, ու մայրենի լեզուն ու գրականութեան սահմաններու պահպանումը մեր ուժերը հազիւ կրնան հարեւանցի համեր ու գիտութիւն փոխանցել մատաղ հոգիներուն, բայց որքան ալ դժուար ըլլան պայմանները, այդպէս չէ, որ հազար հինգ հարիւր տարիներու վրայ գրական հսկայ ժառանգութեան մը գործիք զարժան լեզուն թուրքովին ընթերցի մեր յայտագիրներէն... Պէտք է հաշուի առնենք այս հանգամանքը: Ծիւղ կ'ըսէ հայրենի մտաւորականը:

Յայտնի է, թէ հայ մտաւորականութիւնը, առանձնապէս հայ մանկավարժները ինչպիսի երկար ու հետեւողական պայքար են մղել իրթին գրաբարից հրամարտելու եւ ուսուցումը աշխարհաբար լեզուով վարելու համար: Ահա արդէն մէկ հարիւրամեակից աւելի է, ինչ հակակամ զարդոցներու աշխարհաբար գրական լեզուն դասաւանդուած է որպէս պաշտօնական լեզու: Իսկ սովետական կարգերի հաստատումից յետոյ Հայաստանում այն մեր պետական լեզուն է: Ձեռքս եկով դրա համադրային մեծ նշանակութեան մասին, եւեթ, սակայն, որ մեր նախնիներ գրական լեզուն՝ գրաբարն, այժմ համարեալ մոռացութեան է արուել: Նրանից առաւել եւս միայն մասնագէտները: Արդեօք չի՞ դաջ մի ժամանակ, երբ գրաբարը հայ աշակերտի վրայ չի նարէնի տպաւորութիւն կը թողնի... Մինչդեռ ինչքան քանակաւ է, որ այսօր հայ ընթերցողը կարողանայ ընդգրկել կարգաւ եւ հասկնալ Ռորենացուն, Բուսկուգին, Նարեկացուն: Մենք սովորում ենք (եւ ճիշդ ենք անում) օտար լեզուներ, սակայն գրաւորներն անմայ մոռացութեան ենք տալիս մեր գրաբարը, որով ստեղծուել են գրականութեան ու արուեստի քաղմաթիւ դանդեր...

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ. Արեւիկան անուան գրականութեան ինստիտուտի հին եւ միջնադարեան հայ գրականութեան սեկտորում հետեւողականորէն ուսումնասիրուած են գրաբարով ու միջին հասկերէնով գրուած ստեղծագործութիւնները եւ ամէն տարի դիսերտացիաներ են պաշտպանուած դրանց վերաբերեալ: Եթէ գրաբարն ու գրաբարով գրուած երկերն արժեքաւոր են այդ մակարդակով, ապա, սուրեմն, ինչու՞ այդ լեզուն մատուցել մնայ միայն սահմանափակ մասնագէտներին:

Այժմ, երբ աշխարհաբար անհրկրայէութիւն տիրապետող է, երբ ոչ մի կտակած չկայ այն գրաբարով փոխարինելու վտանգով, հարկ է մըտածել մեր ժամանակների հայ մարդուն գրաբարը հետեւեալի գարմնելու մասին: Դրա համար, ընկանաբար, հարկ կը լինի որպէսզի ըրաւցումներ անել ուսումնական ծրագրերում, քրեստոմատներում գետնից համեմատաբար զիւրի գրաբար տեքստեր: Բացառական, ուսուցչական ընթերցանութիւններից յետոյ (թէկուզ դա լինի արտամեայ) լաւ կը լինի յանձնարարել աշակերտներին այդ երկերի ու տեքստերի վերաբերեալ գրել լուրագրութիւններ գրաբարով: Ընթերցանութիւնների միջոցով տեքստերն ըմբռնելուց բացի աշակերտները կը ծանոթանան գրաբարի ընդհանուր առանձնատեսութիւններին: Իսկ դա կը նպաստի հետազայում (յատկապէս ԲՈՒՀերում) ներքին տիրապետելուն, մեր միջնադարեան գրական յուսարձաններին քաղաքական դասնալուն: Դրան կարող ենք հասնել, եթէ ԲՈՒՀերում հոյնդէս աւելացնեն դասագրքերը կամ եղան ժամերի ընթացակուսողալի տեղ արուի գրաբարին:

Գրաբար ուսուցումը հետագայ սերունդների ընդհանուր դիտելիքները հարստացնելուց բացի կը հարստացնի նաեւ նրանց քաղաքաւարը, եւ մենք կ'ուենենք մի կուտ, է՛լ տեւիլի հարուստ ու ամբողջական լեզու: Մի՞թէ նոյնը լին անում այսօր մեր աւագ եղբայրները՝ ուսուները, հին սյուսներէն, Եւրոպայի քաղմաթիւ ազգեր՝ Բուսկուգին, Նարեկացի, յանալ լատիներէն եւ օտար փողովութիւնների հին լեզուների քարմը մակարդակի ուսուցմամբ:

ՏԻԳՐԱՆ ԳԱՄԱՂԵԼԵԱՆ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՏԱՄՆԵՐՈՐԻ ՀԱՏՈՐ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՍԵՐՈՒՆԴ



Յ. ՕԾԱԿԱՆ՝ Յ. ՕԾԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

Աթոռակից Կաթողիկոս

646 էջ, գիմ՝ 60 լ. ոսկի՝ Բղթակազմ, 20 տոլար

Ստամբուլու համար դիմել

Librairie
Du Catholicoat Arménien
Antilias - Liban

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارين كارنيك قزانيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕԳՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՍՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՀԷ ԲԲՈՒՏԵԱՆ
S. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
Tél. 296898

digitised by A.R.A.R.®